

Հ. Ս. ԱՆՈՍՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՏԵԼԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ

Ա



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

А. С. Анасян

АРМЯНСКАЯ
БИБЛИОЛОГИЯ
V-XVIII вв

ТОМ
I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
Ереван 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Պ Ա Տ Մ ՈՒ Թ Յ Ա Ն Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ

Հ. Ս. Ահարյան

ՀԱՅԿԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
Ե-ԺԸ ԴԴ

Հասոր Ա

Ա-ԱՌԱՔԵԼ ՍԱԼԱԶՈՐԵՅԻ



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ Գ.Ա. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

III
111
A

Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտություն»-ն իր մերկա և հաշորգ նատորներով ընդգրկում է V—XVIII դարերի հայ ինքնուրույն ու քարզմանական գրականությունը և նվիրված է ընդգրկված տպագիր ու անտպ գրությունների մատենագիտական մշակմանը:

Հետազոտելով նայ ժողովրդի անցյալից եկած գրական հարուստ ժառանգությունը՝ պատմական Հայաստանի նյութական ու հոգևոր մշակույթի հետ կապված գրավոր աղբյուրները, հեղինակը գրանք գիտականորեն բնութագրում ու արժեքավորում է, տալիս է դրանց բանասիրական ամփոփ վերլուծությունները՝ աղբյուրագիտական ու բնագրագիտական տեսանկյունից, ճշում նրանց վերաբերող ինչպես առանձին գրքերով, այնպես և պարբերական մամուլում եղած գիտական գրականությունը՝ տարբեր լեզուներով, բանասերներին քննադատ գիրքերում է հայագիտության կարևոր հարցերի նկատմամբ և, որ գլխավորն է, գյուրթացում է ապագա հետազոտություններն ու լուսարանությունները:

Հ. Ս. Անասյանի «Հայկական մատենագիտություն»-ը կարելի է բնորոշել որպես աղբյուրագիտական և բնագրագիտական մատենագիտություն:

Սույն աշխատությունը, որ իր բնույթով շունչի նախորդը, հանգիստանում է նշանակալից երևույթ և լուրջ մերգրում սովետական հայագիտության մեջ:

Աշխատությունը նախատեսված է հայագիտության, կովկասագիտության, արևելագիտության և ընդհանուր պատմա-բանասիրության հարցերով զբաղվողների համար:

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գիտությունը զրոյ ծով է անկար և աննաս, և չի՞ր զրաւանդակն իմանալ ումեց բոտ արմանայն. այլ զսակուս ի բազմացն:

ԳՐԻԳՈՐ ԱՄԱՍՅԱՆ (ԺԳ Գ.)

Մտանագիտութիւնը բառը նշանակում է սմառայանների գիտութիւնն և կազմված է ստանագիտ բառից, որը ը դարից է գալիս: Հայկազյան բառարանների բացատրութիւնը՝ ստանագիտ նշանակում է «գիտակ և հմուտ մատենից», կամ՝ «գիտակ մատենից և դպրութեանց»¹. և իրոք այդ նշանակութիւնը էլ դործածված է Աստվածաշնչի հայերեն թարգմանութիւն մեջ (Ծղևկ. Իէ. 9):

Մտանագիտութիւնը բառը, որ գիտական տերմին է, կլանքի է կոչվել ժԹ դարի առաջին կեսին², երբ մեզ մոտ բանասիրական և գիտա-ճննադատական գրականութիւնը արդեն որոշ նվաճումներ էր կատարել և հնարավորութիւններ էր որոնում հետագա զարգացման համար: Մտանագիտութիւնը պետք է լինէր այդ հնարավորութիւնների ուղեցույցը:

Մեր բառարաններում Մտանագիտութիւնը բառը դրվում է որպէս համարժեք հունական ծագում ունեցող Բիբլիոգրաֆիա (Βιβλιογραφία) բառի, սակայն դա ճիշտ է միայն ընդհանուր կամ լայն առումով, իսկ մասնավոր կամ նեղ առումով կարող է ճշտման:

Ինչպէս հայտնի է՝ գրադարանագիտութիւնը տարբերում է այսպէս կոչված գիտակցան բիբլիոգրաֆիան՝ սովորական բիբլիոգրաֆիայից: Մտանագիտութիւնը բառը, իր նեղ առումով, գիտական բիբլիոգրաֆիան է, որը նմանապէս հունական առանձին տերմինով կոչվում է Բիբլիոլոգիա (Βιβλιολογία): Բիբլիոլոգիայի և սովորական Բիբլիոգրաֆիայի միջև նկատվող տարբերութիւնը վաղուց են ուշուզութիւն դարձրել գիտութիւն այս բնագավառի մասնագետները՝ մտանագիտութիւն տեսարանները:

¹ «Բառգիրք հայկական լեզուի... արաբերէլ ի Միթարայ վարդապետէ Սերաստացոյ՝ արբայ՝ այլ կոչեցելոյ՝ աշխատակցութեամբ աշակերտաց իւրոց», հա. Ա, Վենետիկ, 1740, էջ 610:

² «Նոր բառգիրք հայկական լեզուի, երկսիրութիւն երկց վարդապետաց յաշակերտութենէ մեծին Միթարայ արբաւոր՝ Ն. Գարրիէլի Աւետիքեան, Ն. Պաշարայ Միւրմէլեան, Ն Մկրտի Աւգերեան», հա. Բ, Վենետիկ, 1837, էջ 213:

³ Մտանագիտութիւնը բառն առաջին անգամ վենետիկյան միթարայ Մ. Զախարյանն է հրատարակ անում, տե՛ս «Բառգիրք ի բարբառ հայ և իտալական, յօրինելոյ ի Ն. Մանուէլ վարդապետէ Զախարեան, ի Միթարեան միտարանութենէ», Վենետիկ, 1837, էջ 9611:

Մինչև այդ, բառագիտական օրոշումներէ շրջանում, բառարաններում, որպէս Բիբլիոգրաֆիա բառին ամբողջ, առաջարկվել են Մտանագրութիւն. Սոփիսագրութիւն: Այս վերջիններս Զախարյանից հետո էլ են մի առումով շարունակել անց գրավել որոշ բառարաններում, ինչպէս և Մտանագիտութիւնը բառը, բայց ի վերջո սուղաբեզում ձայն միայն Մտանագիտութիւնը:

Ֆրանսիացի հայտնի մատենագետ Գ. Պեյնոն 1802 թվականին լույս բնծայած իր «Dictionnaire raisonné de bibliologie» աշխատության առաջին հատորի նախաբանում, կանոց առնելով Բիբլիոլոգիայի և Բիբլիոգրաֆիայի տարբերության հարցի վրա, ասում էր, որ վերջինս ընդգրկում է միայն գրքերի տեխնիկական նկարագրությունն ու դասակարգումը, այնինչ Բիբլիոլոգիան շնչալից է մարդկային հիմնավորված գիտելիքների վերլուծումը, նրանց հարաբերումը, դասավորումն ու բաժանումը, խորանում է խոսքի, գրության ու սպագրության արվեստի մանրամասնությունների մեջ՝ և այլն¹։ Ըստ Պեյնոյի՝ Բիբլիոլոգիան կարող էր համարվել որպես «մատենագրական մի տեսակ մեթոդիկ հանրագիտարան», որը պետք է ընդգրկեր ոչ միայն տպագիր ու ձևագիր, այլև մինչև անդամ մեկնագիր (hiéroglyphique) նյութերը, այսինքն այն ամենը, որ պահպանված է «նշանների միջոցով»²։

Այլիի քան կես դար հետո Գ. Բրյունեն իր «Dictionnaire de bibliologie cath.» աշխատության առաջաբանում նույն հարցի մասին խոսելիս, կամենալով ճշտում մտցնել խնդրոստարկա բառի բովանդակության մեջ, ասում էր, որ Բիբլիոլոգիայի սահմանները չպետք է սահմանվեն գրամագրիտության և հնագիտության վրա, որոնք գրավոր աղբյուրների հետ կապված գիտություններ չեն³։

1899 թվականին Պետերբուրգում Ա. Մ. Լոպյագինի նախաձեռնությամբ կազմակերպվում է Ռուսական բիբլիոլոգիական (մատենագիտական) ընկերությունը (Русское библиологическое общество), որն իր գոյությունը պահում էր դեռ մինչև 1930 թվականը։ Ընկերության հիմնադրման առիթով Ա. Մ. Լոպյագինի կազմած զեկուցադրում նույնպես ընդգծվում էր այն տարբերությունը, որ գոյություն ունի Բիբլիոլոգիայի և Բիբլիոգրաֆիայի միջև։ Այստեղ ասվում էր. «Ընկերությունն իրեն բիբլիոլոգիական է տեսնում նրա համար, որ բիբլիոլոգիա բառը բովանդակում է գիտական բիբլիոգրաֆիա իմաստը, ի տարբերություն բուն բիբլիոգրաֆիայի (այս բառի նեղ իմաստով), որի համար ընդհանրապես օտար է գիտական բովանդակությունը և որը ներկայացնում է գրքերի կամ հոգվածների համակարգումն ըստ սովորական կադաստրի Բիբլիոլոգիայի նպատակն է՝ մատենագրության և մամուլի ամբողջ արտադրության դասակարգումն այն ուղղությամբ, որ մասնագետների համար նրանց ուսումնասիրության հնարավորությունը ղյուրանա այնքան, որքան այդ կարելի է արդի գիտության միջոցներով»⁴։

Հաջվի առնելով այս հանգամանքները՝ մենք Բիբլիոլոգիան (գիտական բիբլիոգրաֆիան) որոշակիորեն տարբերում ենք սովորական Բիբլիոգրաֆիայից, ընդունելով, որ Բիբլիոլոգիան իրոք իր բնույթով, մատենական գործին իր քննական մոտեցմամբ և աշխատանքի գիտահետազոտական մեթոդով ժամանակակից մտկարգակի վրա դանդաղ գիտություն է, որը մեր լեզվի մեջ արտահայտվում է Մատենագիտություն տերմինով, վերջինիս նեղ՝ իսկական առումով, ինչպես նշեցինք վերևում։

Մատենագիտությունը ամբողջությունն է այն գիտելիքների, որոնք վերաբերում են նյութական և հոգևոր մշակույթի հետ կապված գրավոր աղբյուրներին և ուսումնասիրություններին. այն գիտելիքների, որոնք վերաբերում են գրքերին՝ ըստ բովանդակության։

Մատենագիտությունը գիտությունների զարգացման օժանդակող հիմնական միջոցներից մեկն է՝ կապված գրականության հետ։ Իսկ գրականության գիտական ուսումնասիրությունն է և գրականության ուսումնասիրության կազմակերպումն է մի որոշակի մեթոդով գիտության զանազան բնագավառների կամ որեէ բնագավառի վերաբերյալ։ Այս տեսակետից էլ մատենա-

¹ G. Peignot, «Dictionnaire raisonné de bibliologie», t. I. Paris, 1802, p. IX.

² Ibidem, p. VIII.

³ G. Brunet, «Dictionnaire de bibliologie cath.», Paris, 1860, Préface, p. 9—10.

⁴ Н. В. Эдмонс, «История русской библиографии до начала XX века», изд. 2-ое, Москва, 1951, стр. 453.

Ֆրանսիացի հայտնի մատենագետ Գ. Պեյնոն 1802 թվականին լույս բնծայած իր «Dictionnaire raisonné de bibliologie» աշխատության առաջին հատորի նախաբանում, կանոչ առնելով Բիբլիոլոգիայի և Բիբլիոգրաֆիայի տարբերության հարցի վրա, ասում էր, որ վերջինս ընդգրկում է միայն գրքերի տեխնիկական նկարագրությունն ու դասակարգումը, այնինչ Բիբլիոլոգիան շնորհիվ ընդգրկում է մարդկային հիմնավորված գիտելիքների վերլուծումը, նրանց հարարներումը, դասավորումն ու բաժանումը, խորանում է խոսքի, գրության ու սպագրության արվեստի մանրամասնությունների մեջ՝ և այլն¹։ Ըստ Պեյնոյի՝ Բիբլիոլոգիան կարող էր համարվել որպես «մատենագրական մի տեսակ մեթոդիկ հանրագիտարան», որը պետք է ընդգրկեր ոչ միայն տպագիր ու ձևագիր, այլև մինչև անդամ մեկնագիր (hiéroglyphique) նյութերը, այսինքն այն ամենը, որ պահպանված է «նշանների միջոցով»²։

Այլևի ջան կես դար հետո Գ. Բրյունեն իր «Dictionnaire de bibliologie cath.» աշխատության առաջաբանում նույն հարցի մասին խոսելիս, կամենալով ճշտում մտցնել խնդրոստարկա բառի բովանդակության մեջ, ասում էր, որ Բիբլիոլոգիայի սահմանները չպետք է սահմանվեն գրամագրիայի և հնագիտության վրա, որոնք գրավոր աղբյուրների հետ կապված գիտություններ չեն³։

1899 թվականին Պետերբուրգում Ա. Մ. Լոպյագինի նախաձեռնությամբ կազմակերպվում է Ռուսական բիբլիոլոգիական (մատենագիտական) ընկերությունը (Русское библиологическое общество), որն իր գոյությունը պահում էր դեռ մինչև 1930 թվականը։ Ընկերության հիմնադրման առիթով Ա. Մ. Լոպյագինի կազմած զեկուցադրում նույնպես ընդգծվում էր այն տարբերությունը, որ գոյություն ունի Բիբլիոլոգիայի և Բիբլիոգրաֆիայի միջև։ Այնտեղ ասվում էր. «Ընկերություն իրեն բիբլիոլոգիական է անվանում նրա համար, որ բիբլիոլոգիա բառը բովանդակում է գիտական բիբլիոգրաֆիա իմաստը, ի տարբերություն բուն բիբլիոգրաֆիայի (այս բառի նեղ իմաստով), որի համար ընդհանրապես օտար է գիտական բովանդակությունը և որը ներկայացնում է գրքերի կամ հոգվածների համակարգումն ըստ սովորական կադաստրի Բիբլիոլոգիայի նպատակն է՝ մատենագրության և մամուլի ամբողջ արտադրության դասակարգումն այն ուղղությամբ, որ մասնագետների համար նրանց ուսումնասիրության հնարավորությունը ղյուրանա այնքան, որքան այդ կարելի է արդի գիտության միջոցներով»⁴։

Հաջվի առնելով այս հանգամանքները՝ մենք Բիբլիոլոգիան (գիտական բիբլիոգրաֆիան) որոշակիորեն տարբերում ենք սովորական Բիբլիոգրաֆիայից, ընդունելով, որ Բիբլիոլոգիան իրոք իր բնույթով, մատենական գործին իր քննական մոտեցմամբ և աշխատանքի գիտահետազոտական մեթոդով ժամանակակից մտկարգակի վրա դանդաղ գիտություն է, որը մեր լեզվի մեջ արտահայտվում է Մատենագիտություն տերմինով, վերջինիս նեղ՝ իսկական առումով, ինչպես նշեցինք վերևում։

Մատենագիտությունը ամբողջությունն է այն գիտելիքների, որոնք վերաբերում են նյութական և հոգևոր մշակույթի հետ կապված գրավոր աղբյուրներին և ուսումնասիրություններին. այն գիտելիքների, որոնք վերաբերում են գրքերին՝ ըստ բովանդակության։

Մատենագիտությունը գիտությունների զարգացման օժանդակող հիմնական միջոցներից մեկն է՝ կապված գրականության հետ։ Իսկ գրականության գիտական ուսումնասիրությունն է և գրականության ուսումնասիրության կազմակերպումն է մի որոշակի մեթոդով գիտության զանազան բնագավառների կամ որեէ բնագավառի վերաբերյալ։ Այս տեսակետից էլ մատենա-

¹ G. Peignot, «Dictionnaire raisonné de bibliologie», t. I. Paris, 1802, p. IX.

² Ibidem, p. VIII.

³ G. Brunet, «Dictionnaire de bibliologie cath.», Paris, 1860, Préface, p. 9—10.

⁴ Н. В. Эдмонс, «История русской библиографии до начала XX века», изд. 2-ое, Москва, 1951, стр. 453.

գիտութիւնն ինքր գիտութեան մի յուրահատուկ բնագավառ է, կապված՝ գիտութեան բոլոր բնագավառների հետ:

Մատենագիտութեան դերն է՝ ցույց սալ գիտութիւնների, ինչպես և զեղեցիկ դարձ-
թեան և արվեստների, դարգացման անցյալը, պատկերել նրա ներկա վիճակը և լուսավորել
նրա առաջխաղացման ուղիները: Ուստի և մեր սույն հրատարակութիւնը՝ «Հայկական մատեն-
ագիտութիւն»-ը, որ մասնագիտական տերմինաբանութեամբ ընդհանրուած է որպէս «ազգա-
լին մատենագիտութիւն», պիտի ընդգրկի գրավոր այն նյութերը, որոնք վերաբերում են մեր
ժողովրդի պատմութեան և նրա բազմադարյան մշակութի անցյալի ու ներկալի հարցերին,
լուսավորելու համար ուսումնասիրութեան ուղիները դնալի ապագան:

Մեր այս հրատարակութիւնը՝ «Հայկական մատենագիտութիւն»-ը, որպէս աղբյուրա-
գիտական աշխատութիւն, իր բնութիւնով կապված է Հայագիտութեան ինչպէս անցյալ գործու-
նեութեան, այնպէս էլ ապագա հեռանկարներին հետ: Հայ մատենագրութիւնն ամբողջութեամբ
վերցրած թանկարժեք աղբյուր է Հայագիտութեան համար: Մեր խնդիրն է եղել՝ ձեռնամուխ
լինել հետազոտելու հայ մատենագրութեան հարուստ անդաստանը, որոշակիորեն մշակված
սխառնով հաշվառում կոտարելու դարերի ընթացքում կուտակված գրական արտագրութիւն-
ների, և համապատասխանորեն ի մի բերելու դրանց հետ կապված գիտական գրականութիւնը:

Հնարավոր չէ մի առ մի թվարկել այն հեղինակներին, որոնք Ս—ՓՂ գարերի ընթաց-
քում իրենց լուսան են բերել հայ մատենագրութեան գանձարանին, կամ՝ գրական այն բոլոր
հուշարձանները, որոնք այդ գանձարանի հարստութիւնն են կազմում:

Հայ պատմագիրների պատկառելի շարանը, Փափստոս Բուզանդից և Մովսես Խորենա-
ցուց մինչև Առաքել Դավրիժեցիին ու Զաքարիա Բանաքեռցին և մինչև Միքայել Զամչյանը,
ժառանգութիւն է թողել մեզ փաստական հսկայական նյութ, որն իր գիտական նշանակա-
թեամբ անփոխարինելի է Հայաստանի, հարեան երկրների և առհասարակ ընդհանուր պատ-
մութեան հետ կապված ուսումնասիրութիւնների համար: Եզնիկ Գողթացու և Դավիթ Անհաղ-
թի երկերով սկսում է ուրվագծվել այն դարավոր ուղին, որ հայ փիլիսոփայական միտքը
անցել է իր պատմական զարգացման ընթացքում մինչև Հովհան Որոտնեցին ու Գրիգոր
Տաթևացին, և մինչև ՓԸ շարի մտածողներ Սիմեոն Երևանցին ու Շահամիր Շահամիրյանը:
Եթե պատմութեան ու փիլիսոփայութեան բնագավառը մեզ ավանդել է պատմական, աշխար-
հագրական, վարքագրական-կենսագրական, վկայաբանական, ներբողական, և այլ ամենի հետ
միասին գաղափարաբանական գրականութեան հիանալի գլուխ-գործոցներ, ապա նաև պետք է
նշել, որ հայ մատենագրութիւնը մյուս բնագավառներում ևս ունեցել է հսկայական արժե-
քավոր ներդրում: Եզնիկի դեմքեր չեն է՝ դարի անվանի մաթեմատիկոս ու արիթմետիկոս
Անանիա Շիրակացին, որի երկերը պատկառանք են ազդում մեր դարաշրջանի գիտնական-
ներին, կամ՝ ՓԱ դարի համայնագետ Գրիգոր Մաղիստրոսը, որի երկերում մենք գտնում ենք
իր ժամանակի գիտական, մշակութային, գաղափարական ու հասարակական վիճակը,—այսինքն
Հայաստանյան իրականութիւնը,—պատկերող լայն տեղեկութիւններ: Քերականութիւնն ու հե-
տորութիւնը, գրչութիւնն ու բառարանագրութիւնը, կրոնական ու դավանաբանական գրա-
կանութիւնը, տոմարագիտութիւնն ու երաժշտութիւնը, բնագիտութիւնը, քիմիան ու բժշկու-
թիւնը, հոգևոր ու աշխարհիկ բանաստեղծութիւնը, կանոնական ու իրավաբանական գրակա-
նութիւնը, խրատաբանութիւնն ու առակագրութիւնը, գիտական ու կրոնական նյութերին
նախընթաց մեկնողական գրականութիւնն ունեցել են իրենց փալուն ներկայացուցիչներն ի դեմս
Հովհաննէս Մանդակունու, Հովհաննէս Օձնեցու, Ստեփանոս Սլունեցու, Գրիգոր Նարեկացու,
Հովհաննէս Սարկավազի, Մխիթար Գոշի և այն մյուս մատենագիրների, որոնք գործել են
մինչև ՓԸ դարի վերջերը:

Այս բոլորը կազմում է հայ մատենագրական հարստության այն մասը, որ մենք անվանում ենք ինքնուրույն գրականություն, բաժանելով թարգմանական գրականությունից:

Հայ թարգմանական գրականության նշանակությունը նույնքան մեծ է ժամանակակից դիտության համար:

Եւ դարից, հայկական տասերի դուստով, սկսվում է մեր մատենագրության պատմության մեջ թարգմանական հզոր շարժումը¹, որ պարերի ընթացքում Հայաստան է փոխադրվում հարեան երկրների սուաջավոր մշակույթների արգասիք հանդիսացող գրական, գիտական ու գաղափարական արժեքները, որոնցով պետք է պատվաստվեր ու զարգանար մեր ազգային մշակույթը:

Թարգմանական գրականության նախնական շրջանը կապված էր ասորական մատենագրության հետ, — ըստ ոմանց՝ նույնիսկ Դ դարից, — սակայն շատ շուտով տեղի ունեցավ խաչածեմ՝ հելլենական աշխարհի հետ կրոնական ու մշակութային շփումների և, մասնավորապես, Հայաստանում պարսկական ու բյուզանդական ազդեցությունների պայքարի հետևանքով, թեև Ս դարից հետո էլ զանազան ժամանակներում ասորերենից կատարվել են թարգմանություններ, նույնիսկ զեռ Գիլիկյան իշխանության շրջանում: Բայց թարգմանական շարժումը հունական մատենագրության հետ կապվեց ավելի ուսուր և ավելի լայն թելերով: Նույնիսկ Ո դարից սկսած և հաջորդ դարերի ընթացքում թարգմանությամբ հայ մատենագրության պատմությանն անցան հունական դասական գրականության շատ հայտնի ներկայացուցիչներ և անանուն երկեր: Գեո ԺԼ՝ դարում էլ շարունակվում էր հետաքրքրությունը հունական հին և նոր հեղինակների հանդեպ՝ ինչ-ինչ երկերի վերաթարգմանություններով կամ եղած թարգմանությունների վերանայմամբ: Հայ մատենագրության դանձարանում գտնվում են պատկանելի թվով թարգմանություններ նաև լատիներենից, արաբերենից, վրացերենից, պարսկերենից, լատինական, սլավոնական և այլ բազմաթիվ լեզուներից:

Սխալ կլինի կարծել, թե թարգմանական գրականության գիտական նշանակությունը միայն հայ մատենագրության պատմության հարցերի հետ կապակցության մեջ է, ինչպես, որինակ, պատմական ժամանակաշրջանի հետ գաղափարական առնչությունների, ազդեցությունների ու բախումների, լեզվական դարձումների ու գրական ուղղությունների հարցերի, և այլն: Կան երկեր, որոնց հունարեն կամ ասորերեն և կամ այլ լեզվով շարադրված սկզբնադրերը կորած են և որոնց մասին մասնագետներն այժմ ստիպված են դիմել հայ մատենագրությանը: Այդ երկերի մեջ կան այնպիսիներ, որոնք միակ սկզբնաղբյուրն են համաշխարհային նշանակություն ունեցող պատմական, լեզվական, գրականական, իրավաբանական և կամ գիտական որևէ այլ հարցի կամ հարցերի ուսումնասիրության համար, և կամ, ասենք, հունական կամ ասորական մատենագրության պատմության համար: Այս տեսակետից բանասիրության մեջ վաղուց է ուշադրություն գրավել հայ թարգմանական գրականությունը:

Բոլորին հայտնի է, օրինակ, այն հսկայական հետաքրքրությունը, որ ԺԹ դարի սկզբներին գիտական աշխարհում առաջացրեց Սվսերիոս Գեսարացու ժամանակագրության հայերեն ամբողջական թարգմանության դրուսը, որպես ժամանակի բանասիրական մեծագույն հայանություններից մեկը: Եւ դարում թարգմանված այս երկհատոր աշխատությունը, որի հունարեն քննարկից անհարազատ քաղվածքներ են միայն մնացել, հանդիսանում է հին աշխարհի պատմության վերաբերող և շատ կողմերով եղակի արժեք ունեցող մի աղբյուր, որը միաժամանակ ընդարձակ հատվածներ է պահպանել Բերոսոսի, Աղեքսանդր Բագմավեպի, Արիդենոսի, Կաստորի, Գեփալիոնի, Մանեթոնի, Դիոդոր Սիկիլիացու, Դիոնեսիոս Հալիկաոնացու և

¹ Նախամերսովան շրջանում եւ կարող էին որոշ դարեր թարգմանված լինել, բայց մենք այստեղ չկատ ռւնենք հայտնի թարգմանությունների գրքը, որ, սեփական ստան ռւնենալու շնորհիվ իբրց դարձավ շարժում:

ուրիշ պատմագիրներին կորած երկերից՝ Հայ մատենագրության թանկագին ավանդներից են Այլթալա Ուսանցացու ճար, Ակակոս Կ. Պոլսեցու և Պետրոս Մոնզոսի թղթակցութունը, Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը, ինչպես նաև Եփրեմ Խուրի Ասորու, Փիլոն Երզրայեցու, Հովհան Ոսկերեանի, Հլուսիքիոս Երուսաղեմացու, Սեբերիանոս Գարաղացու, Նանա Ասորու, Եղիա Ասորու և ուրիշների մեկնողական երկերից ու ճառերից շատերը, որոնց ասորերեն և հունարեն սկզբնաղբերը կորած են. կամ թե՛ Անատոլիոս Բերլուտացու անունով հասած երկրագործական այն հայտնի երկը, որ կոչվում է «Գիրք վաստակոց» և որի հունարեն հարազատ բնագիրը նույնպես անհայտ է՝. և կամ՝ «Անսիդ Անտիոքայ» կոչված պատմական հուշարձանը, որ Անտիոքի լատինական իշխանության օրենսդիրքն է և պահպանվել է միայն հայերեն թարգմանութամբ: Այսպիսի երկերի թիվը ստվար է հայ մատենագրության մեջ՝.

Իսկ առհասարակ հայ թարգմանական գրականության ժողովրդային բանասիրության համար շատ մեծ է նաև գոյութուն ունեցող հունական, ասորական, լատինական, վրացական և այլ հին բնագրերի քննության, ստուգման և վերականգնման ուղղութիւնները կատարվող աշխատանքների մեջ՝.

Մեր ինքնուրույն ու թարգմանական գրականութիւնը դարգացել է դարերի ընթացքում Հայաստանի օստօնական ու գիտական կենտրոններում՝ Տաթևում ու Մաքենոցում, Թանահատում ու Հոռոմասում, Անիում ու Սեանում, Աղթամարում ու Նարեկում, Սանահինում ու Հաղբատում, Գեորգիում ու Գանձասարում, Խորանաշատում ու Գլաձորում, Էջմիածնում ու Ամիրտալում և Հայաստանի ուրիշ բազմաթիվ ուսումնարաններում, որոնցից շատերը կոչվել են «Ճամայարան», ինչպես և Կիլիկյան Հայաստանի կենտրոններում՝ Սիսում ու Դրազարկում, Ալեքերում, Սկևռա վանքում, Արքակաղնիում, Հոռովկայում և այլն, որտեղ մտավորական բազմաթիվ սերունդներ նշանակալի դեր են կատարել գիտության, գրականության և արվեստների ասպարեզում՝ կուտակելով մշակութային բազմակողմանի արժեքներ, որոնց շնորհիվ հայ մատենագրութունն այսօր աղբյուրագիտական հարուստ ժառանգութուն է հանդիսանում ոչ միայն հայագիտության, այլև համաշխարհային գիտության համար:

Մեր ներկա հրատարակութիւնը, իր հաջորդ հատորների հետ միասին, գալիս է աղբյուրագիտական հարստութիւնների այդ գանձարանը պեղելու գործում հնարավորության շրջանակների մեջ ստանձնելու այն բաժինը, որն ընկնում է մատենագիտությանը:

¹ Եփրեմ Կեսարացու «Ժամանակագրութիւն» հայերեն թարգմանութիւնը գտնվեց ժՀ զարի վերջերում Գեորգ Գալատեցու կողմից և նրա ձեռագրված մի ընդօրինակության հիման վրա հրատարակվեց 1818 թվականին Վենետիկում, Մի. Ազգերային շնորհքով: Մենք առիթ ենք ունեցել նշելու, որ Գեորգ Գալատեցու հայտարարած մագաղաթյա օրինակը, որ ժԳ/ժԳ զարերի գրչութիւնն է, այժմ գտնվում է Հայաստանում, Երեանի Գեո. Մատենադարանի մեծ. № 1004. տե՛ս՝ Տեղեկագիր ՀՍՍՐ Գիտությունների Ակադեմիայի. հաս. գիտ., 1956, № 12, էջ 92:

² «Գիրք վաստակոց»-ի հայերեն թարգմանութիւնը հունարենից յի կատարվել, այլ, հովանաբար, նրա արարքին թարգմանութիւնից՝

³ Այս կտիպի թարգմանութիւններից մի քանիսի մասին տե՛ս B. Sargisjan, „Dei tesori patristici e biblici conservati nella letteratura armena“, Venezia, 1897. J. Muyldermans, „L'apport des éditions arméniennes de Venise à la patristique“, Բազմավեպ. 1949, № 7—12, էջ 288—300:

⁴ Այս իմաստով հմմտ. J. Lebon, „Pour une édition critique des oeuvres de saint Athanase“, Revue d'histoire Ecclésiastique, vol. XXI, 1925, p. 526—530.

Նույնը փոխադարձաբար կարելի է սուել նաև հայերենից կատարված թարգմանութիւնների մասին: Օրինակ՝ Ե. Մուրը, իստիվ վրացական գրականութիւնը հնագույն շրջանում հայերենից վրացերենի թարգմանված մի շարք գործերի մասին, գտնում է, որ վրացերեն Աստվածայնի՝ հայերենից թարգմանված լինելու փաստը գիտական նշանակութիւն ունի հայկական բնագրի վերականգնման տեսակետից, այն բնագրի, որը գեո չէր վերանայվել բազմաձևերի. H. Я. Марр, „Из поэзии на Афон“, Журнал Министерства Народного Просвещения, г. CCCXXII, 1929, № 3, стр. 2, стр. 13.

Մենք ասացինք, որ մասենագիտութիւնը, որպէս գիտութիւն կամ եզրափակման մի յուրահատուկ բնագավառ, մեղանում ձեւավորվեց ժԹ դարի ընթացքում: Դա իհարկե չի նշանակում, որ հայկական մատենագիտութեան պատմութիւնը նոր էր սկսվում ժԹ դարում:

Մատենագիտական աշխատանքների հետքերը բավականին հին են մեր մատենագրութեան մեջ՝ հասնելով մինչև հայ գրի և գրականութեան սկզբնավորման շրջանը:

Մատենագիտութեան պատմութեան հետ են կապվում հին Հայաստանում զանազան գրքերի կամ գրվածքների ընդունման ու մերժման, ընտրութեան ու խորութեան փաստերը, որոնք արդունք էին երկրի հասարակական կյանքում տարբեր հասանքների միջև գոյութիւն ունեցող բախումների ու պայքարի: Ինչպէս Հոմմեական և Բյուզանդական կայսրութիւններում և ուրիշ երկրներում, այնպէս էլ միջնադարյան Հայաստանում նման բախումներն ու պայքարը հանգուս էին գալիս միջոց կրոնական գրողով և գրականութեան մեջ արտահայտվում էին գաղանարանական բնույթով: Իսկ կրոնական-գաղանարանական խնդիրների մեջ տիրական դեր ունեցողը Հայ Սկեզեցին էր, որն իր հեղինակութեան կնիքն էր դնում գրականութեան և մտավորական շարժումն արտահայտող բոլոր երեւութիւնների վրա: Սլ ալդ պատճառով էլ անխուսափելիորեն նույն ուղղութեան են ենթարկվել Ս դարից սկսած հայ մատենագրութեան բոլոր արտադրութիւնները, ո՛ր ընագավառի էլ պատկանէին նրանք: Այդ ուղղութեամբ էր գնում և Թարգմանական գրականութիւնը՝ հայացնելով հույն և ասորի եկեղեցական մատենագիրների կարևոր գործերը:

Սակայն կյանքի զատմական ընթացքի հետ հրապարակ էին գալիս և գրականութեան այնպիսի արտադրութիւններ, որոնց բովանդակութիւնը հեռանում էր պաշտօնական եկեղեցու տեսակետներից. հանդես էին գալիս նաև այնպիսիներ, որոնք չէին արտացոլում իշխող դասակարգերի շահերը: Ժնունդ էին առնում այսպէս կոչված աղանդավորական գրվածքներ, որոնց տարածման դեմ խիստ արգելքներ էր սահմանում եկեղեցին: Այս միջոցով էլ, մտավորական շարժմանը նպաստակադրված ուղղութիւնն տալու համար, եկեղեցու և նրա հեղինակավոր գործիչների կողմից հրապարակվում էին հատուկ կերպով մշակված գրացուցակներ, որոնք ճշտում էին ընդունելի և մերժելի գրքերի թիվը: Այդպիսի ցուցակները մատենագիտական երկեր են:

Աղանդավորական գրականութեան դեմ մղվող պայքարի՝ հետ էր կապված ամենից առաջ Աստվածաշնչի Եփանոսն-ի հարցը, որ քրիստոնեական աշխարհում գոյութիւն ունեւ դեռևս նախքան Աստվածաշնչի հայերեն թարգմանութիւնը և եկեղեցու շահագրգռութեան հիմնական առարկաներից էր՝ Աղանդավորներն իրենց տեսակետները հիմնավորելու համար աշխատում էին իրենց սեփական հեղինակութիւնը հանդիսացող գրական որոշ երկեր մուծել Հին և Նոր Կտակարանների մեջ՝ որպէս նրանց հարազատ մասերը: Իսկ եկեղեցին վաղ ժամանակներից սկսած բազմիցս զբաղվել է այդ հարցով՝ որոշելով իր կողմից հարազատ և ընդունելի համարվածներն ու կազմելով Աստվածաշնչի այսպէս կոչված Եփանոսն-ը, որ է կանոնագրութեան կամ վավերագրութեան գրքերի ցուցակը, և մերժելով, որպէս անհարազատ, այսպէս անվանված անկանոն կամ անվավեր գրքերը, որոնց համար նույնպէս կազմում էր հատուկ ցուցակներ: Հայաստանում ևս, Հայ Սկեզեցու տեսակետներին համապատասխան, տարբեր ժամանակներում կազմվել են Հին և Նոր Կտակարանների Եփանոսն-ը կամ կանոնագրութեան գրքերի ցուցակներ, և

¹ Կանոնական և անվավեր տերմինները նոր են: Անտիա Շիրափացու ինքնակենսագրութեան մեջ նրանք հանդես են գալիս յայտնի և զազանի տերմիններով. առ՝ «Անտիայի Շիրափայնոյ համարագր մատենագրութիւնք», Երևան, 1913, էջ 207: Անվավերները շշտակվում էին շահ ծածուկ տերմինով, առ՝ «Միթթարայ Այրիվանեցու պատմութիւն ժամանակագրական», Ս. Գեորգիուր, 1867, էջ 36: Դազանի և ծածուկ բառերը Թարգմանութիւնն են հուշարեն ձեռնարք: Բռնի, որն զգտագործվում է բանասիրութեան մեջ անվավերագրութեան գրականութիւնը նշելու համար:

ըստ այնմ էլ՝ անկամոն գրքերի ցուցակներ, որոնց, ժամանակագրական կարգով, անշուշտ առաջին տեղն է պատկանում հայկական մատենագիտութիւնն պատմութիւնն մեզ:

Այստեղ մենք կանգ չառնելով «Կանոն»-ի և անվավերականների ընդհանուր հարցի վրա, որը բանասիրական առանձին խնդիր է, խոսելու ենք միայն արգելված և կամ կասկածելի համարված գրքեր թվարկող մի քանի առանձին ցուցակների մասին, որոնցում հիշատակվող անունների մեջ կան թե՛ Աստվածաշնչի կանոնական կազմի հետ կապակցութիւնն մեջ եղողներ և թե՛ նրանից դուրս: Այս ցուցակները մեր միջնադարյան մատենագիտական գրականութիւնն հնագույն նմուշներն են և մեծ արժեք են ներկայացնում բանասիրութիւնն համար:

Ձ դարից է «Այս են անուամբ ժՁ սուա գրոցն որ Եկեալ ի հերձուածող Ասորոցն» խորագիրը կրող բնագիրը (Բնագիր Ա)¹, Հստ Սամուել Անեցու հիշատակութիւնն՝ 890 թվականին Հայաստան են գալիս ասորի նեստորական քարոզիչներ, որոնք շուտով հալածվում են, բայց նրանց բերած «սուա» գրքերը թարգմանվում են հայերեն²: Սամուել Անեցին տալիս է նաև թարգմանված գրքերի անունները, թվով 10: Սակայն մեր մատենագիտական ցուցակում գրքերի թիվը 16 է³: Այս տարբերությունը բացատրելու համար կարելի է ենթադրել, որ մյուսները ուրիշ ժամանակի թարգմանություններ են, հավանաբար ավելի վաղ ժամանակի՝ սկսելով Սփեսասի 431 թ. ժողովին հաջորդող շրջանից, բայց հատկապես Ձ դարի առաջին կեսի, որը Հայաստանում նեստորական պրոպագանդայի ամենաբարենպաստ շրջանն էր: Ինչպես տեսնում ենք Ներսես Բագրևանդացու գրագրութիւնից՝ այդ ժամանակ Հայաստանում կային հաստատված մեծ թվով խուժիկ նեստորականներ, որոնց դեմ անհրաժեշտ էր համարվել աննախընթաց հալածանք հարուցել 80-ական թվականներին⁴:

Ոչ-նվազ հնութիւն ներկայացնող մատենագիտական գործեր են նաև այն երեք ցուցակները, որոնք պահպանվել են ժԳ դարի ընդօրինակութիւնով, Մխիթար Այրիվանեցու հայտնի Ճառընտրում⁵:

Նրանցից առաջինը, որ կրում է «Գիրք զոր ունից Հրեայքն ի ծածուկ» խորագիրը (Բնագիր Բ—Ա), վերաբերում է Հին և Նոր Կտակարանների անվավերներին և թվարկում է 10 գիրք: Խորագիրն արդեն ցույց է տալիս, որ գրքերը հրեական անվավերներ են: Իրոք այս գրքերը պատկանում են քրիստոնեության առաջին դարերում ծագում առած այն անվավերների թվին, որոնք քրիստոնեական մշակման ենթարկված հրեական գրքեր էին: Գրքերի անունները հունական և այլ աղբյուրների ավյալներով հաստատվում են: Օտար աղբյուրներին համաձայն հրեական անվավերներն ութսուներից ավելի էին, իսկ հայկական ցուցակը պարունակում է միայն 10 անուններ: Այս հանգամանքը մեզ մղում է ենթադրելու, որ մեր ցուցա-

¹ Այս և հաջորդ նշակներն առաջում են մեր «Մատենագիտական բնագրեր» բաժնին, ներկա հատոր էջ XXXIX—LXXVI: Այնտեղ նշաւթերը դասավորված են ոչ թե ժամանակագրական կարգով, այլ առարկաբան: Մատենագիտական բնագրերը կազմելիս հաշիվ ենք անել օգտագործված օրինակների միայն էական տարբերությունները, անտեսելով ցերեկոսական մանր տարբերությունները:

² «Սամուէլի ցանեայի Անեցույ հաւածուեց ի գրոց զսամազարոց», Վազարչապատ, 1893, էջ 70—77: Այստեղից փոխառաբար նաև՝ «Կիրակոսի վարդապետի Յանձակեցույ Կամաօս զսամուէլիս ի օրոյն Գրիգորէ ցուարօ իւր լուսարանեայ», Վենետիկ, 1898, էջ 28:

³ Լրիվ ցուցակը մեզ հասել է Անգրեաս Սվզոկիացու ընդօրինակութիւնով՝ 1880 թվականից, Երևանի Գեա. Մաս. Աեւ. Ձ 1869, էջ 391ր: Ա. Գ. Արքահայրն այս բնագիրը հրատարակել է Նկատելի ազգագուճերով և նեստորական գրքերը տարբերակ կերպով անվանել՝ «Կաղաքիստոնեական գրքեր», սեւ նրա «Հայկական պոլեոգրաֆիա», Երևան, 1948, էջ 180: Յուցակի մի ուրիշ օրինակ նշում է Գ. Զարբանույանը, «Մատենագրան նայկական թարգմանութեան նախնեաց (գար Դ—ԺԳ)», Վենետիկ, 1889, էջ 20:

⁴ Հմմտ. «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 82—77:
⁵ Երևանի Գեա. Մաս. Աեւ. Ձ 1800, էջ 389ր: Հաշիվ չենք անում այս էջում գտնվող Սվազր Գոնապու(?) և Կյուրեղ Երուսաղեմացու «Կարգադրութիւն»-ները, որոնք Հին և Նոր Կտակարանների կանոն են օտնտնուել: Իսկ մեզ նետարբերող երեք ցուցակներն արդեն հրատարակված են. Կար. Տեր-Մկրտչյան, Արարատ, 1898, էջ 408: Մ. Եր-Մոսեսեան, «История перевода Библии на армянский язык», С.-Петербург, 1902, стр. 241—242. Գար. Հովսեփյան, «Ենդրակեանք կամ Գոռչեանք Կայոց զսամուէլեան մէջ», մասն Գ, Նյու-Յորկ, 1848/3, էջ 107:

կամ նշված հրեական գրքերը թերևս միայն նրանք են, որոնք գոյություն ունեին հայերեն թարգմանությամբ: Այս ենթադրությունը զարմանալի չի թվա, եթև նկատի ունենանք, որ այդ գրքերի մեծ մասը մեր ձեռքի տակ կա այսօր: Լամենայն դեպս հուշականներից անկախ է այս ցուցակը և ունի ինքնուրույն կառուցվածք:

Հաջորդ ցուցակը, որ կրում է ժնկ ըստ նորոյս խորագիրը (Բնագիր Բ-6), վերաբերում է նոր Կտակարանի պարականոնների և թվարկում է 5 դիրք. և կամ 7 դիրք՝ եթև վերջում հիշատակվող ընդհանրական թղթերը հաշվենք առանձին-առանձին: Այս ցուցակը կապ չունի նախորդ՝ Եփրք վոր ունին Հրեայքն ի ծածուկս բնագրի հետ:

«Սրբայն Կղեմայ, երևո՞ր գիրքը ընդունելի է» խորագիրը կրող բնագիրը (Բնագիր Բ-Կ) թվարկում է 10 անուն: Ռուցակի հեղինակն իրեն համարում է Անանիա Դամասկացու ժամանակակից և գործակից¹, հետևաբար նա Ա դարում ապրած Կղեմես Համայնցին է: Մեր ցուցակի աղբյուրը մեզ հայտնի չէ, բայց այդ աղբյուրը, կամ ավելի ճիշտը, նրանից ժողած ուրիշ օրինակներ մասամբ հայտնի են եղել Վարդան Արևելցուն² և Քրիզոս Տաթևացուն³:

Սկսած նեստորական գրականությունից՝ արգելված գրքերի հարցին վերաբերող մատենագիտական այս գործերը ցույց են տալիս, որ դավանական ու տեսական բնութի գրվածքները միշտ էլ գտնվում էին հեղեցական իշխանության խիստ նկողություն ենթակա՝ մինչև Մխիթար Այրիվանեցու օրերը, և, իհարկե, դեռ նրանից էլ հետո: Ինչպես գիտենք՝ միջոցներ էին ձեռք առնվում, որ գրքերի ընդօրինակումն ու բազմացումը կասկածելի ձևերի միջոցով չկատարվեր: Այդ մտահոգությամբ է, որ, օրինակ, Սսի 1243 թվականի ժողովի ընդունած ԺԱ կանոնով պահանջվում էր «զատուր գիրս եկեղեցւոյ գրել արուեստաւորաց, գիտնոց և ուղղափառաց»⁴:

Սակայն կրոնական մատենումը դրի և գրականության տեսակավորման գործում՝ գոյություն ունեւր նաև գրքերի ընդունման ու մերժման խնդրից անկախ, այսպես կոչված արտաքին գրքերի որոշման ուղղությամբ, և դա նույնպես իր արտահայտությունն է ունեցել հայկական մատենագիտության մեջ: «Թիւյ արտաքին գրոց թե ո՞վք են ասացեայ» խորագիրը կրող բնագիրը (Բնագիր Գ) թեև ԺԾ դարում և կամ ավելի ուշ է կազմվել, բայց մենք, խափտելով ժամանակագրությունը, նրա մասին այստեղ ենք խոսում, որովհետև դեռևս շատ վաղ ժամանակներից մեր մատենագիրների մոտ հիշատակություններ և ակնարկներ կան արտաքին հեղինակների, արտաքին գիտությունների, արտաքին գրքայի մասին: Մովսես Սորենացուն կամ Անանիա Շիրակացուն վերագրվող «Աշխարհացոյց»-ի ներածության մեջ արտաքին են համարվում այն հեղինակները, որոնք «զաշխարհագրութիւն լարմարեցին ի ճանապարհորդութենէ և ի նաւարկութենէ, և ստուգեցին յերկրաչափութենէ. և ինքն երկրաչափութիւնն գաւա լաստեղաբաշխութենէ»⁵: Այստեղից երևում է, որ արտաքին գիտություններ էին անվանվում աշխարհագրությունը, երկրաչափությունը և աստղագիտությունը: ԺԳ դարում Գիրական Դանձակեցին խոսելով Օվսերիոս Գեսարեցու մասին, ասում էր, որ նա իր ժամանակագրությունը գրել է «սկսեալ ի նախնոյն Ադամայ, զիստական անուանս նահապետացն, զոր գրեցին արտաքինքն, համեմատելով ընդ աստուածայնոց արանց պատմութիւնս»⁶: Բացահայտ է, որ

¹ Հմմտ. «Անկանոն գիրք չին Կտակարանաց, հրատ. Ս. Հովսեփյանց, Վենետիկ, 1806: Բ. Մարգիոյան, «Ուսումնասիրութիւնը չին Կտակարանի անվուեր գրոց վրայ», Վենետիկ, 1895:

² Բնագրի վերջում ասվում է. «Ձայս ես և Անանէ գրեցար ի վիճի քաղաքի և այլն: Ազատուցված է, որ այս հիշատակագրությունը գտականում է ոչ թե Մխիթար Այրիվանեցուն, այլ բնագրի հեղինակին, և «Անանէ»-ն Անանիա Դամասկացին է. М. Тер-Мовсесян, «История перевода Библии на армянский язык», стр. 242 Գ. Հովսեփյան, «Քաղաքիւնք կամ Գուշանք հայոց պատմութեան մէջ», մասն Բ, Երևան, 1944, էջ 111-112:

³ Գ. Հովսեփյան, «Քաղաքիւնք կամ Գուշանք հայոց պատմութեան մէջ», մասն Բ, էջ 112:

⁴ М. Тер-Мовсесян, «История перевода Библии на армянский язык», стр. 262.

⁵ Ա. Չալոյան, «Գաղմութիւն կաթողիկէ վարդապետութեան ի Հայո և այլն, Վենետիկ, 1878, էջ 269:

⁶ «Մարոյ երեք մերոյ Մովսէթի Քարենացոյ մատենագրութիւնք», Վենետիկ, 1805, էջ 305:

⁷ «Կիրակոսի վարդապետի Գանձակեցոյ կամոսոս պատմութիւն» և այլն, էջ 21:

այստեղ արժանիք էն համարվում պատմական այն աղբյուրները, որոնք դուրս են Աստվածաշունչ մատյանից և եկեղեցական մատենագրութունից: Երևանի Պետական Մատենադարանի № 1710 ձեռագրում, որը ժԳ դարում է արտադրվել և իմաստասիրական նյութերի ժողովածու է, մի երկրորդ գրչի կողմից նշվում է, թե արժանիքն գիտություններ էին կոչվում քերականությունն ու փիլիսոփայությունը և թե այդ առարկաներին վերաբերող գրքերի համար գոյություն ունեւր ընդունված կարգ: Նա գրում է. «Բնական կարգն արտաքին գրոցս այս է. նախ Գերականն և ապա Սահմանցն և Ամենայն շար տանջելին, ապա՝ Պորփիրն, և վկնի՝ Ստորագութիւնցն, և ապա՝ Պերի արմենիասն, և ապա՝ Աշխարհացն, և վկնի՝ Առաքինութեանցն» (էջ 188բ): Եվ հետո գրիչն ավելացնում է, որ եթե այդ կարգը խախտվում է, ինչպես խախտվել է ալլալ ձեռագրում, դա սոցիոլոգիան արդունք է. «Ե՛սկ ասա, որ զհետ Պորփիրիս Աշխարհացս է և Առաքինութեանցս, կա՛մ ի սոցիոլոգիան է, կա՛մ լաւրիանիէն, և կա՛մ լերկուցն» (անդ): Այս կարգը գասսավանդման համար էր: Նույն կարգն էր էջմիածնի ուսումնարանում ժէ դարում, երբ Մեղրիսեթ Վժանցիին էր գասսավանդում արժանիքն գիտությունները, որոնց թվին էր պատկանում և տոմարագիտությունը: Այդ մասին Առաքել Դավիթեանցին է գրում. «Նախ զԳերականութիւնն դաս առին, վկնի նորա զՍահմանցն սկսան, և ապա զՊորփիրն, զՍտորագութիւն, զՊերիարմենիասն, զԱշխարհացն, զԳովելին (այսինքն՝ զԱռաքինութեանցն). զվկնի սոցա ամենեցուն գամենայն ազգաց տօմարսն»¹: Այսպիսով արժանիքն տեղումն էր նշվում գիտության ու գրականության մեջ այն ամենը, որ դուրս էր կրոնական կամ եկեղեցական գիտության ու գրականության շրջանակից, կրոնականն ու եկեղեցականը համարելով որպես ներքին (ներսի, ընտանի), թեև վերջին տեղումնը հազվադեպ է պատահում, ինչպես ժԳ դարի մի հիշատակարանում, որտեղ ասվում է, թե Գրիգոր Տաթևացիին Տաթևի համալսարանում ուսուցում էր «զննքին և զարտաքին գրեանս»²: Մեր հրատարակած ցուցակը թվարկում է մի շարք փիլիսոփայական ու քերականական երկեր ու նրանց մասին մեկնություններ, որոնց շարքում Դավիթ փիլիսոփայի «Բարձրացուցէ՞ք»-ի հիշատակումն ըստ երեւոյթին հետագայում կատարված մուծում է:

ԺԳ դարում հայկական մատենագիտության պատմության մեջ երևան են գալիս երկու նոր տեղումներ, որոնք կապվում են գրականության տեսակավորման հարցում մի նոր հասկացողության հետ: Խոսքը լայն և նուրբ անվանված գրքերի մասին է: Գրականության նման բաժանման հասկացողությանն առաջին անգամ պատահում ենք Գրիգոր Արասյանի կազմած «Գիրք պառնասաց» երկում, որն իր ժամանակի մատենագիտական աշխատանքի մի իսկական գլուխ-գործոց է և որի հնագույն օրինակը Երևանի Պետ. Մատենադարանի № 1879 ձեռագիրն է: Նրա լրիվ խորագիրը հետևյալն է. «Պատմա լայն և նուրբ գրեանց, առեալ ի նարցն սրբոց և ի վարդապետաց, և ի մի նաւաչեալ և նոգացեալ մեծ բարուճապետից Գրիգորի, օրգոյ Արասայ»³:

¹ «Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւիթեանց, Վազարշապատ, 1890, էջ 890:

² Լ. Ս. Խաչիկյան, «Գլուխորայն համալսարանը և նրա սաների ավարտական ատենախոսութիւնները», Երևանի Պետական Համալսարանի Գիտական Աշխատութիւններ, հ. ԻԳ, Երևան, 1916, էջ 428:

³ Երևանի Պետ. Մատենադարանի սույն № 1879 ձեռագիրը սկզբնաղբի չէ, բայց ընդօրինակությունը (եզրինակին ժամանակակից է, աջման չըջանի երկու սարքեր ձեռ գրչութեամբ նրա գրիչն է՝ «մե Մովսէս» (էջ 220 և 280բ) և առաջին ստացողը՝ «մե Գերսամ վարդապետ» (էջ 281բ և 354ա): Հետագայում, ժԳ դարի վերջերին և կամ ժԳ-ի սկզբներին, այս ձեռագիր երկրորդ ստացողն է եղել Խաչատուր Կելանցիին, որն իր ձեռքով թողել է մի քանի հիշատակագրություններ (էջ 3ա, 11ա, 10ա, 42բ, 43բ, 130բ, 166բ, 170ա, և այլն): Ձեռագրի զննությունից պարզվում է, որ այն Խաչատուր Կելանցու ձեռքն է անցել քայքայված, միջին ու վերջին օրոշ թերթերի պահպանման, իսկ առաջին թերթը նույնպես կորած, բայց մի ուրիշի կողմից նորից գրված վերակազմ: Խաչատուր Կելանցիին «Գիրք պատմաբան»-ի մի ուրիշ օրինակի հիման վրա իր ձեռքով ավելացրել է գրքի վերնագիրը («Պատմա լայն և նուրբ գրեանց» և այլն, էջ 3ա) և, համեմատելով օրոշի ընդգրքը, կատարել է մի շարք ուղղումներ ու լրացումներ (օրինակ՝ էջ 186ա, 166բ, 213ա, 314ա, 314բ, 322ա, և այլն): Մեծ ձեռագրի է ծագում Կելանցու Մեծթաւայն Մատենադարանի № 47 ձեռագիր

Գրիգոր Արասյանի կազմած Գիրք պատմաբանաց-ը խոշոր երևույթ է հայ մատենագիտութեան պատմութեան մեջ¹։ Գրիգոր Արասյանը Սանահինի վանքի առաջնորդն էր 1816 թվականից սկսած, ըստ երևույթին մինչև 20-ական թվականների սկզբները. և հավանաբար այս շրջանում է, որ նա ալարտել է Եփրք պատմաբանաց-ի վերջնական ձևավորումը՝ մի որոշակի ծրագրի համաձայն ընդգրկելով մատենագրական մի շարք հայտնի գործեր։ Եփրք պատմաբանաց-ի մատենագիտական բնույթ ունենալը չի վրիպել բանասերների ուշադրությունից։ Զ. Տաշյանն այդ գործը բնութագրել է որպես «մատենախօսութիւն մ'իւր ժամանակին տեսութեանց համաձայն» Ս. Գրոց և կենդեցալ գլխաւոր վարդապետաց գրութեանց վրայ, մեծաւ մասամբ որչափ ծանօթ էին հեղինակին հայերէն թարգմանութեամբ²։ Ն. Ակինյանը նույնպես նշում է, որ Եփրք պատմաբանաց-ը կազմված է հատուկ ծրագրով, այն է՝ «ուսումնասիրել գրքի պատմութիւնը»։ Իրոք՝ Գրիգոր Արասյանն ինքն էլ իր առաջաբանում այդ աշխատանքը համարում է «գիտութիւն գրոց» (էջ 3ա), այսինքն՝ մասնագիտութիւն։

Եփրք պատմաբանաց-ը ծավալուն ու լուրջ ձեռնարկութիւն էր, բաղկացած 106 ընդարձակ հոդվածներից (376 թերթ՝ վերջից թերի վիճակում)։ Նրանում մատենագիտական մշակման առարկա են դարձել մի շարք երկեր՝ երեք խմբավորումներով. Ա. Հին Կտակարանի գրքեր (էջ 3ա—143ա). Բ. Եկեղեցական մատենագիրների գործեր և արտաքին գրքեր (էջ 143ա—286բ). Գ. Նոր Կտակարանի գրքեր (էջ 286բ—376բ, թերի)։ Քե ինչո՞ւ է միջին տեղը հատկացված կենդեցական մատենագրութեանն ու արտաքին գրքերին՝ զժվար է ասել։ Միայն պարզ է, որ այս երեք խմբերը կամ բաժինները որոշակիորեն սահմանազատված են։ Բաժիններում գրքերին հատկացված է պատմական և արամարանական որոշ հաջորդականութիւն, ընդ որում եթե գրքերի հեղինակները հայտնի են՝ միևնույն հեղինակի գործերը զասավորված են միասնաբար։ Հասկանալի է, որ Ա և Գ բաժիններում ընդգրկված են Հին և Նոր Կտակարանների գրքեր, բայց ավելորդ չի լինի ներկայացնել Բ բաժնի ընդգրկման հետևյալ ամփոփ պատկերը.

1. Փիլոն Երբայեցու գործերը՝ 7 գիրք։
2. Գրիգոր Նազիանզացու գործերը՝ 4 գիրք (բաղկացած 46 ճառերից, որոնցից ամեն մեկն առանձին աշխատութիւն է, ուստի ընդամենը 46 միավոր)։
3. Գրիգոր Նյուսացու գործերը՝ 7 գիրք։
4. Բարսեղ Կեսարացու գործերը՝ 3 գիրք (որոնցից առաջինը բաղկացած է 33 ճառերից, ուստի ընդամենը 36 միավոր)։
5. Եվազր Գոնտացու գործերը՝ 4 ճառ։
6. Դիոնեսիոս Արիսպպացու ինքնակենսագրութիւնը։
7. Դավիթ Իլիլիսոփալի գործերը՝ 3 գիրք³։

Այսպիսով՝ Բ բաժնում ընդգրկված են կենդեցական մատենագիրների գործերից և արտաքին գրքերից 103 առում կամ միավոր։ Սրանց վրա ավելացնելով Ա բաժնում ընդգրկված 34 (կամ 35) գրքերը և Գ բաժնում ընդգրկված 28 գրքերը, կունենանք ընդամենը 164 (կամ 165) առում կամ միավոր։ որոնց նվիրված նկարագրական հոդվածների ընդհանուր թիվը

¹ Եփրք պատմաբանաց-ի մասին տես Մ. Կոր-Մոսեսյան, «История перевода Библии на армянский язык», стр. 225—238. Ն. Ակինյան, «Մատենագրական նեոպատմութիւններ», հ. Ա, Վիեննա, 1922, էջ 1—86՝ «Ներածութիւն»-ի Գիրք պատմաբանաց։

² Հեռեւայ Կրտ. մեջ. Զ. Գոթբերգյան, «Սրբազան պատարզամասոյցը հայոց», Վիեննա, 1897, (չ 176)։

³ Ն. Ակինյան, «Մատենագրական նեոպատմութիւններ», հ. Ա, էջ 131։

⁴ Կարելի է ենթադրել, որ սկզբում այս երեք բաժիններից յարաբանչաբար զանգել է առանձին տեղերի կամ կատարների մեջ և զրա նեոպատմութեան ընդգրկման ժամանակ զրանց հաջորդականութիւնը իրավամբ խախտել է։

⁵ Սովորական չփոփոխմամբ ասում են, թե շէր մեծն Դավիթ փիլիսոփայ ազգու ի շարքայ ի ներթեւ գեղջէ, աշակերտ Մովսէսի Գերգոզի, ի ժամանակս Վահանայ սրբույ Մազեոսի սրբույ Վարդանայ, և ի ժամանակս Յովհաննու Մանգաղուչույ (էջ 286ա)։ Նրան վերագրված 3 գրքերն են՝ Թարծրացուցեթ, Սանճանաց գիրք և Թերական։

«Գիրք պատմառաց»-ում, ինչպես ասացինք, 196 է: Եթե հողվածների թիվը, նկարագրված գրքերի թվի համեմատությամբ, ավելի է, պատճառն այն է, որ հաճախ, և հատկապես Ա և Գ բաժիններում, այս կամ այն գրքին նվիրված են ոչ թե մեկ, այլ երկու կամ երեք հողվածներ, տարբեր հեղինակների գրչից. պատահում է նույնիսկ մինչև հինգ հողված: Բացի դրանից՝ երբեմն առանձին հողված է նվիրված նաև այս կամ այն մատենագրի կյանքին ու գրական գործունեությանը՝ ընդհանրապես, անկախ նրա լուրագանչուր երկի մասին առանձին խոսելուց: Գրքերին նվիրված հողվածները խոսում են այն մասին, թե ե՛րբ, ի՛նչ առիթով և ի՛նչ անհրաժեշտությամբ հետևանքով է շարադրված տվյալ երկը, համառոտակի անդրադառնում են նրանում արժարժված տեսական հարցերին. մի խոսքով՝ տալիս են նրա բովանդակությունն ու վերլուծությունը:

Գրիգոր Արասյանի կազմած այս աշխատությունը «Գիրք պատմառաց» է կոչվում նրա համար, որ այնտեղ դետեղված հողվածները բոլորն էլ խորագրված են՝ «Պատմառ այս ինչ գրոց», «Սկիզբն և պատմառ այն ինչ գրոց», և այլն:

«Գիրք պատմառաց»-ի Ա և Գ բաժինների նյութերը բացառապես ցաղված են՝ օտար և չալ հեղինակավոր մատենագիրների երկերից, բայց Բ բաժնի նյութերը, ինչպես երևում է, ժամանակակիցների գրչի արդյունք են: «Գիրք պատմառաց»-ը հավաքական աշխատանքի պատու է: Եթե նրա վերջնական խմբագրումը կամ կազմումը տեղի է ունեցել Գրիգոր Արասյանի ձեռքով ժ՞ր դարի 10-ական թվականներին, պետք է ասել, որ նյութերի նախապատրաստումը, ժամանակի հայտնի դեմքերի գործակցությամբ, կատարվել էր նախորդող ժամանակաշրջանում, սկսած դեռևս ժ՞ր դարի երկրորդ կեսից, հատկապես նրա վերջին երեք տասնամյակներում, երբ չլուսխալին Հայաստանում գրական-գիտական շարժում կար անցյալի մատենագրական ժառանգությունն ուսումնասիրելու:

Հավանաբար Գրիգոր Արասյանն ինքն է գրել անանուն հողվածների մի մասը, բայց համեմատյալ դեպս ոչ բոլորը. որովհետև տարբեր հողվածների մեջ որոշ տեղեկություններ կրկնվում են: Նրա անմիջական աշխատակիցներն են եզել Դավիթ Քոբայրեցին և Մխիթար Գոշը, որոնցից երկրորդի անունը երևում է միայն մեկ անգամ՝ Փիլոն Երբայրեցու «Յաղագս նախախնամութեան» գրքին նվիրված մի հողվածի վերնագրում: Իսկ Քոբայրեցու անունը երևում է Փիլոնի, Գրիգոր Նազիանզացու և Բարսեղ Կեսարացու գործերին նվիրված մի շարք հողվածների ճակատում: Պետ. Մատենադարանում պահված անտիպ նյութերի ուսումնասիրության հիման վրա կարելի է ասել, որ «Գիրք պատմառաց»-ում Քոբայրեցու հեղինակությունն են նաև Գրիգոր Նազիանզացու մի շարք այլ ճառերի և ամենայն հավանականությամբ բոլոր ճառերի պատճառները, և որ այնտեղ բացահայտորեն երևում են ժ՞ր դարի երկրորդ կեսի հեղինակ Եղիա Ասորու գործերի ազդեցությունն ու հետքերը: «Գիրք պատմառաց»-ում չի երևում Քոբայրեցու ուսուցիչ Վարդան Հաղբատացու անունը, բայց նա ևս իր բաժինն ունի այս աշխատանքի մեջ: Պետ. Մատենադարանի № 437 ձեռագրում գտնվում է մի համառոտ աշխատություն, որի վերնագիրն է՝ «Պատմառք Նիսացոյ գրեցաց. զոր Վարդան վարդապետ սեղեկացեալ ի Ներսէս կոթողիկոսէ. և յաւրիճակի գրեալ զայս և է այսպէս»:

¹ Հմտ. Ն. Ակիւնյան, «Մատենագրական հետազոտություններ», հտ. Ա, էջ 89—90:
² Հմտ. ձեռագիր № 821՝ «Պատմառք Գրիգորի Աստուածաբանի գիւնցն [Եղիայի վարդապետի Ասոր-ւոյ], էջ 251ա—268բ: ձեռագիր № 1450՝ «Եղիայի ուղղափառի և իմաստասիրի Ասորոյ մեկնութիւն ճառից մէկ ճակատից Գրիգորի Աստուածաբանի», էջ 112ա—242ա: ձեռագիր № 8602՝ Գրիգոր Աստուածաբանի ճառերի մեկնություն, Դավիթ Քոբայրեցու խմբագրությամբ, էջ 1ա—272բ: Վերջինս Քոբայրեցու ինքնագիրն է, 1178 թվականից. ձեռագրի հիշատակարանն ամբողջությամբ հրատարակել է Վ. Ա. Հակոբյանը, Տեղեկագիր ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, հտ. գիտ., 1957, № 6, էջ 118—120: Այս հիշատակարանի առջին մասը տես նաև Ն. Ակիւնյանի մաս, «Մատենագրական հետազոտություններ», հտ. Ա, էջ 87—89:

«Գիրք պատմառաց»-ում (էջ 103ա) բռնացի կա նաև Եղիա Ասորու հետևյալ հիշատակագրությունը. «Քաւրեանէ իմաստաւէր սոաց տեսան Ներսէս՝ Ի բազմութիւն քաղաքին օ՛վ լըչեր»:

(էջ 116ա—116բ): Համեմատութիւնից պարզվում է, որ Քորայրեցին իր գրած հոգվածներից մի քանիսում ոգաագործել է այս նյութերը: Իսկ Վարդան Հաղբատացու միջոցով Եփրք պատմաագագ-ի պատմութիւնը կապվում է Կիլիկիայի մշակութային շարժման հետ, ներսես Շնորհալու անվան հետ, քանի որ, ինչպես Քորայրեցին է ասում Վարդանը հյուսիսային վարդապետների կողմից շնորհակալ էր մերձ ի սահման Ասորուց և Կիլիկիացուց և շուրջ ժամանակս ի սակս քննութեան զեզերնալ առ զրան մեծի իմաստնոյ տեսան ներսէսի Հայոց վերադատողի: Հավանարար նա էր բերել այնտեղից նաև Սղիա Ասորու գործերը: Մի խոսքով Եփրք պատմաագագ-ը, մատենագիտական աշխատանքի միջնադարյան այս հսկան, ԺԲ դարի վերջերում ու ԺԳ-ի սկզբներում առաջ էր եկել Մեծ Հայքի և Կիլիկյան Հայաստանի մտավորականութեան հավաքական աշխատանքով, մեր արևելյան և արեմտյան մշակութիւնների շրջմամբ:

Գալով լայն և ճուրր գրքերի հարցին՝ բանասերների մաս տարակարծութիւն չկա այն մասին, որ այստեղ լայն են անվանվում Հին և Նոր կտակարանների գրքերը. բայց մյուսների մասին կան տարբեր կարծիքներ, ըստ որոնց՝ ճուրր անվան տակ պետք է հասկանալ Եթովպարեի կամ հանձնարարելի գրքերը (Օգ. Կարեեր)¹, եղծվարիմաց և խրթին գրքերը (Ղ. Ալիշան)², Եփրիսոփայական գրքերը (Գ. Գատկանյան և Մ. Տեր-Մովսիսյան)³, Եւլքախոսական գրքերը (Ն. Ակիւնյան)⁴, տեսական, փիլիսոփայական գրքերը (Ա. Գ. Արբանամյան)⁵: Մենք նպատակ չունենալով քննարկել այդ կարծիքները՝ միայն կասեինք, որ ճուրր էին անվանվում եկեղեցական և արտաքին մատենագիրների գործերը, ինչպես ի հայտ է գալիս Եփրք պատմաագագ-ի Բ բաժնի բովանդակութիւնից: Այս կարծիքն ապացուցվում է ճուրր գրքերի այն երկու ցուցովներով, որ մենք հրատարակում ենք՝ Եփիւք ճուրր գրեանց (Բնագիր Գ) և Արեւաքին գրեանք, որ ի դաս մտանենց (Բնագիր Ե)⁶: Իմաստի տեսակետից ճիշտ է Ն. Ակիւնյանի կարծիքը, թէ ճուրր էին անվանվում այն գրքերը, որոնք Եփրութիւնն և խորին սեճ ունենն⁷: Դա համաձայն է Հովհաննես Սարկավագի անանուն կենսագրութեան ազած տեղեկութեան հետ, թէ նա Եարկանէր ի զիրս Նուրբս և զժուարայուրս⁸: Նուրր գրքերի հարցում մասնավորելով մեր խոսքը հիշյալ Եփիւք ճուրր գրեանց բնագրի վրա (Բնագիր Գ), որը նախ է Մխիթար Այրիվանեցու ժամանակագրութեան մեջ գտնվող ճուրր գրքերի ցուցակի⁹ հետ, պետք է ասել, որ բանասերները նրա հեղինակ համարում են Հովհաննես Սարկավագին, որովհետեւ ժամանակագրութեան մեջ ցուցակը հաջորդում է Սարկավագի Եվարգապոսիւնք գրաց սրբոց ցուցակին, առանց հարկի առնելու, որ նրբերի մեջ գտնվող Քերականը, Հերմեսը, Գորգիուրը, Արիսուսիւրը չլին լայնոյ Դամարիւն Ելլլլլ Ելլլլլ Ելլլլլ Ելլլլլ:

¹ Տես Դավթի Քորայրեցու Կիլիսոփայութեան, նշված նախորդ մտնթագրութեան մեջ:
² Aug. Carrière, „Une version arménienne de l’Histoire d’Assénoith“, *Nouveaux Mélanges Orientaux*, 1886, p. 478.
³ Ղ. Ալիշան, Եթովպիկ հայրենեաց հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1931, էջ 288:
⁴ „Хронографическая история, составленная отцом Мехитаром, маршпетом Айриванским“, пер. К. Патмякова, С.-Петербург, 1869, стр. 362. М. Тер-Мовсисян, „История перевода Библии на армянский язык“, стр. 229.
⁵ Ն. Ակիւնյան, ԵՄատենագրական հետազոտութիւններ, հտ. Ա, էջ 10 և 33:
⁶ Ա. Գ. Արբանամյան, Եւլքախոսի իմաստների մատենագրութեանը, Երևան, 1936, էջ 111:
⁷ Այստեղ Արեւաքին գրեանքը խորագրեր ենթադրել է ուղիս, որ ցուցակն սկզբում միայն առաջին շորս կետերն էր պարունակում (Սահմանք, Գորգիուր, Արիսուսիւր և Քերական). եկեղեցական մատենագիրներէ զործերը հովանաբար հետազոտում են ավելացվել՝ Նուրր գրքերէ պատկերն ունենալու նպատակով, և այդ պատճառով էլ վերջում բոլորէ համառ նշվել է՝ Եփրքերն այս էն:
⁸ Ն. Ակիւնյան, ԵՄատենագրական հետազոտութիւններ, հտ. Ա, էջ 36 և 33:
⁹ Գորեցին Ա. կաթողիկոս (չոփեփյան), Եթովպիկոսը ձեռագրաց, հտ. Ա, Անթիլիաս, 1931, էջ 337: Այստեղ Եփրքը բառը տեղեկն չէ, այլ անվան է, ինչպես նախորդ եզրուարարութեւ բառը:
¹⁰ ԵՄխիթարայ Այրիվանեցու պատմութիւն ժամանակագրական, Ս. Գեորգիուր, 1867, էջ 33—36:

մեջ: Ն. Ալինյանը թեև նկատում է, որ այդ ցուցակում հետաքրքիր պահանջներ կան, — Եվագրի եւարիւրաւորք-ը և Գրուկ Դիագոցոսի Շահկապետ-ի մեկնութիւնը, որոնք ԺԳ դարի թարգմանութիւններ են, — բայց անպատեհութիւնը հարթում է՝ համարելով, որ Մխիթար Այրիվանեցին փոխած է Սարկաւագեան կարգադրութիւնը¹: Առեղծվածը լուծելու համար պէտք է ելնել նրանից, որ Եւարգադրութիւնը գրոց սրբոց-ի մէջ չէր մտնում ճուրք գրքերի ցուցակը: Այդ ցուցակը վերահրատարակելիս մենք օգտագործված Ա և Բ օրինակների հիման վրա գտանք, որ ցուցակը սկզբնապես եղբայրակազմի է եղել Արիստոսելի շնորհաբանաց գրքով²: մյուս կողմից տեսանք, որ նրա այս սկզբնական՝ հարադատ մասը լիովին ընթանում է Մխիթար Այրիվանեցու Ճառընտրում (Երևանի Պետ. Մատենադարանի ձեռ. № 1500) եղած համապատասխան նյութերի հետ, հերթականութեամբ քալլ առ քալլ, ուստի կասկած չի մնում, որ այս ցուցակը Այրիվանեցին է կազմել Ճառընտրի հիման վրա. իսկ Ճառընտրում ո՛չ ճեմար գրեանք՝ անունը կա, ո՛չ էլ ցուցում այն մասին, թե ճուրք գրքերը Սարկաւագի կարգավորածներն են, և չէր էլ կարող լինել այդպիսի ցուցում, քանի որ նրանց մեջ հետաքրքիր պահանջներ նյութեր կան: Այրիվանեցին նուրբ գրքերն ինքն է հավաքել ու դասավորել Ճառընտրի մէջ և նրանց ցուցակն ինքն է կազմել: «Եւրոպացի գրեանք» արտահայտութիւնը՝ միայն Բիւրք Պատեմաքաց-ում ենք գտնում, բայց ճեմար գրեանք-ին Մխիթար Այրիվանեցուց հետո ևս հաճախ ենք տեսնում հաջորդ դարերում: Բավական է հիշատակել, որ ԺԵ դարում Սիմեոն Այրիվանեցին Եղիվարդի վանքում ուսուցում էր թղթագր և զարտաքին փոխտնօրինութիւն³, ԺԶ դարում Գրիգոր Կեսարացին իր աշակերտ Խաչատուր Կեսարացու կողմից ներբողվում էր որպէս պատմող նրբից և արտաքնոց⁴, և այլն:

Հայ մատենագրութեան մէջ հաճախ խոսք է լինում և վարդապետական գրքերի մասին: Որքան մեզ հայտնի է՝ միայն Մեսրոպ Տեր-Մովսիսյանն է գրադպել վարդապետական տերմինով: Երևանի Պետ. Մատենադարանի № 177-ձեռագրում, որը ԺԳ դարում Մովսես Երզնկացու ձեռքով Սեպուհ լեռան Գրիգոր Լուսավորչի մենաստանում ընդօրինակված Աստվածաշունչ է, հետագայի՝ ԺԴ դարի գրչութեամբ գտնվում են երկու տնտեսն հիշատակարաններ, գրված նույն վանքում: Դրանցից առաջինում կարդում ենք. «Որ զգիրքս զԱստուածաշունչս և կամ զմեկններն և զմերբերն և զինչ վարդապետական գիրք կա խնայել դասասաց վարդապետի, փակեալ լիցի նմա դուռն արքայութեանն աստուծոյ, զի գրեանքդ վասն դասի ենք դրել ի դուռն Սուրբ Լուսաւորչիդ և այլն (էջ 12բ): Մեր կարծիքով հազիվ թե կարիք լիներ շեշտելու, որ այստեղ Վարդապետական գրեանքն անվան տակ հասկացվում են ուսումնական գրքեր, այսինքն՝ որ Աստվածաշունչը, մեկնութիւններն ու նրբերը, որոնք կային վանքի գրադարանում, վարդապետական (ուսումնական) գրքեր էին: Նույնն է ասում և մյուս հիշատա-

¹ Ն. Ալինյան, «Մատենագրական հետազոտութիւններ», հ. Ա, էջ 63: Մի կողմակի տեղեկութեան համաձայն՝ Ն. Ալինյանը մի ավելի նոր ուսումնասիրութեան մէջ («Մխիթար Այրիվանեցու նորագիւտ Յիշատակարանը», Աղստ, № 13, Բնիւթ, 1946, էջ 120—126) ասում է, որ Սարկաւագի Եւարգադրութիւնը ընդգրկում էին Եփեսոս լայն ու նաւթ կոչուած գրքերը, այսինքն Ս. Գրեթն ու Ս. Հարց գործերը, ժինչ Եւարգ, ԿճՄ. Հանդէս Ամսօրեայ, 1947, էջ 183: Բայց հայտնի չէ, թե հասունը ինչու է Եւարգով կառուցուած:

² Եւարգի մնացած մասը, որ մենք անգտնում ենք Շահրուհակութիւն, Ժամանակագրութեան մէջ ակնհայտորէն մի կարկաստն է, ուրիշէ ձեռքից: Բավական է ուշագրութեան ասելու, որ նրա սկզբի մասի հեղինակը խնամքով նշել է ամեն մի գրքի զուգրութիւնը կամ մասերի քանակը, իսկ Շահրուհակութեան հեղինակն այդպիսի մանրէքով չի գրադպել: Դարձյալ՝ եթե ցուցակն ամբողջութեամբ մէկ հեղինակի գործ եղած լիներ, ապա Դավթի անունով հասած շեշտացու գիրքը գտածորդած կլինէր վերհում՝ ԺԳ դարում սակավին նույն համարով Դավթ Անկաթի Սահմանք իմաստասիրութեան գրքի հետ միասին, այնպէս, ինչպէս գտածորդած են մյուս մատենագիրների գործերը: Շահրուհակութիւնը բազմապէս է պատահական և անորոշ նյութերից:

³ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, Երևան, 1955, էջ 60:

⁴ Լ. Տեր-Նովանյանց, «Պատմութիւն Նոր Զուգայու, որ յԱսպահան», հ. Բ, Նոր-Ջուգա, 1881, էջ 22:

կարանք. ընդ զԱստուածաշունչս և կամ զայլ վարդապետական գրեանք, որ ի Սուրբ Լուսաւորիչս կա, լաղազս լաշաղանաց խնայէ՝ որ ի շուրջագա (sic) վանորհայլքդ դասատուն լինի, հիցի ընդ անիծիւքս և այլն (էջ 608ր—609ա)։ Բայց Մեսրոպ Տեր-Մովսիսյանն այստեղ տեսնելով ոչ թե երեք, այլ չորս տեսակի գրքեր, նրանցից վերջինն համարում է ռասալածարանական գրքերն։ Այս կարծիքի սխալ լինելը հաստատելու համար բայական է տեսնել միայն Վարդան Բաղիշեցու կազմած դրացուցակը՝ «Այս են վարդապետական գրեանք ի վանքն Ամիրզուլուս խորագրով, որի մեջ գրանցված են անխախտ ամեն տեսակի գրքեր՝ պատմագիրներ, արտաքին գրքեր, երկար, Բարվախոս, և այլն։ Դրանք Ամրդուլուս դասի համար օգտագործված գրքերն էին։

Անցնենք առաջ։ Եփրք պատճառացս-ի երևումը հայ գիտական գրականութիւն մեջ ոչ միայն մղում տվեց մատենագիտական հետազոտողական երկերի ուսուցանմանը, այլև ուղի հարթեց հայկական մատենագիտութիւնը՝ դուրս գալու նախորդ շրջանի բացառիկ կրօնականութիւնից և թևակոխելու գիտութիւն տարրեր բնագավառները։ Սթե մինչև այդ մատենագիտական աշխատանքները գրքի տեսակավորման գործին մոտենում էին լուկ կրօնական հայեցողութիւն և եկեղեցու զաղափարախոսութիւն զիրքերից, ապա սկսած ԺԳ դարից և հետագա դարերում, գրանք ընդգրկում են գիտական հետաքրքրութիւն հետզհետե ավելի լայն սահմաններ, զրականագիտական, պատմագիտական և այլ թեմաներ, որոնցով մատենագիտութիւնը զնում է դեպի աշխարհականացում։

Ժամանակագրական կարգով պալիս են նախ այն ցուցակները, որոնք զբաղվում են շարականադիր հեղինակների հարցով։ Ձեռագիր ու տպագիր Շարականաց-ների սկզբում հաճախ ենք պատահում ցուցակների, որոնք սկսվում են ընդր զծորանս հոգւոյն արքինն բառերով և նվիրված են այս հարցին։ Հետագոտելով այս խնդիրը բազմաթիվ ձեռագրերի օգնութիւնով մենք գտանք, որ նրանք թեև մանրամասնութիւնների մեջ բնագրական այլապատկերութիւններ ընդհանրապես շատ ունեն, սակայն բոլորը հիմնականում ներկայացնում են երեք խմբագրութիւններ և այդ ձևով էլ մենք հրատարակում ենք (Բնագիր ԻԱ), ցույց տալու համար բնագրի մշակութե ու զարգացումը։ Նրանցից առաջինը, որ Սարգիս Երեցի խմբագրութիւնն է ԺԳ դարում և հանդիսանում է սկզբնատիպ, խորագրված է՝ «Յուզագս որոյ, քե հին և նոյ շարականք և երգերն յումմէ՝ ասացան» (Բնագիր ԻԱ—ա)։ Այստեղ հաշվի են առնվել 28 հեղինակներ։ Երկրորդ խմբագրութիւնը, որ պատկանում է ԺԴ դարին և գտնվում է Գրիգոր Տաթևացու «Հարցմանց» գրքում, խորագրված է. «Վասն շարականաց քե ո՞վ որ է ասացեալ» (Բնագիր ԻԱ—բ)։ Այս խմբագրութիւնը նախորդից դուրս է թողել մի քանի անուններ և, ավելացնելով մի քանի նորեր, նրանց թիվը հասցրել է 20-ի։ Երրորդ խմբագրութիւնը, որ ԺԵ-ԺԶ դարերում է երևան եկել, անունն է և խորագիր չունի (Բնագիր ԻԱ—գ)։ Սա առաջացել է Գրիգոր Տաթևացու բնագրի հիման վրա և, սրբագրութիւն ու հավելումներով, հեղինակների թիվը հասցնում է 24-ի։ Մանրամասնութիւնների մեջ, իհարկե, ուրիշ տարբերութիւններ ես կան այս երեք խմբագրութիւնների միջև։ Մատենագիտական նույն թեմայով գրվել են նաև մի քանի չափածո երկեր, որոնցից մեկը կրում է Գրիգոր Տաթևացու նշանավոր աշակերտի անունը՝ «ՅԱսաքելէ Սիւնեաց վարդապետան շինեալ ոտանաւոր շարականաց արարողաց» (Բնագիր ԻԲ)։ Այս ոտանավորը տարեթիվ չունի, բայց պետք է գրված

¹ М. Тер-Мовсисян, «История перевода Библии на армянский язык», стр. 108—110 и 229. Հեղինակը չի նկատել, որ մեր նշած երկու հիշատակարանների զբնութիւնը տարբեր է Մովսիս Երզնկացու ձեռագրից։

² Արարատ, 1893, էջ 178—180։

³ Այս հարցի մասին տես Դ. Քաչալեց, «Հայոց կրօնական բանաստեղծութիւն», Լուսա, Քիֆլիս, 2 տարի, 1901, գիրք Ա, էջ 209—210. գիրք Բ, էջ 308—309։ Է. Մկրտչյան, «Շարականի յարկեցները», Քիլզան-դիս, 4. Գոլիս, ԺԶ տարի, 1906, № 2498 և 2500։ Նույն, «Շարականաբանութիւն։ Շարականի հեղինակները», Լոյս, 4. Գոլիս, ԺԱ տարի, 1908, էջ 686—691, 1008—1004, 1039—1038 և 1082—1085։

լինի ժ՛Դ դարի վերջերին կամ ժ՛Ծ-ի սկզբներին: Այնուհետև ունենց ժ՛Է դարի մի աշխատութուն՝ Ե՛ Տեր Ստեփաննոսէ զիտեպիսի քահանայէ ասացեալ սակաւ ռաճաւորս յաղագս շարակեաց քէ յումմէ՝ են երգեալս (Բնագիր ԻԳ), Լիզինակը Ստեփանոս Ձիք Ջուղայեցին է՛: Ըստ հիշատակարանի՝ գրութեան տարեթիջն է 1636: Ժ՛Է դարից ունենց մի ուրիշ հեղինակ ևս՝ Հակոբ Սսեցի՝, որը զրել է՝ «Ուսանաւոր վասն ցուցման յոյ գերգող շարակեացս յոգեալ ըստ նախագիծ տանց» (Բնագիր ԻԴ): Վերնագրի ցուցմունքին համապատասխան՝ ռաճաւորի տները սկզբնատառերը հողում են՝ «Յակոբ վարդապետ Սրսոց խընդդէ Յոհան էրէց»: Խնդրողը Ջիլթունի երեց Լոհանն է: Գրութեան ժամանակն է՝ 10 նոյ. 1643 թ.: Այս երեք բնագրերը, հատկապես Ձիք Ստեփանոսի և Հակոբ Սսեցու ռաճաւորները, նմանապես արժեքավոր են որպէս մատենագիտական գործեր: Նրանք բովանդակութեան տեսակետից միջին տեղն են գրավում վերոհիշյալ Բ (Գրիգոր Տաթևացու) և Գ (անանուն) խմբագրութիւնների միջև և օգնում են պատկերացնելու անցման գիծը:

Շարականագրութեան հարցին նվիրված մատենագիտական հիշյալ գործերը կապվում են հայ միջնադարյան գրականութեան պատմութեան հետ:

Գրականագիտական թեմաներ են ընդգրկում նաև մի ցանի ուրիշ երկեր, «Յայլ ուստեքի գտեալ գրեցաք» խորագիրը կրող բնագիրը (Բնագիր ԺԾ) նվիրված է եկեղեցական գրականութեան խնդիրներին: Այնտեղ հաշիվ են առնվել մի շարք հայկական և թարգմանական ստեղծագործութիւններ և սովոր թվով մեկնողական երկեր: Այս ցուցակն, անտարակույս, ծնունդ է առել Տաթևի դպրոցի շրջաններում, ժ՛Ծ դարում: Նրա կառուցման մեջ նկատվում են առնվազն երեք տարբեր ձևեր: «Վասն մեկնողաց աստուածաշունչ գրոց քէ ո՛վ ոք են արարեալս բնագիրը (Բնագիր ԺԷ), որ ժԱ—ԺԵ դարերի հայ մեկնիչներին է նվիրված, սկսվում է Անանիա Սանահնեցիով և, ժամանակագրական կարգով, վերջանում է Գեորգ Երզնկացիով: Այստեղ հայ մեկնիչների շարքում բացառաբար տեղ են գտել նաև Նանա Ասորին, Լովհան Ոսկեբերանը և Անդրեաս Կեսարացին: Անտարակույս ժ՛Ծ դարի գործ է: «Վասն Բամառօտողաց սուրբ գրոց» բնագիրը (Բնագիր ԺԸ) նվիրված է ժԱ—ԺԵ դարերի հայ մեկնիչներին, սկսելով, ժամանակագրական կարգով, Անանիա Սանահնեցուց և վերջանալով Մատթոս Ջուղայեցիով ու Առաքել-Սյունեցիով: Որպէս բացառութիւն՝ այս ցուցակում նույնպէս կան Նանա Ասորու և Լովհան Ոսկեբերանի անունները: Սա ևս պատկանում է Տաթևի դպրոցի շրջաններին և ժ՛Ծ դարին: Հաջորդ բնագիրը՝ «Գիտելի է զի ուրևասն մեկնիչ է աստուածաշունչ գրոց և ինն քաղուածու» (Բնագիր ԺԹ) նվիրված է Զ—ԺԵ դարերի մի շարք հայ մեկնիչներին, ժամանակագրական կարգով՝ Դավիթ Քերականից մինչև Առաքել Սյունեցին, որոնց շարքում հիշատակվում են նաև օտար մեկնիչներից Գրիգոր Նյուսացին, Նանա Ասորին, Անդրեաս և Արեթաս Կեսարացիները, Մեթոդիոս Պատարացին, Իրենեոսը, Որոգինեսը և Հիպոլիտոս Լոմալեցին: Բնագիրը կարող է կազմված լինել ժ՛Ծ դարում կամ ավելի ուշ: «Ո՛վ ոք են արարեալ զլուծմունես և քաղուածուս աստուածաշունչ գրոց» բնագիրը (Բնագիր ԺԲ), որ նվիրված է հիմնականում Գրիգոր Տաթևացու և նրա աշակերտներին՝ մեկնողական երկերին, ամենայն հավանականութեամբ կազմված է Տաթևի դպրոցի շրջաններում՝ ժ՛Ծ դարի վերջերում: Պետք է ասել, որ վերևում հիշատակված հինգ ցուցակները (Բնագրեր ԺԵ—ԺԹ), որոնք բովանդակութեամբ հարուստ են, շատ կետերով կապված են միմյանց հետ և լրացնում են իրար: Դրանց մանրամասն ուսումնասիրութիւնը անպայման կնպաստի հայ մատենագրութեան պատմութեան հետ կապված որոշ խնդիրներ պարզելու:

¹ Այս հեղինակի մասին տես Ն. Ակինյան, «Ստեփանոս Ձիք Ջուղայեցի՝ գրիչ, նկարիչ և սագապոց քահանայ (1609—1637)», Հանդէս Ամսօրեայ, 1947, էջ 112—123: Է. Պյուրտյան, «Ստեփանոս Նազարեցի Ջուղայեցի», Բազմավեպ, 1948, էջ 9—15:

² Տագրագու Հակոբ Սսեցու մասին տես Ա. Մնացականյան, «Անտիպ էջեր միջնադարյան հայ պեղծագործի», Գիտական Նյութերի Ժողովածու (ԸՄՍՒ Միջնադարերի Սովետական Գիտական Զեռագրատուն-Մատենագարան), № 2, Երևան, 1960, էջ 103—105:

Իր բովանդակությամբ հայ մատենագրության պատմության հետ է կապվում նաև ԺԸ դարում Ղազար Զահկեցու կազմած ցուցակը (Բնագիր Զ), բայց սա ընդգրկում է ոչ թե միայն հայ մեկնիչներին, այլ հայ մատենագրության բոլոր հայտնի ներկայացուցիչներին՝ Ծ—ԺԸ դար, 48 անուն, ցույց տալով նրանցից լուրագրանչուրի գրական վաստակը: Սրա հետ կարելի է հիշատակել նաև մատենագրության այն հատվածը, որ խոսում է չորս հեղինակների մասին (Բնագիր Ի):

Իսկ հատկապես հայ պատմագիրներին են վերաբերում մատենագիտական ուրիշ լուրջ ցուցակներ, որոնցից մեկի հեղինակը Կիրակոս Գանձակեցին է (Բնագիր Է), մյուսինը՝ Մխիթար Այրիվանեցին (Բնագիր Ը), երկուսն էլ ԺԳ դարից, իսկ մի երրորդինը՝ զարմյալ Ղազար Զահկեցին (Բնագիր ԺԲ), ԺԸ դարից: Մնացածներն անանուն են: Այս ցուցակները բոլորն էլ սկսում են հին ժամանակներից և պատմագիրներին թվարկում հերթականորեն, երբեմն որոշ խախտումներով: ԵԱյս են պատմագիրը ամենայնսով (Բնագիր Թ) ժամանակով վերջին պատմագիրը Թովմա Մեծոփեցին է, ԺՍ դար: ԵՄանի պատմագրաց Հայոցք-ը (Բնագիր Ժ) 26 պատմագիրներ թվարկելուց հետո ավելացնում է. «Եւ այլ 36 պատմագիրք Հայոց, զորոց զանուանս չգիտեմ», որով հնարավոր չէ որոշել ցուցակի հորինման ժամանակը: ԵՈ՞րք են պատմագիրք Հայոցք-ը (Բնագիր ԺԱ) վերջում նշում է Երեմիա Չելեբիի դործերը, ԺԷ. դար: ԵՊատմագիրք Հայոցք-ը (Բնագիր ԺԲ) վերջում հիշելով Զաքարիա (Զաքեոս) Բանաքեցուն՝ հասցրելու է մինչև 1701 թվականը: Այս ցուցակի անանուն հեղինակից է նաև հաջորդը, որ նվիրված է ուրիշ լեզուներից թարգմանված պատմական երկերին՝ ԵԱյլ ևս զոն պատմագիրք քարգմանալք» (Բնագիր ԺԳ): Սա սկսելով Հովսեփոսից, Իրենեսոսից և Եվսեբիոս Կեսարացուց, թվարկում է մի շարք թարգմանական երկեր, որոնցից ժամանակով վերջինի համար նշված է 1711 թվականը: Սուլյն բնագրի վերջում ասվում է, որ «զհարկաւորացն բուն արկեալի վերուստ, յետ մարգեղութեան տեառն, կարգաւ իշարք, թէ՛ ի մերոց վարդապետաց պատմաբանեալք և թէ՛ լայլ լեզուացն ի մերս թարգմանեալք», որով տարակույս չի թուում, որ սա և նախորդ բնագիրը միևնույն հեղինակին են:

Մատենագիտական այս աշխատությունները վերաբերում են պատմության քննադատին: Թե ի՞նչ արժեքավոր արդյունքներ կարող է տալ բանասիրությանը պատմագիրների այս ցուցակների ուսումնասիրությունը՝ ցույց տվեց Երևանի Պետ. Մատենադաստի ղիտական աշխատակից Գ. Վ. Արզարյանի «Բանասիրական հետախուզումներ» աշխատությունը¹, որտեղ «Պատմագիրք Հայոց» խորագիրը կրող ցուցակի ուսումնասիրության հիման վրա բացահայտվում է Զաքեոս պատմիչի թյուրիմացությունը: Զաքեոսը հայ բանասիրությանը հայտնի է եղել որպես է դարի հեղինակ, որը «զբեւ է Եկեղեցական պատմություն» սկսած առաջալուծներից մինչև 700 թ.՝: «Պատմագիրք Հայոց»-ի ուսումնասիրությունից, սակայն, պարզվում է, որ է դարում գոյություն չեն ունեցել ո՛չ Զաքեոս պատմիչ, ո՛չ էլ «առաջալուծներից մինչև 700 թ.» ընդգրկող որևէ պատմություն, այլ խնդիրը վերաբերում է ԺԷ դարի հայտնի պատմիչ Զաքեոսին (Զաքարիա Բանաքեցուն), որը պատմագրել է «սկսեալ զկնի բանից Առաքելին [Դաւրիժեցուն] մինչև ՌժԾ թիւն»: Նույն «Պատմագիրք Հայոց» ցուցակում է պահպանվել նաև անցյալում Մաղաքիա Արեղային կամ Վարդան պատմիչին վերագրված «Պատմութիւն վասն ազգին Նևտողաց» երկի լուկական հեղինակի՝ Գրիգորի (Գրիգոր Այնեբցի, ԺԳ դար)

¹ Այս երկու բնագրերը միասին արգեն հրատարակվել են չորս անգամ. ա) Հեօր Այսուրյանի կողմից, Ազգարար, Մազրաս, 1793, էջ 188—193. բ) Գ. Գալեմարյանի կողմից. «Պատմութիւն հայ լրագրութեան», Կա. Ա, Վիեննա, 1899, էջ 203—210. գ) Ն. Ալեյնյանի կողմից, Հանգեւ Ամսօրեայ, 1952, էջ 98—99. դ) Նույնի կողմից, «Բնագրիչի զգրոցը», Վիեննա, 1953, էջ 294—308: Մեր հրատարակությունը հասարակ է Երևանի Պետ. Մատենադաստի № 2:71 և № 2:220 մեագիր օրինակների հիման վրա:

² Գ. Վ. Արզարյան, «Բանասիրական հետախուզումներ», Բաքեբր Մատենադաստի (ՀՄՍՍ Միևիտորների Մովսէսի կից Պետական Զեռագրասու. Մատենադաստի), № 4, Երևան, 1958, էջ 61—70:

³ Է. Աճառյան, «Հայոց անձնանունների բառարան», Կա. Բ, Երևան, 1915, էջ 103: Հմմտ. Գ. Ալեյան, «Հայագրասու», Վիեննա, 1901, մասն Ա, էջ 72:

անունը: Այս ցուցակների մեջ հետազոտութիւնն սպասող շատ բան կա, ինչպիսի անժանոթ պատմադիրների մի քանի անուններ՝ Հակոբ, Սաաի, Սարգիս, Դանիել (Բնագիր ԺԱ, §§ 20, 21 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29), և այլն. կամ պատմիչների դործեր, որոնք մեզ չեն հասել, օրինակ՝ Թորոսով (Թորոսովի) Թարգմանչի «Պատմութիւն սրբոյն Սահակայ հայրապետին» (Բնագիր ԺԲ, § 6), Հովհաննէս Կոզեռնի «Պատմագիրք, որ ինչ ի ժամանակս իւր» (անդ, § 31), և այլն: Մեր միջնադարյան մատենագիտները հաճախ պարզ սլաոկերացրել կամ սլաոկեր են այնպիսի հարցեր, որոնք այսօր դրադեցնում են մեր բանասերներին: Թե նշանավոր «Անանիոս Շիրակացու հեղինակութիւնն է՝ հայտնի է եղել ԺԸ դարի սկզբներին «Պատմագիրք Հայոց»-ի անանուն հեղինակին (Բնագիր ԺԲ, § 12): Այսպէս և՛ ընդհանրապէս Սրբնկացի մականունով կոչված և իրար հետ չգտնված Հովհաննէս Պուզի և Հովհաննէս Մործորեցու տարրեր անձնավորութիւններ լինելու խնդիրը հայտնի է եղել ԺԸ դարում Դազար Զահկեցուն (Բնագիր Զ, §§ 18 և 27): Այս բոլորը խոսում են այն մասին, որ մատենագիտական այս ցուցակները մեծ արժեք են ներկայացնում հայ բանասիրութիւն համար:

Մեր հրատարակած մատենագիտական նյութերի շարքն ավարտվում է մի բնագրով, որը պատմական յուրահաստով մի թեմայի է նվիրված: Դա ԺԸ դարում Գեարոս Զուղայեցի Մարտիրոսի կազմած ցուցակն է՝ «Ժողովոցն Հայոց պատմիչք բազումք են» (Բնագիր ԻԾ), որով հեղինակը հայոց ժողովների պատմութիւնն աղբյուրներն է նշում Մ. Զամչյանի գործածութիւն համար:

Անտարակույս հետզհետե կհայտնաբերվեն թեմատիկ բնույթ կրող նմանօրինակ ուրիշ նյութեր ևս, որոնք ավելի կհարստացնեն հայկական մատենագիտութիւնն միջնադարյան պատմութիւնը: Մատենագիտական բնագրեր ևս նաև այս կամ այն վանքի կամ անհատի սեփականութիւնը եղած գրքերի ցուցակները, ինչպէս են, օրինակ, Սաղմոսավանքի գրացուցակը՝ ԺԾ դարից¹, Ամրտուլի վանքի գրացուցակը՝ ԺԷ/ԺԸ դարից², ոմն գրասերի ունեցած գրքերի ցուցակը՝ ԺԵ դարից³, և ուրիշներ: Մենք պետք է հաշվի առնեինք նաև այսպիսի նյութերը, բայց մեր էջերի սղութիւնը թույլ չի տալիս ծախելու այդ ուղղութիւնը: Դա կարող է լինել և մի առանձին ուսումնասիրութիւնն առարկա՝ կողմած գրադարանների և ձեռագրերի պատմութիւնն հետ: Իսկ նախորդ էջերում մեր առաջ բերած ավելիների ամբողջութիւնը վկայում է, որ մատենագիտութիւնը, իրոք, իր պատմութիւնն ունեցել է Հայաստանում՝ եթե ոչ անպայման Ծ դարից, առնվազն Զ-ից մինչև ԺԸ դարը ներառյալ: Այնուհետև բացվում է հայկական մատենագիտութիւնն նոր շրջանը:



Ական ժԹ դարից, մինչև մեր օրերը, հայկական մատենագիտութիւնն գործը հետզհետե ստացավ որոշակի կերպարանք և մոտեցավ ժամանակակից գիտութիւնն մակարդակին: Տպագրութիւնը հրապարակ եկան մատենագրութիւնն և հայադիտութիւնն հետ ամբողջովին և կամ մասամբ կապված մի շարք մեծ ու փոքր երկեր, որոնցում կատարված մատենագիտական աշխատանքը կարելի է բաժանել, ըստ բնույթի, մի քանի խմբերի:

Ա խումբ.— Այս խմբին են պատկանում այն գործերը, որոնք ծրագրից եղել է դասավորել ու ներկայացնել հայ մատենագրութիւնն ինքնուրույն ու թարգմանական երկերը՝ ժամա-

¹ Հ. Ժամկոչյան, «Պատմութիւն վասն ազգին նեոպոստոլ» երկի հեղինակը, Երևանի Գեական Լամպարաբնի Գիտական Աշխատություններ. հա. ԻԳ, Երևան. 1940, էջ 307—368: Գ. Վ. Արզաբազյան, «Երևանի հետախուզումներ», էջ 72: Հմմտ. նաև Ն. Ավինյան, «Երբեք քահանայ Ավինյանի, պատմագիր Թաթարաց պատմութիւն», 1850—1856, Հանդէս Ամսօրեայ, 1948, էջ 384—403:
² Յուս. Ենգուկաթ, Ս. էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք Ա, Վազարշապատ, 1913, էջ 107—169:
³ Արարատ, 1909, էջ 176—189:
⁴ Հ. Ս. Եսայեյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 308:

Նակագրական և կամ այլ կարգով, տպագիր և անտիպ՝ հավաստարարակաւ Այս կարգի և ընդհանրապէս ԺԹ դարի մատենագիտական աշխատանքների առաջին նմուշները 1835 և 1829 թթ. տպի է Ս. Սոմալյանը՝ իտալերեն լեզվով հրատարակած իր երկու հատորներով, որոնցից առաջինը նվիրված է Ե — ԺԷ դդ. հայկական թարգմանութուններին¹, իսկ երկրորդը՝ Դ — ԺԷ՝ դդ. հայ մատենագիրների գործերին²: Այս երկու աշխատութունները, հատկապէս երկրորդը, իրենց ընդարձակ ժամաւով կարող էին նույնիսկ համարվել հայ մատենագրութւան պատմութւան ուրվագծեր: Այնուհետև մատենագիտական նմանօրինակ գործեր են տպի 1853 թ. Ն. Դուալտը՝ անգլերեն լեզվով³, 1860 թվականից սկսած Գ. Գառնանյանը՝ Ֆրանսերեն⁴, առանբերեն⁵ և հայերեն⁶ լեզուներով, 1861/62 թթ. «Բարգմաղէպ»-ի մի անծանոթ աշխատակից (Գ. Զարբանալյան)⁷: 1880 թ. լույս տեսավ Գ. Զարբանալյանի հայանի «Մատենագարտն»-ը, որ նվիրված էր հայկական հին թարգմանութուններին: Վերջինս իր ժամանակի գիտութւան պահանջներին համապատասխանող արժեքավոր մի հրատարակութուն էր, որն իր բնապատկառում փոխարինող չի ունեցել մինչև այսօր: Այնքի քան 50 տարի հետո հրատարակ գալով Հովհ. Գեորգյանի «Հայ հին և միջնադարյան գրականութւան համառոտ բիրիտագրաֆիա»-ն⁸, որը միայն տպագիր նյութերի հիման վրա է կազմված, քննադատութամբ ընդունվեց սովետական մամուլի կողմից որպէս թերի և սխալաշատ աշխատութուն⁹: Այս խմբի ծրագիրն ընդգրկող մի շարք այլ հրատարակութուններ, ինչպէս Կ. Ֆ. Նոյմանի¹⁰ և Ստ. Նազարյանի¹¹ երկերը, որոնք Սոմալյանի հետևողութամբ են գրված, ինչպէս և Գ. Զարբանալյանի հայկական հին և նոր գրութւան հատորները¹² և ուրիշ նմաններ, որոնք արդեն լայնորեն հայ մատենագրութւան պատմութւան են նվիրված, մատենագիտական բնույթ չեն կրում:

Բ յօււմբ.— Այս խմբին են պատկանում այն գործերը, որոնց ծրագիրը եղել է գասսվարելու նկարագրելու առհասարակ հայերեն տպագիր գրքերը՝ հայկական տպագրութւան սկզբնավորութունից (Վենետիկ. 1618 թ.), և կամ՝ մի որոշ ժամանակաշրջանում լույս տեսած հա-

¹ P. S. Somal, «Quadro delle opere di vari autori anticamente tradotte in armeno», Venezia, 1825.

² P. S. Somal, «Quadro della storia letteraria di Armenia», Venezia, 1829.

³ H. G. O. Dwight, «Catalogue of all works known to exist in the armenian language, of a date earlier than the seventeenth century», *Journal of American Oriental Society*, New-York, vol. III, 1853, p. 241—288.

⁴ K. Patcanian, «Catalogue de la littérature arménienne, depuis le commencement du IV siècle jusque vers le milieu du XVII» (Tiré du Bulletin de l'Académie Impériale des Sciences de Saint-Petersbourg, t. II, 1860).

⁵ К. П. Патканов, «Библиографический очерк армянской исторической литературы», С.-Петербург, 1879.

⁶ Գ. Գառնանյան, «Համառոտ տեսութիւն հայ պատմական գրականութեան», Փոքն, 1880, № 1, էջ 1—26: «Հայ պատմագիրների երկաթիքութեանց ցուցակը (Յուշկուած գրքի Գ. Գառնանյանի «Համառոտ տեսութիւն հայ պատմական գրականութեան» յօդուածին)», տեղ, հոգեւոր, էջ 3—40:

⁷ «Գառնիկի հայկական գրութեան», Բարգմաղէպ, 1861, էջ 31—32, 63—66, 90, 109—100, 101—102, 224, 203—204, 225—226, 227—228. 1862, էջ 32, 64, 90, 128, 160, 163, 224, 250, 268 և 320:

⁸ Գ. Զարբանալյան, «Մատենագարտն հայկական թարգմանութեանց նախնեաց (դար Դ—ԺԳ)», Վենետիկ, 1880:

⁹ Հովհ. Գեորգյան, «Հայ հին և միջնադարյան գրականութւան համառոտ բիրիտագրաֆիա (V—XIX դար)», Երևան, 1961:

¹⁰ Արշ. Միքիթայան, «Ազգային Գրականութիւն», 1962, № 1 (78), էջ 88—101: — Արտ. Կարինյան, «Ազգային Գրար», 20 հոգ. 1962 թ., № 2 (800):

¹¹ C. F. Neumann, «Versuch einer Geschichte der armenischen Literatur», Leipzig, 1836.

¹² Ст. Назарян, «Беглый взгляд на историю гайканской литературы до конца 13 столетия», *Ученые Записки, издаваемые Императорским Казанским Университетом*, Казань, 1844, книжка I, стр. 46—85. Его же, «Обозрение истории гайканской письменности в новейшие времена», Казань, 1848.

¹³ Գ. Զարբանալյան, «Գառնութիւն հայերէն գրութեան», տ. Ա (հին մատենագրութիւն հայոց), Վենետիկ, 1863: Նույնի տ. Բ (նոր մատենագրութիւն), Վենետիկ 1870:

լերեն զրքերը Հայ տպագրութեան պատմութեան վերաբերյալ գոյութիւն ունեն ռուսացի-
 րութիւններ, որոնք ընդհանուր կերպով ներկայացնում են հայ տպագիր զրքի պատմութիւնը,
 ինչպես են Ա. Երիցյանի¹, Գ. Զարբանալլանի², Առլի³, Թեոդիկի⁴ և Գ. Լեոնյանի⁵ գործերը:
 Բայց զուտ մատենագիտական բնույթի առաջին զործը Գ. Զարբանալլանի «Հայկական մա-
 տենագիտութիւն»-ն⁶ էր, որը լույս տեսավ 1883 թ.: Այս աշխատութեան համար հիմք վերց-
 նելով ժամանակին Ի. Փափազլանի պատրաստած անտիպ ցուցակը, որն ընդգրկում էր մինչ-
 չև 1800-ական թվականները լույս տեսած զրքերը, Զարբանալլանը որոշ լրացումներով ալդ
 հասցրել է մինչև իր օրերը, օգտագործելով նաև թղթակցութեան միջոցով ուրիշների կողմից
 իրեն հաղորդած նյութեր, որոնցից շատերը, ըստ երևութիւն, եղել են անճիշտ: Այդպիսի
 սխալներ, ինչպես և սխառմի տեսակների ունեցած թերութիւնների, պատճառով Զարբա-
 նալլանի զործը ենթարկւի խիստ քննադատութեան: Զարբանալլանի հրատարակութիւնը
 պարբերական մամուլում աշխուժ հետաքրքրութիւն առաջ բերեց հայկական հին տպագրու-
 թիւնների հանդեպ: Այդ ուղղութեամբ բաւականին ակնառու գործ են կատարել Տ. Պալլանը⁷,
 որն ստորագրում էր նաև «Կապիտալ կեդժանուն»⁸, և ուրիշներ, որոնք զբաղվել են հնատիպ
 նոր զրքերի հայտնաբերմամբ և կամ ճշտումներով⁹, 1904 թվականից սկսել է պրակտիկ
 տպագրվել Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագիտութիւն»-ը¹⁰, որն ընդգրկելու էր 1812
 թվականից սկսած հայերեն տպագիր բոլոր զրքերը և մասամբ նաև նյութեր պարբերական մա-
 մուլից: Իր ծավալով վիթխարի և բովանդակութեամբ աննախընթաց այս հրատարակու-

¹ Ա. Երիցյան, «Գաղմական տեսութիւն հայ տպագրութեան մինչև տասնիններորդ դարը», Փարս, 1881, № 4, էջ 1-32:

² Գ. Զարբանալլան, «Գաղմութիւն հայկական տպագրութեան, սկզբնաւորութեան էն մինչ առ մեզ», Վենետիկ, 1893:

³ Լեո, «Հայկական տպագրութիւն», հա. Ա-Բ, Թիֆլիս, 1901-1903:

⁴ Թեոդիկ, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912:

⁵ Գ. Լեոնյան, «Հայ գիրքը և տպագրութեան արվեստը», Երևան, 1949:

⁶ Գ. Զարբանալլան, «Հայկական մատենագիտութիւն: Այբուբենական ցուցակ տպագրութեան գիւտէն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեան», Վենետիկ, 1883:

⁷ Արզում, Արևիք, 17, 31 և 32 հնդ. 1886 թ., № 3 և 6: Գ. Ազանյանց, Արձագանք, 1898, էջ 107-111:

⁸ Տ. Պալլան, «Հայ տպագրութեան ամենակին երախայրից մասը», Հանդէս Ամսօրեայ, 1894, էջ 367-381: Նույն, «Հայերէն կին տպագրութիւնը», Արևիկեան Մամուլ, 1898, էջ 403-408, 444-458, 508-520, 559-573, 628-629, 680-688, 689-692. 1897, էջ 10-13, 42-48 և 207-210: Նույն, «Անյիշատակ տպագրութիւններ», Հանդէս Ամսօրեայ, 1897, էջ 369-370: Նույն, «Անտիպ յիշատակաբաններ և անյիշատակ տպագրութիւններ», Բիւրակն, 1899, էջ 824-827. 1900, էջ 8-9: Նույն, «Գաղմութիւն եթն իմաստաբարոց մատենակին առջին տպագրութիւնը» 1898-ին», Հանդէս Ամսօրեայ, 1928, էջ 508:

⁹ Կապեա, «Ճուշտ կայերէն կին տպագրութեանց», Բանասեր, 1903, էջ 203-207. 1904, էջ 47-51. 1905, էջ 58-62, 106-116, 145-150, 280-286, 325-327. 1906, էջ 55-61:

¹⁰ Գ. Պազիկյան, «Հայ տպագրութեան նորագիւտ երախայրից», Հանդէս Ամսօրեայ, 1889, էջ 139-141: Նույն, «Հայ տպագրութեան ամենակին երախայրիցը», անդ, 1889, 209-212: Ս. Ալիշանյան, «Հայ տպագրութեան ամենակին երախայրից մասը», անդ, 1889, էջ 200-201: Ա. Տիրոյան, «Առաջին գար հայկական տպագրութեանց», Բազմավկայ, 1890, էջ 90-104: Գ. Պալմբոյրյան, «Հայ տպագրութեան երախայրից մասը», Հանդէս Ամսօրեայ, 1890, էջ 161-163: Նույն, «Հայ տպագրութեան կին նմուշներ», անդ, 1894, էջ 361-363: Նույն, «1813-ի հայ տպագրի գիւտին պատմականը և նոր լուսատարութիւններ», անդ, 1913, էջ 709-718: Նույն, «Հարձակ, առաջին հայ տպագրութիւնը 1379-ին է», անդ, 1914, էջ 17-22: Վ. Թորգոմյան, «Անյիշատակ տպագրութիւններ», անդ, 1898, էջ 273-274. 1907, էջ 9-11: Ար. Վարդանյան, «Ճշտագրութեան 400-ամեակին աթիւ», անդ, 1913, էջ 307-309: Կարեւի և Վելյաշենի մեր օրերում Շ. Եսենզարյան, «Մատենագիտական նորութիւններ», Բազմեր Մատենագրարանի (ՀՄՄՍ Միութարներէ Մովետին կից Գեաղական Զեռագրատուն-Մատենագրարան), № 6, Երևան, 1908, էջ 428-436:

¹¹ Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի», հա. Ա-Բ (Թերթ), Վենետիկ, 1899:

թյունը¹, որի նմանը մենք չենք ունեցել մինչև օրս, դժբախտաբար Յնաց անավարտ, որովհետև նրա ձեռագրի մնացած մասը կորավ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայում հայերի դեմ տեղի ունեցած հալածանքների ժամանակ, Հայերեն տպագրությունների հաշվառման համար հարուստ Նյութեր կան հայագիտությունը նվիրված մատենագիտական գործերի մեջ (տես Դ խումբ): Նյութեր են տալիս նաև գրադարանային ապագրված գրացուցակները (կատալոգներ), ինչպես նա՝ էջմիածնի վանքի², Մուկավալի Հազարյան ճեմարանի³, Քիֆլիսի ներսիսյան դպրոցի⁴, Ամատերզամի համալսարանի⁵, Հելսինկիի համալսարանի⁶, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության⁷, Բաքվի Հայոց Մարդասիրական Ընկերության⁸, Բախարեստի Հայ Մշակույթի Տան⁹, Ա. Խուդարաջյանի¹⁰, Գ. Ուրըջյանի¹¹ և Գ. Շրումպֆի¹² գրադարանների հայերեն գրքերի ցուցակները: Որպես մատենագիտական աշխատանք պետք է նշել և այն, որ մեր գիտական պարբերական մամուլը գովելի սովորություն միջոտ հրատարակել և հրատարակում է նոր լույս տեսած և խմբագրություններին առաջված հայերեն գրքերի պարբերական ցուցակները: Բացի այդ՝ պարբերական մամուլի գրախոսություն ու քննադատության բաժիններում նմանապես հավաքվել են մատենագիտական արժեքավոր տվյալները: Ընդհանրապես թույլատրելի չէ հաշվի առնել գրավաճառների և հրատարակությունների գրացուցակները, որոնք, առևտրական-օնկլամային բնույթ ունենալով, գրքի նկագրու-

¹ Ֆեւտտակներ տեսել՝ Հ. Առաքելյան, Մշակ, 1904, № 281— Հեռ, Մշակ, 1904, № 641— Հեռ, Մշակ, 1904, № 2141— Ա. Յոզանյան, Աճախ, 1904, № 4—3, էջ 90—91— Սուրճանդակ, 1904, № 1889— Արմենիա, 1904, № 401— Կ. Հ. Բամաջյան, Բաճախ, 1904, էջ 189— Քեղզի, Մանգուլի Նիքոս, 1904, № 1178— Մեկեղան, Ոստան, 1911, էջ 687—688:

² Каталог книгъ Эчмиадзинской библиотеки, изданный Броссе, экстраординарнымъ Академикомъ Санктпетербурга, 1840. Catalogue de la Bibliothéque d'Etchmiadzin, publié par M. Brosset, Académicien extraordinaire. Saint-Petersbourg, 1840.

³ „Catalogue des livres de la Bibliothéque fondamentale de l'Institut Lazareff des Langues Orientales“, Moscou, 1861. Հավելվածում՝ ժողով ազգային մասերից գրագրանի Հազարեան ճեմարանի Արևելեան Լեզուաց (էջ 13—44)։— „Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ. а) Библиотека Специальныхъ классовъ. б) Восточный отдѣлъ Фундаментальной библиотекы“, Москва, 1888.— „Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ. Приложение I. Библиотека Н. О. Эмина“, Москва, 1896.— „Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ. Приложение II. Библиотека Г. И. Кананова“, Москва, 1901.— „Каталогъ книгъ и рукописей библиотекъ Лазаревскаго Института Восточныхъ Языковъ. Приложение III. Списокъ книгъ и рукописей, поступившихъ с 1888 г. по 1-ое июля 1903 года“, Москва, 1904.

⁴ Մայր ցուցակ մասերից գրագրանի ներքեան հոգևոր գործի նյութ, Քիֆլիս, 1899:

⁵ F. Macler, „Les livres imprimés arméniens de la Bibliothéque de l'Université d'Amsterdam“, *Revue des Etudes Arméniennes*, t, VI, 1926, p. 71—143.

⁶ T. E. Eriksson, „Die armenische Büchersammlung der Universitätsbibliothek zu Helsinki“, Helsinki, 1956. (=Helsingfors Universitätsbibliotheks Skrifter. XXIV).

⁷ Չքացուցակ հայերեն գրքերի Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության գրագրանի, Քիֆլիս, 1910— Չքացուցակ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության Եւլյու գրագրանի, Եւլյի, 1891:

⁸ Չքացուցակ բարձրագույնս նաստանայ Բազուայ Հայոց Մարգարեական Ընկերության գրագրանի, Բաքու, 1891: Նույնի հավելված № 1, Բաքու, 1894: Նույնի հավելված № 2, Բաքու, 1899: Նույնի հավելված № 3, Բաքու, 1900: Նույնի հավելված № 4, Բաքու, 1901— Չքացուցակ հայերեն գրքերի Բազուայ Հայոց Մարգարեական Ընկերության գրագրանի. Каталогъ армянскихъ книгъ Библиотеки Бакинскаго Арм. Человѣколюбиваго Общества“, Баку, 1912 г.

⁹ H. Dj. Siruni, „Сага Culturală Armeană. Donatiunea Novsep și Victoria Dudian. Dare de seamă și catalog“, București, 1944.

¹⁰ ժողով ապագրել և ձեռագիր գրոց նյութ ի մատենագրանի ներգործական իրերգականի տերութեան Աղեքսանդրի Խուդարաչեան, շարագանայ ըստ կարգի այրուհեանց, Ս. Գեաղարուզ, 1830:

¹¹ „Academia Română. Grigorie M. Butuciu (1840—1912). Testament- Biografie...Catalogul bibliotecii armenești“, București, 1914.

¹² M. Tcheraz, „The Schrumpl collection of armenian books“, London, 1893.

թյան տեսակետից ղուրկ են գիտական ճշգրտութիւնէից: Վստահելի են պաշտոնական հրատարակութիւնները, ինչպես են Երևանի Գետական Համալսարանի 1921—1941 թթ. հրատարակութիւնների ցուցակը¹ և 1921—1938 թթ. ընթացքում Վրաստանում լույս տեսած հայերեն գրքերի ցուցակը, որ հրատարակված է Վրացական ՍՍՌ Գետական Գրապալատի կողմից²: Այս երկրորդի շարունակութիւնը անհրաժեշտ է: Զգալի է նաև Աղբրեջանում և Սովետական Միութիւնն այլ վայրերում հայերեն լեզվով հրատարակված գրքերի մասին նմանօրինակ պաշտոնական հրատարակութիւնների անհրաժեշտութիւնը: Մեզ մոտ 1922 թ. կազմակերպվել է Հայկական ՍՍՌ Գետական Գրապալատը, որի վրա պարտականութիւն է դրվել հաշվի առնել և գրանցել Հայաստանի սահմաններում լույս տեսնող տպագիր ամբողջ արտադրանքը՝ այդ պարտականութիւնն իրականացնելով երկրի ապարանների և հրատարակչական կազմակերպութիւնների կողմից իրեն ուղարկվող պետական պարտադիր օրինակների հիման վրա: Գրապալատը 1936 թվականից սկսել է հրատարակել «Ճպագրութեան տարեգիր», որը հետագայում վերանվանվել է «Գրքի տարեգիր»: Այս հրատարակութիւնն սկզբում լույս էր տեսնում տարեկան մեկ անգամ, իսկ 1929 թվականից դարձել է եռամսյա, հետո՝ միամսյա, վերջում նորից եռամսյա, և այդպես էլ շարունակվում է մինչև այսօր: Այս պարբերական հրատարակութիւնը, պարզ է, չի ընդգրկել սովետական իշխանութեան առաջին տարիների ընթացքում լույս տեսած գրքերը, բայց Գրապալատը զբաղվում է և այդ գործով: Դեռևս 1937 թվականին արդեն ասվում էր, որ «Հայկական ՍՍՌ Գետական Գրապալատը հիմնականում ավարտել է սովետական իշխանութեան տարիներին լույս տեսած հայ տպագիր արտադրանքի ընդհանուր բերլիոգրաֆիայի ուղղութիւնը տարվող աշխատանքը, որը համապատասխան գիտական մշակումից և սխտեմամբումից հետո մոտակա մեկ-երկու տարվա ընթացքում կհրատարակվի առանձին պրակներով»: Իսկ Հայկական ՍՍՌ Ա. Մլասնիկյանի անվան Գետական Ռեսպուբլիկական Գրադարանում (նախկին Գետական Հանրային Գրադարան) 1958 թ. սեպտեմբերից եռանդուն աշխատանքներ են սկսվել հայ տպագիր գրքի լիակատար մատենագիտութիւն կազմելու ուղղութիւնը: Ի լրումն Գետական Գրապալատում կատարվող աշխատանքների՝ Ռեսպուբլիկական Գրադարանի խնդիրն է՝ կազմել ոչ միայն այդ նույն ժամանակաշրջանում Սովետական Միութեան մյուս երկրներում, այլև աշխարհի տարբեր մասերում լույս տեսած հայերեն գրքերի լիակատար մատենագիտութիւնը՝ հայկական տպագրութեան սկզբից մինչև մեր օրերը:

Գ խումբ.—Այս խմբին են պատկանում այն գործերը, որոնց ծրագիրը եղել է նկարագրիչ հայ պարբերական մամուլում լույս տեսած հոդվածները՝ ընդհանրապես, և կամ՝ մի որոշ ժամանակաշրջանում լույս տեսած հոդվածները: Հայ պարբերական մամուլի սկզբն է 1794 թվականը, երբ լույս տեսավ «Ազգարար» ամսագիրը Հնդկաստանի Մադրաս քաղաքում: Հայ պարբերական մամուլի լիակատար պատմութիւնը գեռես չի գրված: Այդ ուղղութիւնը առաջին փորձը կատարել է Գ. Գալեմջյարյանը՝ ընդգրկելով 1794 թվականից սկսած համարյա ամբողջ ԺԹ դարը: Մեր օրերում Ա. Բ. Գարինյանը պատրաստել է հայ պարբերական մամուլի պատմական տեսութիւնը նվիրված ցնական եռահատոր մի ուսումնասիրութիւն, որի

¹ «Երևանի Գետական Համալսարանի 1921—1941 թթ. հրատարակութիւնների կատալոգ», Երևան, 1941:
² «Վրացական ՍՍՌ Գետական Գրապալատի Հայկական գրքեր Վրաստանում 1921—1938: Բերլիոգրաֆիա», Քրիլի-սի, 1941:
³ «Ճպագրութեան տարեգիր» միայն 1933 թ. կատարը Պաշտել է անտիպ:
⁴ Հատ. 4. Կատակիյանի, Կետայլ հրատարակութեան մեջ. Վ. Ն. Դեմիտով, «Ընդհանուր բերլիոգրաֆիա», Երևան, 1937, էջ 278—279:
⁵ Գ. Գալեմջյարյան, «Գոտմութիւն հայ լրագրութեան ի սկզբանէ մինչև մեր ժամանակը», Կ. Ա. Վիկնա, 1893: Հնդգրկում է 1794—1890 թվականները: Արտասովել է Հանդէս Ամսօրեայ-ից, 1897, էջ 39—40, 87—90, 73—74, 88—90, 118—120, 149—153, 160—163, 1838, էջ 87—82, 100—109, 109—189, 210—220, 1889, էջ 6—8, 87—89, 163—168, 185—187, 1890, էջ 216—218, 239—233—Գ. Գալեմջյարյան, «Գոտմութիւն հայ լրագրութեան 1890—էն մինչև մեր օրերը», Հանդէս Ամսօրեայ, 1897, էջ 35—40, 110—118, 270—274 (շարունակելի):

գեո առաջին հատորն է միայն լույս տեսել՝ Լրատարակվել են նաև ավելի մասնակի ընդգրկում ունեցող գործեր՝ Մ. Գոտուրյանի¹ և ուրիշների աշխատություններ: Արժեքավոր հրատարակություն է 1704—1934 թթ. ընթացքում լույս տեսած հայերեն պարբերականների այն ցուցակը, որ կազմել է Գ. Լեոնյանը²: Անհրաժեշտ է լրացնել այս աշխատության ունեցած թերիները և վերահրատարակել այն՝ հասցնելով մինչև մեր օրերը: Նույնքան արժեքավոր գործ է Վիննալում գտնվող հայ պարբերականների այն ցուցակը, որ կազմել է Ռ. Կարապետյանը³: Այս բաղադրակալն վերաբերում են հայ պարբերական մամուլի պատմությանը: Պարբերական մամուլի մասնագիտության բուն առարկան պարբերականների բովանդակությունն է: Այդ ուղղությամբ կատարված աշխատանքների մեջ կարելի է նախ հիշատակել, որ Գ. Գալմաշյանն ու Մ. Գոտուրյանն իրենց վերոհիշյալ հրատարակություններում մասնագիտական տեղեկություններ հաղորդել են որոշ պարբերականներում բովանդակված նյութերի մասին: Բացի այդ՝ «Հանդես Ամսօրեայ»-ում և «Բազմավէպ»-ում միշտ էլ ուշադրության առարկա են եղել պարբերականների գիտական նյութերը, որոնք ընդհանրապես միախառնվել են մասնագիտական այլ կարգի տվյալների հետ, որպես հալագիտական տեղեկություններ (տես Դ խումբ), բայց երբեմն նաև կազմել են առանձին շարքեր: Այդպիսի աշխատություններ են Բ. Գալմաշյանի «Բովանդակությունն ազգային թերթերում» (կամ «Ազգային թերթերու բովանդակությունն էն քաղաածք»), որը լույս է տեսել «Հանդես Ամսօրեայ»-ում 1897 թվականից սկսած երկար ժամանակ և բավականին հետևողական աշխատություն էր՝ «Բազմավէպ»-ը 1897 թվականից սկսել է հրատարակել մասնագիտական այդպիսի անհեղինակ շարքեր, որոնք մեկը մյուսին էին հաջորդում, տարբեր խորագրերով, այսպես՝ «Պարունակությունն ազգային պարբերական թերթից», «Քաղաածք լողաածոց այլ և այլ թերթից», «Քաղաածոց ցանկ ազգային լրագրութեան», «Պարբերական ազգային լողաածոց», և այլն: Ավելի ուշ հանդիպում ենք, օրինակ, «Հանդեսարան հայ պարբերական թերթերում»⁴, նույն ամսագրի «Հանդես հանդիսից» բաժինը, որ մի ժամանակ ազգային, գրական ու գիտական լուրեր էր ամփոփում, 1899 թվականից դառնում է մասնագիտության ու մամուլի տեսության բաժին և այդպես էլ շարունակվում է մինչև այսօր: Վերոհիշյալները և մասնագիտական ուրիշ մանր երկեր⁵, որոնք հրատարակվել են անցյա-

¹ Ա. Բ. Կարենյան, «Անհրաժեշտ հայ պարբերական մամուլի պատմություն», Կո. Ա, Երևան, 1936:
² Մ. Գոտուրյան, «Եզրիդաստայ լրագրութեան քառասունմեայ պատմութիւնը (1893—1903)», Բազմավէպ, 1907, էջ 73—77:—Նույն, «Հայ մամուլը առան և էինք տարուն մէջ 1804—1909», Վենետիկ, 1909: Արտատպել է Բազմավէպ-ից, 1909, էջ 383—398, 413—428, 485—496 և 523—544:—Ն. Գ. Մըմբյան, «Ընդգրկութիւնը թուրքալայերուն մէջ 1840—1900», Արևիկան Մամուլ (Եռամսյա), 1909, էջ 3—20:
³ Գ. Լեոնյան, «Հայոց պարբերական մամուլը: Հիսկատար ցուցակ հայ լրագրութեան սկզբից մինչև, մեր օրերը (1704—1934)», Երևան, 1934: Ավելի վաղ հրատարակել էր՝ «Հայոց պարբերական մամուլը: Գտնածան տեսութիւն սկզբից մինչև մեր օրերը (1704—1894), ընդարձակ ծանօթութիւններով», Ալեքսանդրապոլ, 1896:
⁴ Ռ. Կարապետյան, «Հիսկատար ցուցակ հայերէն լրագրիներու, որոնք կը գտնուին Միտիթարեան Մասնագործներէն մէջ ի Վիննա, 1704—1921», Վիննա, 1924: Արտատպել է Հանդես Ամսօրեայ-ից, 1923, էջ 61—66, 719—720, 413—418, 408—513, 504—508, 688—673. 1923, էջ 90—95, 129—133, 285—289, 380—384 և 565—569:
⁵ Հանդէս Ամսօրեայ-ի 1897—1921 թթ. չափիկների վրա:
⁶ Բազմավէպ, 1897, էջ 48, 90, 144, 192, 240, 296, 332, 400, 466, 508, 564, 613. 1898, էջ 55—118, 118—119, 163—164, 211—216, 239—240, 316, 364, 412, 459—460:
⁷ Բազմավէպ, 1899, էջ 512, 539—560, 609. 1899, էջ 48, 90, 142—143:
⁸ Բազմավէպ, 1899 և 1900 թթ. չափիկների վրա:
⁹ Բազմավէպ, 1902 և 1903 թթ. չափիկների վրա:
¹⁰ Բազմավէպ, 1909, էջ 33—37: Ելած է «չարունակիկ», բայց չի չարունակվել:
¹¹ Օրինակ՝ «Հնդկանուր ցանկ նիթոց յիսնամեայ Բազմավէպաց Ա—Մ, 1843—1893», Վենետիկ, 1899:—Վ. Բունդուցյան (Վ. Գունդուցյան), «Հնդկանուր ցանկ խնդե Ամսօրեայ ուսումնաթերթի 25 տարիներուն (1867—1911)», Հանդէս Ամսօրեայ, 1912, էջ 370—384, 438—448, 500—513 և 566—576: Նույն, «Եթե անուանց և նիթոց (Հանդիսի 25 տարիներուն)», Երև, 1916, էջ 178—190 (չարունակիկ): Գյուլում վարդապետ, «Արարատի 20-ամեայ նիթերի ցանկ», Արարատ, 1918, էջ 181—190 (չարունակիկ): Վերջինի տեսակները լրիվ գտնվում է Օրինակի 9-ում: Մասնագործներում և սպասում է հրատարակության:

լում, արտասահմանյան հայ գիտնականների և գիտական հաստատությունների աշխատանքի արդյունքն են հանգիստանում: Մեզանում Հայկական ՍՍՌ Պետական Գրապալատը խոշոր աշխատանք է կատարել Հայաստանում լույս տեսնող հայ պարբերականների նյութերի մատենագիտություն կազմելու ուղղությամբ՝ պետական պարտադիր օրինակների հիման վրա: Գրապալատը 1938 թվականից սկսել է հրատարակել «Ժուռնալային հոդվածների տարեգիր», որը մինչև այսօր լույս է տեսնում տարեկան չորս անգամ, իսկ 1949 թվականից՝ նաև «Լրագրային հոդվածների տարեգիր», որը լույս է տեսնում տարեկան 12 անգամ: Զգալի է հայ պարբերական մամուլի նյութերի լիակատար մատենագիտություն ունենալու անհրաժեշտությունը: Այս տեսակետից կարելի էր ողջունելի ձեռնարկություն համարել Հովհ. Պետրոսյանի կողմից վերջին տարիներին հրատարակված «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա»-ն, բաղկացած երեք մեծածավալ հատորներից, որոնցից առաջինը ընդգրկում է 1794—1900 թթ. լույս տեսած պարբերականները¹, երկրորդը՝ 1900—1936 թթ. լույս տեսած պարբերականները² (բացառությամբ բոլշևիկյան և սովետական հայ մամուլի), իսկ երրորդը՝ 1902—1934 թթ. հայ բոլշևիկյան և սովետական պարբերականները³: Ճարակույս չկա, որ այդ հատորների երեքվան գալը երկարամյա համբերատար աշխատանք է պահանջել կազմողից, սակայն, ինչպես հայտնի է, այդ աշխատանքի արդյունքը սովետական մամուլում ենթարկվեց ամենախիստ քննադատության՝ անթիվ անճշտությունների, փաստական նյութի աղավաղումների, անձեռնհասության, անբարեխղճության և անպատասխանատվության մեղադրանքներով⁴, որոնց եզրակացությունն այն է, թե հրատարակված հատորները, որպես տեղեկատու աղբյուր, հեռու են գիտական ուսումնասիրությունների համար անհրաժեշտ պահանջները լրացնելուց և թե հայ պարբերական մամուլի նյութերի լիակատար և ճշգրիտ մատենագիտություն ունենալու անհրաժեշտությունը միշտ էլ մնում է:

Դ ԽՈՒՄ. — Այս խմբին են պատկանում այն գործերը, որոնց ծրագիրը եղել է դասավորել ու նկարագրել հայերեն և օտար լեզուներով հրատարակված այն գրքերը, հայկական և օտար պարբերականներում լույս տեսած այն հոդվածները, որոնք հայագիտական բնույթ են կրում: Մատենագիտական այս կարգի գործերի մեջ ժամանակով առաջնությունն ընկնում է Մ. Միանսարյանի «Bibliographia Caucasica et Transcaucasica»-ին⁵, որը լույս տեսավ 1874—1876 թթ. և որի մեջ կովկասյան երկրների և ժողովուրդների շարքում Հայաստանին և հայերին վերաբերող բազմաթիվ հրատարակություններ են նշված հայերեն, ռուսերեն և եվրոպական լեզուներով: Իսկ 1890 թ. Կ. Նոյսնը հրատարակեց 1876—1886 թթ. եվրոպական լեզուներով հրատարակված հայագիտական հրատարակությունների ցուցակը⁶: «Հանդէս Ամսօրեայն» հրատարակման առաջին օրից մինչև այսօր հետամուտ է եղել հայագիտական մատենագիտություն կազմակերպելու: Նրա էջերում մատենագիտական աշխատանքներով

¹ Հովհ. Պետրոսյան, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1794—1900)», առաջաբանով և ծանոթագրություններով, Երևան, 1936:

² Հովհ. Պետրոսյան, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա (1900—1936)», առաջաբանով և ծանոթագրություններով, Երևան, 1937:

³ Հովհ. Պետրոսյան, «Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա: Հայ բոլշևիկյան մամուլը 1902—1930 թթ. սովետական մամուլը 1930—1934 թթ.», Երևան, 1934:

⁴ Խ. Բարսեղյան, Պարտիական Կյանք, 1936, № 11, էջ 87—89: Ա. Բազմյան, Սովետական Վրաստան, 9 հոկտ. 1936 թ., № 238 (8235): Է. Խանգամալյան, Սովետական Գրականություն, 1938, № 6, էջ 155—156: С. Штукан, Коммунист. Ереван, 17 июля 1958 г., № 167 (7334):

⁵ М. Мянсаров, «Bibliographia Caucasica et Transcaucasica. Опыт справочного систематического каталога печатным сочинениям о Кавказе, Закавказьи и племенах, эти края населяющих». Т. I, отделы I и II, С.-Петербург, 1874—1876.

⁶ Կ. Նոյսն, «Եվրոպական լեզուներով գրված գրքեր և յօզուածներ առջը օտրուայ բնթացքում (1876—1896)», Հանդէս Գրականական և Պատմական, գիրք 9, 1890, Կազմված, էջ 1—16:

տասնամյակների ընթացքում հաջորդաբար հանգես են եկել և գալիս են Գ. Գալեմբարյունը¹, Գ. Ֆերհաթյանը², Մ. Հապոզյանը³, Ն. Ակինյանը⁴, Ս. Կոզյանը⁵, Գ. Տեր-Գոգոսյանը⁶, Ի. Աբրյանը⁷ և Վ. Ինզլիզյանը⁸: Այս աշխատանքների ամբողջության մեջ նկատում է միայն մեթոդական միջոցառումների բացակայությունը և ժամանակակից ընդդրված տեղեկությունից որոշ տարիների բացթողումը՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներից սկսած: Ս. Գարոնյանը 1900 թվականին նմուշներ հրատարակեց իր «Մատենախոսութիւն հայկական ըստ օտար լեզուաց» աշխատությունից⁹: Իր տեսակի մեջ ինքնատիպ ու հույսալից այդ գործը, որ դրքերի և հոդվածների մանրակրկիտ ուսումնասիրության վրա հիմնված անկախ ջանք է 28,000 նշաններ էր պարունակում, դժբախտաբար մնաց անտիպ՝ հեղինակի մահվամբ: Ամբողջական ժրգրով կազմված մատենագիտություններ էին նաև Կ. Կաստանյանցի «Հայագիտութիւնն Արևմտեան Եւրոպայում»¹⁰ և Ա. Սայմապլյանի «Bibliographie de l'Arménie»¹¹ երկերը: Նրանցից առաջինը հայագիտության պատմության հետ միասին տալիս էր եվրոպական լեզուներով

¹ Գ. Գալեմբարյան, «Ազգային հրատարակութիւնք 1887 տարւոյ», Հանդէս Ամսօրեայ, 1888, էջ 22—23, 26—27, 62—63 և 127—128: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1888 տարւոյ», անդ, 1889, էջ 261—268: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1889 տարւոյ», անդ, 1890, էջ 180—181 և 257—258: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1890 տարւոյ», անդ, 1891, էջ 183—186 և 214—217: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1891 տարւոյ», անդ, 1892, էջ 208—211, 243—246, 272—273 և 339: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1892 տարւոյ», անդ, 1893, էջ 301—303, 346—348 և 368—369: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1893 տարւոյ», անդ, 1894, էջ 341—346 և 367—372: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1894 և 1895 տարիներու», անդ, 1896, էջ 184—186, 184—188, 216—249, 274—278, 311—314, 348—349 և 374—378: Նույն, «Ազգային հրատարակութիւնք 1896 տարւոյ», անդ, 1897, էջ 311—314, 348—348 և 370—374:

² Գ. Ֆերհաթյան, «Յուզակ եւրոպական-հայկական հրատարակութեանց 1890—1910», Հանդէս Ամսօրեայ, 1911, էջ 88—89, 131—138, 187—197, 316—320, 508—513, 701—704, 766—768. 1912, էջ 233—236, 318—320, 637—640, 692—704, 768—769. 1913, էջ 248—250, 316—320, 381—384, 447—448, 504—512, 703—704. 1914, էջ 61—64, 247—256, 272—284, 444—448, 566—576, 692—704, 748—760: Հրատարակիչ է նաև առանձին՝ Գ. Ֆերհաթյան, «Յուզակ հայագիտական հրատարակութեանց յԵւրոպա (1890—1910)», Վիեննա, 1910:

³ Մ. Հապոզյան, «Մատենագիտական տեղեկութիւններ [1911 տարւոյ]», Հանդէս Ամսօրեայ, 1912, էջ 88—90 և 192—193:

⁴ Ն. Ակինյան, «Մատենագիտական տեղեկութիւններ [1910—1912 տարիներու]», Հանդէս Ամսօրեայ, 1913, էջ 163—163:

⁵ Ս. Կոզյան, «Մատենագիտական տեղեկութիւններ 1921 տարւոյ», Հանդէս Ամսօրեայ, 1922, էջ 66—66, 316—318, 409—413 և 508—509: Նույն, «Մատենագիտական տեղեկութիւններ 1922 տարւոյ», անդ, 1923, էջ 80—89 և 279—281: Նույն, «Մատենագիտական տեղեկութիւններ 1923 տարւոյ», անդ, 1923, էջ 274—277. 1924, էջ 184—189:

⁶ Գ. Տեր-Գոգոսյան, «Մատենագիտութիւն 1928 տարւոյ» (կամ «Մատենագիտական տեղեկութիւններ 1928 տարւոյն համար»), Հանդէս Ամսօրեայ, 1930, էջ 370—376, 404—404, 624—622 և 738—740: Հնգգրկում է նաև որոշ հրատարակություններ նախորդ տարիներից:

⁷ Ի. Աբրյան, «Ծրասէրի տեղեկատու Յուզակ 1930 տարւոյ հայերէն և հայագիտական հրատարակութիւններու», Հանդէս Ամսօրեայ, 1931, էջ 688—676, 686—672, 717—736. 1932, էջ 241—236: Հրատարակիչ է նաև առանձին՝ «Ծրասէրի տեղեկատու Ա տարի 1930: Յուզակ հայերէն և հայագիտական հրատարակութիւններու, որոնք ուզարկուած են 'Հանդէս Ամսօրեայ'-ի խմբագրութեան», Վիեննա, 1931:

⁸ Վ. Ինզլիզյան, «Մատենագիտական տեղեկութիւններ 1936 տարւոյն», Հանդէս Ամսօրեայ, 1936, էջ 446—448. 1936, էջ 109—126: Նույն, «Մատենագիտական տեղեկութիւններ 1935 տարւոյն», անդ, 1936, էջ 411—446: Նույն, «Մատենագիտական տեղեկութիւններ (1936—1936)», անդ, 1936, էջ 267—278: Նույն, «Մատենագիտական տեղեկութիւններ 1936 տարւոյն», անդ, 1950, էջ 111—124 և 249—252:

⁹ Ս. Գարոնյան, «Bibliographia Armentacæ. Մատենախոսութիւն հայկական ըստ օտար լեզուաց», այն է՝ Յակ մեկնայն մատենից և յօգուածաց որք նառն յօտար լեզուս գհայոց և գհայկականաց ի սկզբանէ անտի մինչև յիլո 1800 տմին», Բահաւեր, 1800, էջ 83—96 և 174—180:

¹⁰ Կ. Կաստանյանց, «Հայագիտութիւնն Արեւմտեան Եւրոպայում: Համառոտ տեսութիւն և գրացուցակ», Թիֆլիս, 1910:

¹¹ A. Salmasian. «Bibliographie de l'Arménie», Paris, 1946.

լույս տեսած հայագիտական հրատարակությունների մի լավ մշակված ցուցակ, որի սպառու-
թյունը, սակայն, եղև է շատ անխնամ, իսկ երկրորդը գիտական օգտագործման համար
համարելի է սակավ պիտանի, որովհետև կազմված է մեծ մասամբ ոչ թե զրքերի ուղղակի
նկարագրության հիման վրա, այլ կողմնակի տեղեկությունների Մատենագիտական արժեքավոր,
բայց մասնակի, բնութի կրող գործերից պետք է հիշատակել Հայկական ՍՍՌ Գիտություն-
ների Ակադեմիայի հրատարակությունների մատենագիտությունը¹, Ն. Ճ. Սիրունու երկու
գործերը՝ 1920—1940 թթ. Ռուսիայում լույս տեսած հայագիտական հրատարակությունների
մատենագիտությունը² և 1936—1941 թթ. հայերեն և օտար լեզուներով լույս տեսած հայա-
գիտական հրատարակությունների ցուցակը³, Ն. Մ. Գինեայի մատենագիտական տեսությունը
հայագիտական 25 աշխատությունների մասին⁴ և այլն: Ավելացնենք, որ շեանդես Ամսօրհայ-ից
բացի նաև մեր մյուս բոլոր հանդեսները և հայագիտական պարբերականները (Երազմա-
վէպ, Արարատ, Սիոն) ԵՏԿԵԿԳԻՐ ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի, Վատմա-Բա-
նասիրական Հանդես, «Revue des Etudes Arméniennes», «Bulletin Arménologique», և այլն)
ցննադատության բաժիններում և խմբագրությունների կողմից ստացված հրատարակու-
նների ցուցակներում մատենագիտական ճոխ տեղեկություններ են ամփոփում: Հայագիտական
մատենագիտության բաժին է կազմակերպում նաև Վատմա-Բանասիրական Հանդեսը:

Ե խումբ. — Այս խմբին է պատկանում ձեռագրերի մատենագիտությունը, այն է՝ դաս-
վորել և նկարագրել մատենադարաններում և կամ մասնավորների մոտ գտնվող հայերեն ձե-
ռագրերը՝ գիտական մի որոշ մեթոդով, այսինքն՝ կազմել ձեռագրացուցակներ (ԵՁԿԿԳԳԳԳ
ցուցակ-ներ), նաև դասավորել ու նկարագրել ձեռագրական նյութեր՝ մասնագիտական կամ
թեմատիկ ծրագրով, ինչպես և կազմել ձեռագրերի հիշատակարանների ժողովածուներ՝ առ-
վել կամ նվազ նկարագրական տեղեկություններ տալով այն ձեռագրերի մասին, որոնցից
քաղված են հիշատակարանները: Սակայն ձեռագրացուցակ (ԵՁԿԿԳԳԳԳ ցուցակ) հասկա-
ցողության ճշտումը վերահիշյալ իմաստով՝ մեզ մոտ հանդես է գալիս միայն 1880-ական և
90-ական թվականներից, երբ Ն. Քարամյանցի, Հ. Տաշյանի և ուրիշների կողմից սկսում են
մշակվել հայերեն ձեռագրերի գիտական նկարագրության որոշ ձևեր: Մինչև այդ՝ հայկական
ձեռագրացուցակների պատմությունը միակերպության գաղափար կամ առաջնորդող սկզբունք
չի ճանաչում: Մի տեղ գտնում ենք ձեռագրերի պարզ ցանկում կամ անվանական հիշատա-
կում, և կամ նաև ձեռագրերի թերթերի քանակի և նյութի (մագաղաթ, թղթ, և այլն)
նշում, մի այլ տեղ՝ ձեռագրերի բովանդակության նշում, և կամ՝ գրանցում ու թվարկում
այն ձեռագրերի, որոնք այսինչ բնագավառի նյութեր են պարունակում, մի ուրիշ տեղ՝ մի-
այն հիշատակարանների նշում, և շատ ավելի հաճախ՝ պատահական նախընտրությամբ այս
տեղեկություններից մի քանիսը իրար խառնված, և այլն: Ձեռագրերի նկարագրության նման-
որինակ աշխատանքներ հետագայում էլ են կատարվել և կատարվում են, բայց այդ բոլորն
իրենց թերություններով հանդերձ, հանդիսանում են հայկական ձեռագրացուցակների պատ-
մության մաս կազմող արժեքավոր գործեր, քանի որ նրանցում նկարագրված ձեռագրերից
շատերն արդեն կորած են: Մասնավորելով խոսքը հիշատակարանների ժողովածուների վրա,

¹ «Академия Наук Армянской ССР. Центральная библиотека. Библиография изданий Академии Наук Армянской ССР. Книги и статьи 1935—1949». Ереван, 1950.— «Академия Наук Армянской ССР. Центральная библиотека. Библиография изданий Армфана и Академии Наук Армянской ССР 1936—1956 гг.». Ереван, 1957.

² H. Dj. Siruni, „Bibliografia studiilor armonești din România 1920—1940“, București, 1940. (Extras din revista Archiva Românească, t. IV).

³ H. Dj. Siruni, „Vitrina cărților. Bibliografia cărților apărute între 1936—1941“, Anl. anuar de cultură armeană 1941, București, 1941, p. 498—501.

⁴ N. M. Ohinea, „Carcețind cărțile și periodicele“, Ibidem, p. 477—497.

որքան էլ մեր օրերում այդ հրատարակություններն արդեն ստացել են գիտական ուրույն նշանակություն՝ որպես պատմական աղբյուրների հրատարակություն, այնուամենայնիվ նրանք չեն դադարում վերջին հաշիվով ձեռագրացուցակների շարքին պատկանելուց: Ոչ ոք չի կարող տարակուսել, որ, օրինակ, Գ. Սրվանձտյանցի «Թորոս աղբար»-ում ձեռագրերի մասին ամփոփված տեղեկությունները, որոնք հիշատակարանների արտագրությունից այն կողմը չեն անցնում, ձեռագրացուցակներ են: Նույն մտեցմամբ պետք է դիտել նաև հիշատակարանների այժմ հրատարակվող ժողովածուները:

Հայկական ձեռագրացուցակների նախադասումությունը պատկանում է միջին դարերին, երբ վանական դրողարաններում և մասնավորների մոտ հավաքված գրչագիր մատյանների ցուցակներ էին կազմվում: ԺԹ և Ի դարերի ընթացքում ձեռագրերի ցուցակագրման գործը մեծ ծավալ է ստացել և մատենագիտության ընդհանուրում կատարված աշխատանքների մեջ ամենից արդյունավետն է եղել: Կազմվել և հրատարակվել են էջմիածնի հինավուրց մատենադարանի, Վիննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Մյունխենի, Փարիզի, Լոնդոնի և այլ վայրերի հայերեն ձեռագրերի ամբողջական և կամ մասնակի ցուցակները, որով գիտությունն այս կամ այն չափով մատչելի է դարձել մատենադարանների խորշերում մնացած հայերեն հազարավոր ձեռագրերի բովանդակությունը. իսկ Նոր-Ջուլայի, Ջմաաի, Օքսֆորդի, և մի շարք ուրիշ վայրերի հայերեն ձեռագրերի ցուցակները դեռ մնում են անտիպ: Լ. Մելիքսեթ-Քեկը 1939 թ. հրատարակեց հայերեն ձեռագրացուցակների մի ընդհանուր ցուցակ¹, որտեղ գրանցված է 84 անուն հրատարակություն, իսկ Հ. Ճ. Սիրունին՝ 1957 թ. նույնպիսի մի օրիշ ցուցակ², որտեղ գրանցված է 83 անուն հրատարակություն: Ձեռագրերի մատենագիտության գծով մինչև օրս տարված աշխատանքների պատկերը համեմատաբար լրիվ ունենալու համար մենք անհրաժեշտ ենք համարել կազմել ձեռագրացուցակների մի ընդհանուր նոր ցուցակ՝ ընդգրկելով ԺԹ և Ի դարերի ընթացքում պատրաստված ապագիր և անտիպ ցուցակները: Մյուս կողմից՝ նկատի ունենալով, որ ձեռագրացուցակները մեծ նշանակություն են ներկայացնում բանասիրական աշխատանքների համար ընդհանրապես, իսկ մեր շահիկական մատենագիտության համար մասնավորապես, մենք հայկական ձեռագրացուցակների ընդհանուր ցուցակը հրատարակում ենք մեր ներածության առընթեր³:

Հայկական մատենագիտության նոր ջրջանը ներկայացնող վերոհիշյալ Ա—Ծ խմբերի աշխատանքները բավականին հարուստ նյութ են կուտակել: Իհարկե ավելորդ կլիներ խոսել այն մասին, որ կատարված աշխատանքների մեջ սկզբունքային կամ գիտական միատեսակություն չկա, նույնիսկ գիտության պահանջներին համապատասխանելու տեսակետից՝ մակարդակային հավասարություն: Դա պայմանների արդյունքն է, այն պայմանների, որոնց մեջ անել ու գործել են մեր մատենագետ-հեղինակները: Մատենագիտական աշխատանքների համար թելադրող ուղեկավարող գիտական կենտրոնի բացակայություն հետևանքով ամեն մեկն աշխատել է ըստ իր հասկացողության մի լավ գործ կատարել և կատարել է, յուրացանչյուրն աշխատել է մի քար դնել կառուցվող շենքի վրա, և դրա շնորհիվ մենք այսօր ունենք, համենայն դեպս, որոշ չափով կուտակված արժեքավոր նյութ, որի վրա արդեն կարելի է հենվել՝ հայկական մատենագիտության հետագա աշխատանքների համար: Դա իսկ արժանի է մեծ գնահատության: Իսկ

1 Ցե'օ վերեւ, էջ XXI:
 2 Լ. Մելիքսեթ-Քեկ, Շնութեր հայերեն ձեռագրացուցակների բերիւղը-Փիտայի համար, Քրիիտի, 1939):
 3 H. Dj Slrouni, „Les manuscrits arméniens. Données bibliographiques“, հետեյալ հրատարակության մեջ. „Studia et Acta Orientalia“, t. I, Bucureşti, 1957, p. 267—269.
 4 Ներկա հատր, էջ LXXVII—XCII:
 Մեր աշխատության մեջ մատենագրական անտիպ նյութերը նշված են ուղղակի ձեռագրերի կառուցով, օրինակ՝ Շնիկոսիտայի-Անթիլիտայի Ան. Պ Յ: Ընթերցողը մեր ընդհանուր ցուցակի միջոցով կգտնի թե նիկոսիտայի ձեռագրերի ցուցակը ո՞րտեղ է հրատարակված:

հետագա աշխատանքները պետք է գնան չորս ուղղութիւնք. առաջին՝ կազմել հայ տպագիր գրքի լիակատար մատենագիտութուն, երկրորդ՝ կազմել հայադարբերական մամուլի բովանդակութեան լիակատար մատենագիտութիւն, երրորդ՝ կազմել հայագիտական լիակատար մատենագիտութիւն և չորրորդ՝ իր լրութեան հասցնել ձեռագրացուցակների հրատարակութեան գործը:



Նախկինում կատարված մատենագիտական աշխատանքները բոլոր դեպքերում նախադրելիներ են հանդիսանում մատենագիտական ամեն մի նոր աշխատութեան համար և այս կամ այն չափով օգտագործվում են անպայման: Այսպես և մեր շահակական մատենագիտութիւնը իր հարուստ նախադրելիներն ունի հարկական մատենագիտութեան պատմութեան միջնադրան և մանապէս նոր շրջանի տշխատանքների մեջ: Այդ պատճառով էլ մենք շնացինք սեղմ գծերի մեջ տալ մեր նախորդների կատարած աշխատանքների պատկերը, որպէսզի նախ երևա, թե ինչ է արվել անցյալում, և հետո՝ մեր բարոյական պարտքը հատուցած լինենք գիտութեան այդ վաստակավորներին:

Մենք հիշատակել ենք ԺԹ և Ի դարերի մատենագիտական միայն այն աշխատութիւնները, որոնք վերաբերում են հայ մատենագրութեանն ու հայագիտութեանը կամ ըզբափում են այդ բնագավառները, որովհետև դա էր համապատասխանում մեր ներկա աշխատութեան բնույթին:

Իրոք, ինչպես ասել ենք արդեն, մեր խնդիրն է հետազոտել հայ մատենագրութեան անդաստանը, աղբյուրագիտական հարստութիւնների այդ գանձարանը:

Հայագիտական ուսումնասիրութիւնների հետագա զարգացման նախապայմանն, անտարակույս, հայկական աղբյուրների մանրակրկիտ հետազոտութեան և գիտականորեն ճիշտ դասակարգման վրա հիմնված մատենագիտութիւն կազմելն է: Այդ պատճառով մենք աշխատել ենք ի հայտ բերել Ծ-ԺԸ դարերի հայ ինքնուրույն ու թարգմանական գրականութեան տպագիր ու անտիպ հուշարձանները՝ բոլոր բնագավառների վերաբերյալ (պատմութիւն, աշխարհագրութիւն, փիլիսոփայութիւն, վարքագրութիւն, վկայաբանութիւններ, զեղարվեստական գրականութիւն, և այլն), այդ նյութերը գիտահետազոտական որոշ մեթոդով մատենագիտական մշակման ենթարկել և դասավորել մի այնպիսի սխեմայով, որը համապատասխան լինի գիտական աշխատանքների ժամանակակից պահանջներին:

Մեր շահակական մատենագիտութեան առարկան են կազմում, ուրեմն, Ծ-ԺԸ դարերի ընթացքում կուտակված մատենագրական նյութերը, որոնք մասամբ տպագրված են առանձին գրքերով և կամ պարբերական մամուլում, իսկ մեծ մասամբ դեռ անտիպ են ու գտնվում են հայերեն ձեռագրերում, որոնք ընդհանուր թիվը ամբողջ աշխարհում ներկայումս համարվում է մոտ 25,000: Այդ նյութերը երբեք իրենցից ներկայացնում են մեծածավալ ու փոքրածավալ առանձին հատորներ՝ այս կամ այն բովանդակութեամբ, իսկ մեծ մասամբ՝ տարբեր բովանդակութիւն ունեցող մանր բնագրեր, որոնք ամփոփված են զանազան ժողովածուներում (Քարոզգրքեր, Հարանց վարքեր, Ծառընտիրներ, Հայսմավուրքներ և այլն):

Մենք մեր առարկային մոտեցել ենք ընդգրկված նյութերի աղբյուրագիտական և բնագրագիտական նշանակութիւնը բացահայտելու տեսանկյունից և դրան համապատասխան ստեղծել ենք աշխատանքի մեթոդ ու սխեմա: Ամենից առաջ հարկ էր գտնել ու ցույց տալ, թե հայ մատենագրութեան մեջ ի՞նչ գոյութիւն ունի որպէս բնագրային միավոր և որոշել այդ միավորներից յուրաքանչյուրի տեղը, ըստ որում բավական չէր նշել, թե այս կամ այն հեղինակին կամ թեմային պատկանող նյութերն ամփոփված են այնինչ տպագիր կամ ձեռագիր հատորում (որինակ՝ Առաջել Սյունեցու ճառերը Սրեանի Պետ. Մատենադարանի № 7584, № 2229 և այլ ձեռագրերում), այլ պետք էր հրապարակ հանել բնագրային ամեն մի միավորը, նկարագրել այդ, կուրս բերել այն բոլոր գծերը, որոնք բնորոշում են նրա աղբյուրագիտական և բնագրագիտական յուրահատկութիւնները: Մատենագիտական նախընթաց աշխատութիւն-

ների մեջ անշուշտ կարելի է գտնել, օրինակ, Անանիա Շիրակացու անունը, բայց նրանցում ցույց չի տրված Շիրակացու երկրից լուրաքանչլուրի ուրուխ դեմքը:

Բնագրերի ինքնությունն արտահայտող առաջին հատկանիշը նրանց վերնագիրն է, ուստի և մենք վերնագրերը նշել ենք լրիվ, սակայն միևնույն բնագրի տարբեր ընդօրինակությունների միջև վերնագրային տվյալները շատ են տարբերվում: Օրինակ՝ «Թրասաք ոգեշահք վասն զղջման [և] արտասուաց խորագրված ճառը վերնագրային բազմաթիվ ալլազանություններ ունի, և դրա հետ միասին՝ եթե որոշ օրինակներում հեղինակի անուն չի կրում, մի շարք օրինակներում վերագրվում է Անանիա Եսուրք և ընտրեալ վարդապետին», Անանիա Էռզնաք նըլաստ իմաստասէրին» կամ «Էռզնաք վարդապետին», Անանիա Նարեկացուն, Անանիա Շիրակացուն և նույնիսկ Գրիգոր Նարեկացուն (տես ներկա հատոր, էջ 789—791, § 6), Այսպես նաև՝ «Վասն խոնարհութեան» ճառը եթե որոշ օրինակներում վերագրվում է ո՞նչ Անանիա Երանելի Եսուրք վարդապետին» և կամ Անանիա Շիրակացուն, ուրիշ օրինակներում վերագրվում է Գրիգոր Լուսավորչին (էջ 302—303, § 8), և այլն: Այս պատճառով մենք նշել ենք վերնագրային գոնե հիմնական տարբերակները՝ որպես բնագրերի ինքնության խնդրի հետ կապված պայմաններից մեկը:

Բնագրերի ինքնությունն արտահայտող երկրորդ հատկանիշը նրանց սկզբնատողն է, և մենք, վերնագրերից հետո, նշել ենք և սկզբնատողները (բնագրի սկզբի մեկ կամ մի քանի տողերը): Պետք է նկատի ունենալ, որ միջնադարյան որևէ բնագրի ինքնությունը պարզելու տեսակետից նրա սկզբնատողը շատ ավելի խոշոր նշանակություն ունի, քան նրա վերնագիրը, որովհետև սկզբնատողը շատ ավելի սակավ են փոփոխությունների ենթարկվում: Թվական հարաբերությամբ բացատրելով միևնույն բնագրի տարբեր օրինակները միջև եթե վերնագիրը տասը տեսակի տարբերություն է տալիս, ապա սկզբնավորությունը արձակ բնագրերում հազիվ թե երեք կամ չորս տարբերություն է տալիս, իսկ չափածոներում՝ ավելի նվազ: Սա բանասիրական աշխատանքների բնագավառում այնքան հայտնի իրողություն է, որ, օրինակ, հունական կամ լատինական գրականության պատմությանը նվիրված ցնձական աշխատություններում բնագրերի ճանաչման ու որոնման համար կազմում են ոչ թե վերնագրերի ցանկեր, այլ սկզբնատողերի: Հաշվի առնելով այս հույժ կարևոր հանգամանքը, մենք որևէ բնագրի տարբեր օրինակները նշելիս, խնամքով նշանակել ենք նաև սկզբնատողերի բոլոր տարբերությունները: Այդ նշանակում է, որ տարբեր սկզբնատողեր ունեցող մի շարք բնագրեր մեր աշխատության մեջ հավաքվում են մի տեղ, եթե նրանք ինքնությամբ նույն բնագիրն են: Օրինակ՝ եթե ձեռագրերում պատահում են ընդ աստուածաբան սիրելի, «Ջրանն վասն սրոյ աղաչեցեր», «Ջրանն զոր պատուիրեցեր», «Արդ շնորհ արտասուացն», «Արտասուան սիրոյ ծնունդ է» սկզբնատողերով ճառեր, սկզբնատողերի ցանկի միջոցով գտնում ենք, որ այդ բոլորը ուրիշ բան չէ, բայց եթե «Թրասաք ոգեշահք վասն զղջման [և] արտասուաց խորագիրը կրող բնագիրը՝ սկզբնատողերի տարբերություններով (էջ 789—791), Այսպես նաև՝ Երեւանի Պետ. Մատենադարանի № 9098 ձեռագրում ունենք «Այս է նեոան պատմութիւն» խորագրով մի բնագիր, որի սկզբնատողն է՝ «Եթանժամ թագաւորեսցէ մեծն Կոստանդիանոս». սկզբնատողերի ցանկի միջոցով գտնում ենք, որ այս բնագիրը նույնն է «Ազգադոնի անյաղթ փիլիսոփայի Աթենացու ասացեալ վասն բարի ժամանակին» բնագրի (էջ 145, տող 32) հետ: Այս պարագան նաև նշանակում է, որ սկզբնատողերի միջոցով կարելի է գտնել բնորոշ խորագիր չունեցող կամ բոլորովին անխորագիր բնագրերի հեղինակներին, կամ գտնել այն տեղերը, ուր տրված է տվյալ բնագրի նկարագրությունը:

Բնագրերի ինքնության հարցի հետ է կապվում նաև նրանց տարբեր խմբագրությունների որոշումը: Համեմատելով և ուսումնասիրելով մատենագրական բնագրերի տպագիր և անտիպ օրինակներն իրար հետ՝ պարզվում է, որ միևնույն բնագիրը հաճախ ունի մի քանի տարբեր խմբագրություններ: Թե պատմական, թե կրոնական-գովաճարական և թե ալլազան կարգի գրվածքները ժամանակի ընթացքում հաճախ խմբագրման են ենթարկվել ըստ պահան-

չի ներկա հատորում կարելի է, օրինակի համար, տեսնել, որ գոյություն ունեն Անանիա Սանահնեցու (Ընդդէմ երկաթնակաց աշխատութեան երեք տարբեր խմբագրութիւններ (էջ 777—782), Ալեքսիանոս Կասապոր Աղբատի պատմութեան ութ խմբագրութիւններ (էջ 407—410), և այլն: Աղբուրագիտական և բնագրագիտական աշխատանքների մեջ այս հանգամանքը բանասերների ուշադրութեան առարկա է դառնում միշտ, որովհետև խմբագրութիւնների ճշտումն ու դասավորումն ուղղութիւն է ապիս բնագրերի զարգացման ուսումնասիրութեանը: Որևէ բնագրի յաւաքանչյուր խմբագրութիւնը ինքնին մի նոր՝ ինքնուրույն բնագիր է և ալդպես էլ հաշիւի է առնված մեր կողմից: Խմբագրութիւնների արտացոլն ճանաչելութեան ու տարբերակման գործում թեև բնագրերի վերնագրերը շատ սակավ են օգնում, և հաճախ չեն էլ օգնում, բայց նրանց սկզբնատողերը մեծ դեր են խաղում: Սկզբնատողերի միջոցով մեր աշխատութեան մեջ կարելի է գտնել, թե տվյալ բնագիրը բնագրային ինչպիսի կապակցութիւնների մեջ է գտնվում:

Մեր աշխատութեան բնագրագիտական բնույթը պահանջում էր, որ մենք շեշտը դնեինք բնագրերի ինքնութեան կամ անհատականութեան հանգամանքի վրա: Ելնելով դրանից՝ մենք տարբերել ենք բնագիրը նրա հրատարակութեանից և հրատարակութիւնը նշել ենք լրիկ որպես հասցե, որտեղ կարելի է գտնել բնագիրը (հմմտ. էջ 1109, տող 37): Այդ պատճառով եթե մենք լրիկ ենք նշել բնագրերի վերնագրերն ու սկզբնատողերը, բավական ենք համարել նշել հրատարակութիւնների միայն էական մասերը: Այս կարգից բացառութիւն են կազմել առաջին՝ մի շարք հայտնի գործեր, որոնք իրենց հրատարակութիւններով են ավելի ճանաչելի, ինչպես Ագաթանգեղոսը և Ալբրեքսարանները (էջ 152—150 և 697—708), երկրորդ՝ գործեր, որոնց նկարագրութիւնը վերոհիշյալ կարգով կատարելը հնարավոր չէր տեխնիկապես, ուստի՝ նկարագրված են ըստ հրատարակութեան, առանձին նշելով նրանց սկզբնատողերը՝ ինչպես Աբրահամ Աստապատեցու շնորհոյան սրբոյ աթոռոյն էլմիածնիս-ն (էջ 94, տող 3), և երրորդ՝ գործեր, որ մենք անձամբ չենք տեսել և ուսումնասիրել, հետևարար նրանց նկարագրութիւնը հնարավոր չէր նշել այլ կերպ, քան հրատարակութեամբ, ինչպես նաև Աբրահամ Աստապատեցու շնորհոյան սրբոյ աթոռոյն էլմիածնիս-ն (էջ 93, տող 36):

Վերոհիշյալ հանգամանքներով, ինչպես և բնագրերի նկարագրութեանը կցված լրացուցիչ մի շարք այլ տեղեկութիւններով (հիշատակարաններ, որոնք բնագրերի պատմութեանը և կամ թարգմանութեանն են վերաբերում, նրանց բավանդակութեան արտացոլող ցանկերը, միևնույն բնագրի գոյություն ունեցող տպագիր և անտպ գրքերի համատեղ նշումը, թարգմանական երկերի համեմատութեան համար հունական, ասորական և ուրիշ սկզբնագրերի նշումը, և այլն) մեր աշխատութիւնը զրկված է ընդգրկված մատենագրական նյութերի աղբուրագիտական ու բնագրագիտական նշանակութիւնը բացահայտելու ուղղութեան վրա:

Շաղկապան մատենագիտութեան աղբուրներն այլազան են: Մատենագրական նյութերը, ինչպես ասել ենք, երբեմն կազմում են առանձին հատորներ, իսկ մեծ մասամբ գտնվում են այնպիսի հատորների մեջ, որոնք տարբեր նյութերի խառնուրդ են, կամ մի որոշ բնագրավառի զանազան նյութեր պարունակող ժողովածուներ: Այսպիսի հատորներում գտնվող բնագրերը միտումի դուրս են բերվել: Ի դեպ՝ առանձին բնագրերի տարբեր խմբագրութիւններ ունենալու երևույթը մասամբ կապված է այսպիսի ժողովածուների հետ, որովհետև ըզանդակութեամբ նման ժողովածուները հաճախ վերակառուցվել ու վերախմբագրվել են:

¹ Էջերի պատմութեան մեջ թույլ չի ապիս անձամբ, օրինակ, համապատասխան խմբագրութիւնների վրա, որոնց տարբերման նպատակով ինչպես հայտնի է, բանասերների մաս կան տարակարծութիւններ: Ասեմք միայն այդպէս, որ մեր աշխատանքի կապակցութեամբ մենք զանազանել ենք հետևյալ խմբագրութիւնները. ու Յեր իբրայել Խաչենցու (մեռ. 1340 թ.) խմբագրութիւնը. բ. Կիրակոս Արենցու խմբագրութիւնը (կազմված 1383 թ.— Երևանի Գեո. Մատ. ձեռ. № 7433). գ. Գրիգոր Նյախեցի Մերնեցի (մեռ. 1426 թ.) խմբագրութիւնը. գ. Անանուհի համառոտ խմբագրութիւնը՝ շնորհոյան սրբոյ աթոռոյն էլմիածնիս-ն (Երևանի Գեո. Մատ. ձեռ. № 3683; Ընդգրկնակութիւն 1310 թվականի):

Նյութերի որոնման ու հայտնաբերման համար մենք օգտագործել ենք ա) 1812 թվականից մինչև մեր օրերն առանձին գրքերով հրատարակված մատենագրական նյութերը: բ) ԺԹ և Ի դարերի ընթացքում քննական ուսումնասիրությունների մեջ հրատարակված մատենագրական նյութերը: գ) Հայ և օտար պարբերական մամուլում հրատարակված մատենագրական նյութերը: դ) Հրատարակված և անտիպ ձեռագրացուցակների նյութերը: Այս միջոցների օգտագործման շնորհիվ մեր աշխատության մեջ ներկայացված մատենագրական նյութերի մի զգալի մասը առաջին անգամ է մտնում հայ մատենագրության պատմության մեջ: Մենք բնագրերին կցել ենք անհրաժեշտ տեղեկություններ ու զիտականորեն բնորոշող ժանոթագրություններ և նշել՝ նրանց վերաբերող ուսումնասիրություններ:



«Հայկական մատենագիտության» հոդվածները կազմված են հեղինակալին և առարկայական (կամ թեմատիկ) սկզբունքով ու դասավորված՝ այբբենական կարգով: Յուրաքանչյուր հոդված բաղկացած է հետևյալ երեք հիմնական մասերից:

Ա. Տեղեկատու բաժին. — Այստեղ տրվում են տվյալ հեղինակին ու նրա երկերին վերաբերող տեղեկություններ ու գնահատական: Կարևոր դեպքերում բերվում են նաև այլ երկերի մասին բանասիրության մեջ գոյություն ունեցող կարծիքները: Նույնն է արվում և առարկայական հոդվածներում:

Բ. Բնագրերի բաժին. — Այս բաժինը կարող է ունենալ բարդ կառուցվածք (ենթաբաժիններ) այն դեպքում, երբ նյութերը ըստ բովանդակության որոշ խմբավորումների են ենթարկված: օրինակ՝ Անանիա Շիրակացուն նվիրված հոդվածի բնագրերի բաժնում (էջ 734—760) կան այսպիսի ենթաբաժիններ՝ «Ինքնակենսագրություն», «Թվաքանական երկեր», «Չփագրտական երկեր», «Տոմարագիտական երկեր», «Տիեզերագիտական երկեր», «Չատմական երկ», «Ալլևալլ հրկեր» և «Անանիա Շիրակացու մասին (Մատենագրական նյութեր)»: Իսկ, ընդհակառակն, որոշ հոդվածներում այսպիսի խմբավորումներ ու ենթաբաժիններ չկան, ինչպես՝ Ամիր-Տովաթ Ամասիացուն նվիրված հոդվածում (էջ 651—667): Երկու դեպքում էլ բնագրերի բաժնում հեղինակի երկերը կամ առարկալին վերաբերող բնագրերը համարակալված են հերթականորեն, առանձին-առանձին: Այդ համարները մենք անվանում ենք Տ-ներ:

Տվյալ Տ-ում գտնվող բնագրի հիմնական նկարագրությունը հետևյալ մասերից է բաղկանում. ա. բնագրի վեցագիրը (արամյան տառերով). բ. Բնագրի սկզբնատողը (արամյան տառերով, չակերտների մեջ). գ. Բնագրի գտնված տեղը (այսինչ հրատարակության մեջ կամ պարբերականում, այնինչ ձեռագրում և այլն):

Նույն Տ-ում տվյալ բնագրի տարբեր հրատարակությունները նշված են առանձին-առանձին, ժամանակագրական կարգով, և հաճախ յուրաքանչյուր հրատարակության բնագրագիտական առանձնահատկությունների մասին տրված են տեղեկություններ, օրինակ՝ թե որ ձեռագրերի հիման վրա է հրատարակված կամ թե նախորդ հրատարակության հետ համեմատած ինչ տարբերություն է ներկայացնում: Տպագրություններից հետո նշված են բնագրի ձեռագիր օրինակները: Եթե բնագիրն անտիպ է, հիմնական նկարագրության համար մենք վերցրել ենք ձեռագրերից որևէ մի ընտիր օրինակ, նախընտրությունը տալով Երևանի Գեո. Մատենադարանի ձեռագրերին: Բնագրերից հաճախ բերված են հիշատակարանային մասերը, ինչպես նաև նրանց բովանդակության ցանկերը, եթե կան: Բնագրերի հրատարակություններից ու ձեռագրերից հետո նշված են նրանց հայերեն այխարհաբար և կամ ուրիշ լեզուներով թարգմանությունները, իսկ բոլորից հետո, եթե բնագիրը թարգմանական է, նշված է նրա սկզբնագրի (հունարեն, ասորերեն և այլն), և կամ համեմատելի ուրիշ բնագրերի վերաբերյալ մատենագիտական տեղեկություններ: Այս կարգով է կազմված յուրաքանչյուր Տ:

Երկու կամ ավելի խմբագրություն ունեցող բնագրերի նշումը կատարված է հետևյալ ձևով: Եթե բնագրերի բաժինը կամ ենթաբաժինը տարբեր բնագրերի խմբավորում է ներ-

կայացնում և հետևաբար ամեն մի բնագրին մեկ է հատկացված, այդ դեպքում միևնույն բնագրի տարրեր խմբագրությունները գտնվում են միևնույն է-ում՝ 1ա, 1բ, 1գ, կամ 3ա, 2բ, 2գ, և այլն տարրերումով (օրինակ՝ էջ 340, տող 12 և 28). իսկ եթե բնագրերի բաժնում կամ ենթաբաժնում միևնույն բնագրի տարրեր խմբագրություններն են միասին ամփոփված, այդ դեպքում լուրջաբանչյուր խմբագրություն մի նոր է-ով է տրվում (օրինակ՝ էջ 280, տող 10—էջ 291, տող 11. նաև էջ 601, տող 36—էջ 692, տող 44):

Բնագրերի բաժնի կազմական բարդության հետ են կապված պարամանական նշանները,

□ նշանը ցույց է տալիս, որ տրվող տեղեկությունը, դիտողությունը, ճշտումը կամ լրացումը վերաբերում է ոչ թե անմիջապես նախորդող նշմանը, այլ ամբողջ է-ին (օրինակ՝ էջ 28, տող 17) □ նշանը նկատի ունի ամբողջ 3-րդ է-ը՝ տող 3—16):

Եթե ունենք բարդ է-ներ (1ա, 1բ, 1գ, և այլն) □ նշանը վերաբերում է նրանցից միայն վերջինին (օրինակ՝ էջ 333, տող 22 □ նշանը վերաբերում է միայն 3գ է-ին), իսկ ○ նշանը ցույց է տալիս, որ տեղեկությունը վերաբերում է բարդ է-ների ամբողջությանը (օրինակ՝ էջ 333, տող 36 ○ նշանը վերաբերում է 3ա, 3բ, 3գ և 3դ է-ներին միասնաբար):

⊠ նշանը ցույց է տալիս, որ տրվող տեղեկությունը, դիտողությունը, ճշտումը կամ լրացումը վերաբերում է ոչ թե անմիջապես նախորդող է-ին, այլ ամբողջ ենթաբաժնին, և կամ բաժնին՝ եթե ենթաբաժիններ չկան (օրինակ՝ էջ 483, տող 10 ⊠ նշանն ընդգրկում է ամբողջ ԵԱ.—Վկայաբանությունն ենթաբաժինը):

≈ նշանը ցույց է տալիս, որ տրվող տեղեկությունը, դիտողությունը, ճշտումը կամ լրացումը վերաբերում է ոչ թե նախորդող ենթաբաժնին, այլ բնագրերի ամբողջ բաժնին (օրինակ՝ էջ 400, տող 39 ≈ նշանն ընդգրկում է նախորդող երեք ենթաբաժինները միասին):

Գ. Գրակաճուրջան բաժին. Այստեղ նշված են ավյալ մատենագրին կամ առարկային վերաբերող ուսումնասիրությունները՝ Բանասիրական նշանակություն ունեցող նյութերի կաղապարումը (Ազգաթանգեղոս, և այլն) տրված է նաև նրանց վերաբերող կարևոր ուսումնասիրությունների համառոտ վերլուծությունը՝ Գրականությունը դասավորված է հեղինակների անվան այբբենական կարգով, իսկ լուրջաբանչյուր հեղինակի աշխատությունները նրա անվան տակ դասավորված են ժամանակագրական կարգով։ Քարգամանական բնագրերի վերաբերյալ նշված են միայն այն ուսումնասիրությունները, որոնք խոսում են հայերեն Քարգամանության մասին։ Գրքերի անվանաթերթերը լրիվ չեն բերված, այլ նշված են միայն խորագրի էական մասը, տպագրության վայրը և տարեթիվը։ Այս կամ այն ուսումնասիրության վերաբերող գրախոսականը դրված է զրախոսված աշխատության կից։

Այս ընդհանուր կասուցվածքի հետ կապված են հետևյալ լրացուցիչ պարագաները

Եթե երկու կամ ավելի հեղինակներ միևնույն անուն-մականունն են կրում, այդ դեպքում հոդվածների վերնագրերին ավելացված են [I], [II], [III] տարբերանշերը (օրինակ՝ Ազարիա Ջուղայեցի Տոմարգետ, էջ 272 և 277):

Եթե վերնագրում նշված անունը տարբերակներ ունի, տարբերակները ցույց են տրված անկյունավոր փակագծերի մեջ (օրինակ՝ էջ 235, տող 38):

Եթե հոդվածի վերնագիր կաղամոջ անվան մեջ հատկանշականը երկրորդ բառն է եղել, այդ դեպքում մենք երկրորդ բառը տեղափոխել ենք առաջ՝ սկզբինն անունով սովորական փակագծերի մեջ (օրինակ՝ էջ 622, տող 28):

Եթե միևնույն անունն աղբյուրներում ունի այլազան ձևեր, և կամ՝ մատենագրական նյութերի դասավորման բնույթով մի բնագիր պատկանում է երկու կամ ավելի հոդվածներին՝ այդպիսի դեպքերում մենք առաջուճներով անցում ենք կատարել մեկից դեպի մյուսը և առաջումները նշել գլխատառերով (օրինակ՝ էջ 218, տող 8):

1 Ընդհանուր բնույթ կրող մի քանի անբաժնաբաժնույններ մենք միշտ նշել ենք մեկ հոդվածների վերնագրերին տրված ծանոթագրությունների ձևով՝ Օժանդակ գրականությունն անվան տակ:

Կան նաև ուրիշ առանձնահատկություններ, որոնց մասին անհրաժեշտ չենք համարում ծանրանալ, որովհետև նրանք կարող են ինքնաբերաբար ընկալվել:

Բայց անհրաժեշտ է նշել մի քանի այլ կետեր, որոնք կօգնեն լուծելու մեր աշխատության օգտագործման ընթացքում ծագելիք որոշ տարակուսանքներ:

Թե՛ ձեռագրերում, թե՛ տպագրերում պատահող ուղղագրական և կետագրական այլազանություններն ու անկանոնությունները, լեզվական աղավաղումները, գրչական և գրաչարական վրիպումներն ու անդիտության արդյունք եղող սխալները, տառերի բացթողումներն ու անիմաստ հավելագրությունները մենք մեծ մասամբ ուղղել ենք, եթև դրանք բնագրին իմաստային տարբերություն չէին տալիս, և ստեղծել որոշ միօրինակություններ: Այսպես, օրինակի համար, աս-ը դարձել է օ (հաւր--հօր), բառավերջի աւ կամ օ արտասանությունը՝ ոյ (Արդիշաւ, Արդիշօ—Արդիշոյ), սովորական դեպքերում բառամիջի աւ-ն կամ օ-ն վերածվել է օ-ի (Ճնաւղ—Ճնող, Կ. Պօլիս—Կ. Պոլիս). կամ թե՛ Աղէքսանդր, Աղեկսանդր, Աղեկսանդր ձևերը դարձել են կանոնավոր Աղեքսանդր, փոքրատառով գրված հատուկ անունների և կամ մեծատառով գրված հասարակ անունների ուղղագրությունը ենթարկվել է կանոնավորման, և այլև: Դեպքերը շատ այլազան են: Մատենագիտության մեջ նկարչական սկզբունքը մենք որոշ չափով խախտել ենք մատենագրական նյութի ներկայացման համար որպես ոչ անհրաժեշտ և երբեմն նույնիսկ որպես խանգարող:

Կանոնական աղբյուրների նշումը կատարելիս՝ (ինչպես էջ 684—685) հենվել ենք հիմնականում Նոր-Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանի № 131 ձեռագիր կանոնգրքի վրա, օժանդակաբար օգտագործելով նաև Երևանի Պետ. Մատենադարանի №№ 8026 և 778 ձեռագրերը:

Պարզության համար մենք տպագրի հրատարակությունների այն սլունակները, որոնք համարակալում ունեն, ինչպիսի և ձեռագրերի թերթերի երեսները, որոնք արդեն ա և ր տառերով տարբերվում են իրարից՝ նշել ենք որպես էջ:

Երևանի Պետ. Մատենադարանի ձեռագրերի թերթակալումը փոփոխված է ժամանակի ընթացքում, այնպես որ նույն ձեռագրից մի քանի տարի առաջ որևէ բնագիր նկարագրելիս՝ ձեռագրին ունեցել է ուրիշ թերթակալում, իսկ մի քանի տարի հետո՝ նոր թերթակալում: Մենք աշխատել ենք վերջին անգամ վերստուգել բոլորը, բայց խախտման որոշ դեպքեր կարող են վրիպած լինել մեր ուշադրությունից:

Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մատենադարանների ձեռագրերի նշման գործում երբեմն անխուսափելիորեն կարող է տեղի ունեցած լինել հին և նոր համարների շփոթում, այն ձեռագրերի կապակցությամբ, որոնք դուրս են մնացել տպագրված ձեռագրացուցակներից:

Պուստափելու համար գրավոր աղբյուրների նշման հաճախակի կրկնություններից՝ մենք օգտագործել ենք անդ և աստ, որոնք ընդունված են բանասիրական գրականության մեջ: անդ-ը ակնարկում է անմիջապես առաջ և կամ վերջին անգամ հիշատակված աղբյուրին, իսկ աստ-ը՝ ներկա շեղակական մատենագիտության հատորներին:

Մենք հավակնություն չունենք կարծելու, որ մեր աշխատությունը լիակատար է և անթերի: Գոյություն ունեցող միջոցներից մենք օգտվել ենք միայն հնարավորության սահմաններում: Մեր աշխատանքի ընթացքը բաղկացած է երկու ուրույն մասերից, այն է՝ նյութերի հավաքում և հավաքված նյութերի մշակում (հոդվածների կազմում): Հնարավոր չէր մշակողական որևէ աշխատանք սկսել՝ նախքան բոլոր նյութերի լրիվ հավաքումը, իսկ միայն նյութերի լրիվ հավաքումը կպահանջեր տասնյակ տարիներ, քանի որ դրա համար անհրաժեշտ էր թերթի հայրական ձեռագրացուցակներն ու մեր տրամադրության տակ եղած հայերեն ձեռագրերը (սովալ դեպքում Երևանի Պետ. Մատենադարանի մոտ 10,000 ձեռագրերը), հայերեն բոլոր տպագիր գրքերը՝ 1512 թվականից սկսած, հայկական պարբերական մամուլը՝ 1704 թվականից սկսած, և օտար լեզուներով հրատարակված հայագիտական և արևելագիտական բոլոր գրքերն ու պարբերականները: Թերթելով այդ բոլորը՝ պետք էր նշել մատենագրա-

կան մեծ ու փոքր ամեն մի բնագիր (և հաճախ միեւնույն բնագիրը մի քանի անգամ՝ նրա խորագրի, հեղինակի, թարգմանչի, ընդգրկած առարկայի հետ կապված, և այլն), նշել մատենագրական ամեն մի նյութի վերաբերող ուսումնասիրությունները և ուսումնասիրությունների այն բոլոր մասերն ու էջերը, որոնցում խոսվում է մատենագրական տարրեր նյութերի մասին: Այսպիսի մի խելահեղ աշխատանքի համար անշուշտ հարկավոր էին տասնյակ տարիներ, որից հետո, հավաքված նյութերի համապատասխան դասավորումներ կատարելով, կարելի էր անցնել մշակողական աշխատանքի: Բայց նյութերի հավաքման համար այդքան երկար ժամանակամիջոց մենք չէինք կարող ունենալ մեր տրամադրության տակ, ուստի ստիպված էինք մի այլևի կարճ ժամանակի ընթացքում անել միայն հնարավորը՝ միաժամուկ կատարելով նյութերի ընդհանուր հավաքում և հրատարակ հանելով նյութերի մշակման առաջին հատորը: Բնականաբար այսպիսի պայմաններում ճիշտ չէր լինի խոսել նյութերի լրիվության մասին: Կոնկրետ առանց նկատի ունենալու, որ տպագիր աղբյուրներից, հատկապես արտասահմանյան հրատարակություններից ու պարբերական մամուլից, դեռ շատ բաներ բացակայում են մեզ մաս:

Մատենավարելով խոսքը ձեռագրական աղբյուրների օգտագործման վրա՝ պետք է ասել, որ այդ կողմից, եթե բացառենք մեր ունեցած ժամանակի սղություն պայմանները, մեզ աշխատանքի լայն հնարավորություններ են տրվել Երևանի Գետ. Մատենադարանում¹, որտեղ հիմնականում աարվում են մեր աշխատանքները: Մատենադարանի ղեկավարությունը, ձեռագրերի, տպագիր գրքերի և պարբերական մամուլի բաժինների վարիչներն ու աշխատակիցները միշտ սիրալիր օժանդակություն են ցույց տվել մեզ և ամեն միջոցներով դուրսացրել մեր ծանր գործը: Ամենից առաջ մեր տրամադրության տակ եղել են առարկայական այն բազմաթիվ ուղեցույց-մատյանները, որ Մատենադարանի աշխատակիցները տարիների ընթացքում կազմել են՝ գիտական աշխատողների սպասարկման համար և որոնց ջնդրելով Մատենադարանի գրչագրերի շատ նյութեր մատչելի են դարձել: Մենք լայնորեն օգտվել ենք արդև ուղեցույցներից, իրարկե քննադատորեն զտելով, ընտրելով, ճշտելով և սրբադրելով: Միաժամանակ երկար տարիների ընթացքում հետազոտելով հարյուրավոր ձեռագրեր, նրանցից քաղել և նկարագրել ենք մեծ քանակությամբ մատենագրական այնպիսի նյութեր, որոնց մասին ոչ մի հիշատակություն չի եղել վերոհիշյալ ուղեցույցներում: Բայց, այս բոլորի հետ միասին, չի կարելի ասել, թե Մատենադարանի ձեռագրերում բովանդակված նյութերն ամբողջությամբ օգտագործվել են մեր կողմից: Այդպիսի իրողության հասնելու պայմանը կլինեք միայն ունենալ Մատենադարանի ձեռագրերի ցուցակը, որի պատրաստման աշխատանքները դեռ նոր են սկսվել: Նյութերի հավաքման համար մենք օգտագործել ենք նաև առանձին հատորներով հրատարակված մի շարք ձեռագրացուցակներ՝ Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան մատենադարանների, Վիեննայի Կայսերական մատենադարանի, Մյունխենի, Բեռլինի, Տյուբինգենի, Փարիզի, Հոտմի, Լոնդոնի, Երուսաղեմի, Լալկայի, Անկյուրիայի, Գարինի (Սանասարյան վարժարանի), Քավրիզի, Ինչպես և Եջանդէս Ամսորեայ-ում, Բանասէր-ում և այլուր ապագրվածները: Անտիպեններից օգտագործել ենք Օքսֆորդի և Մանչեսթրի ձեռագրացուցակները (կազմող՝ Տիրալը վարդապետ) և Վրաստանի ձեռագրերի ինստիտուտի ձեռագրացուցակը (կազմող՝ Ս. Լալաֆարյան): Առայժմ հնարավոր չի եղել օգտագործել մի շարք տպագիր (հատկապես պարբերական մամուլում) և անտիպ ուրիշ կարևոր ձեռագրացուցակներ: Այդ բացը մենք կաշխատենք լրացնել հետագա հատորներում՝ ըստ այն ձեռագրացուցակների, որոնց ընդհանուր ցուցակը հրատարակում ենք: Մեր ներկա հատորը կազմելուց հետո՝ այն համեմատելով Մեսրոպ Մագիստրոսի (Մեսրոպ Տեր-Մովսիսյանի) Եջանդէս ձեռագրերի ընդ-

¹ ՀՅՄՍ Մխիթարների Սովետի կից չին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ — ԵՄատենագրանձ անվան փոխարեն մենք շարունակ գործածել ենք ԵՄատենի Գետ. Մատենագրանձ անվան, քանի որ մեր աշխատության մեջ մատենագրանների անունները նյութը բոլոր դեպքերում էլ սկսվում է այն քաղաքի անունով, որտեղ գտնվում է այդ մատենագրանը:

հանուր ցուցակա-ի հետ, նույնպես նշել ենք որոշ նյութեր, որոնց մասին ուրիշ կողմերից տեղեկություն չունենինք, և ամեն անգամ նշանակել ենք աղբյուրը¹:

Քանի որ խոսքը վերաբերում է նյութերի ընդդրկման հարցին՝ ավելացնենք, որ ներկա և հաջորդ շարալին հատորներից դուրս են մնում մատենագրական մի շարք անհեղինակ բնագրեր, որոնք չլին կարող տեղափարվի ոչ հեղինակային հոդվածների մեջ, այլ էլ առարկայական (օրինակ՝ «Յաղագս ազատութեան», «Վասն կատարածի աշխարհի», «Պատճառառաջաւորաց օճոհին», «Էրանն որ ասէ՝ Ի սկզբանէ էր», «Վասն ուրախութեան մարդկան», «Տաղ զնոյնցիկ և աղնիւ», և այլն): Այդպիսի արձակ և չափածո բնագրերը մենք հետագայում կամփոփենք առանձին հատորների մեջ՝ դրանք դասավորելով ըստ իրենց սկզբնատողերի:

Ինչպես տեսնում ենք՝ նյութերի ընդգրկումը եղել է միայն հնարավորութեան սահմաններում և չէր էլ կարող լինել այլ կերպ, քանի որ հայ հին և միջնադարյան գրականութունն ընդարձակ բնագավառ է և ոչ-լիովին հետազոտված: Մատենագիտութեան գործը դժվար է այս բնագավառում: ԺԴ դարում «Դիրք պատճառաց-ի խմբագիրը գրում էր, որ եզրուութիւն գրոց ծով է անեզր և անհաս»: Իսկ այն ժամանակ էր, երբ գիրն ու գրականութունը դեռ չէին հասել զարգացման ու ծավալման այն աստիճանին, որին հասան գուտտենբերգյան գյուտից հետո: Այժմ մենք ապրում ենք մի այնպիսի դարաշրջանում, երբ գրքի աշխարհը ոչ թե ծով է, այլ սվկիանոս, և շատ ավելի իրավամբ կարող ենք ասել, ըստ Գրիգոր Արասյանի, թե հայ մատենական գիտութեան մեջ այժմ դրամանդակն իմանալ ումեք ըստ արժանւոյն, այլ զսակաւս ի բազմացնա:

Մեր հրատարակութեան մեջ անհուսափելիորեն կլինեն նաև թերութիւններ, որոնք հատուկ են իր տեսակի մեջ առաջին փորձ հանդիսացող ամեն մի աշխատութեան: Կլինեն նաև թլուրիմացութիւններ²: Յանկալի է, որ մասնագետներն իրենց կարծիքն ու դիտողութիւնները հայտնեն ներկա հատորի մասին և պիտանի թելադրանքներ անեն մեր հետագա աշխատանքների համար, որպեսզի հաջորդ հատորները զերծ լինեն այն թերութիւններից, որոնք երևում են այս հատորում: Մենք վարձատրված կլինենք, եթե այս աշխատանքը դրավի մեր գիտական հասարակայնութեան ուշադրութիւնը:

Ի վերջո մենք խորին շնորհակալութիւն ենք հայտնում այն հիմնարկութիւններին ու անձնավորութիւններին, որոնք այս կամ այն կերպ օժանդակել են մեզ՝ մեր աշխատանքի ընթացքում:

Լ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

¹ Մերոպ Մազիսարոսի կազմած «Հայերն ձեռագրերի ընդհանուր ցուցակա-ը, որ, ինչպես ինքն է գրում՝ ավելի քան 22 հազար ձեռագրերի նկարագրութեան է պարունակում, մի վիթխարի աշխատութեան է: Այս տեսիլ գործը այժմ գտնվում է ՀՍՄՆ Գիտութիւնների Ազգեմէթայի Գաղտնիքային Ինստիտուտի արխիւում: Բազմացած է 87 թղթապանակներից (գործ ԱՊ 301-307), որոնցից առային չորսը «Մատենագիտութեան են, իսկ մյուսները՝ ձեռագրերի նկարագրութեան, բայց այս մասում ես տեղ-տեղ կան մատնագրական տեղեկութիւններ: Մեր գործը չէ խոսել Հայերն ձեռագրերի ընդհանուր ցուցակա-ի աւելցնելու մասին, որովհետև թերութիւնները մասին, բայց չենք կարող չնշել, որ աշխատանքի տեղեկատու-մատնագրական մասերում կան թերութիւններ՝ նյութերի ազգատ ու թերի նշումներ, երբեք ազգագրված և կամ սխալ, խոսնիտուտն և անսխալ. և մարդ պիտուտ է, որ այդպես է, որովհետև լեզուական իր գործի մարզութեան մեջ հանգեւ է գալիս որպէս աշխատութեան մարձացում: Մենք մեծ վերապահութեամբ ենք մտայնել Մազիսարոսի գործին:

² Օրինակ՝ ներկա հատորի 203-200 էջերում «Ազգաբնութիւն Հայոց ազգի»-ը, որ կազմված է Երեսնի և Վենետիկի երկու ձեռագրերի հիման վրա, ուրիշ բան չէ, եթե ոչ Միլաս լամբերու «Ազգաբնութիւն թագաւորացն Հայոց» աշխատութեանը:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐ*

Ա.

ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐ

կրտարակիւմ է ըստ հետեւյալ օրինակների.

Ա.—Երևանի Գեա. Մատ. ձեռ. № 1869, էջ 201բ:

Բ.—Գաբ. Զարբհանայան, «Մասնագրքան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1809, էջ 201:

Գ.—«Մամուլի քառանայի Անեցոյ հասցմունք ի գրոց պատմագրաց», Վազարյապետ, 1893, էջ 76.—77: (Օգտագործված է միայն որոշ համեմատութեաններէ համար):

10 Այս են անուանք թՁ սուս գրոցն որ եկեալ ի հերձուածող Ասորոցն և ոչ ի յուղղափառ Ասորոցն իմանալք, որ է այս՝.

1. Աղամայ կաակն՝.

2. Ճիռն օրհնութեան.

3. Փիփիանն՝.

4. Գորտոսակն.

5. Կիրակոսակն.

6. Աստիմունն՝.

7. Գեարոսի տեսիլն՝.

8. Դիաթեկն՝.

9. Աստուածածնին պատմութիւն՝.

10. Սեբիոսն.

11. Փիւրհոնացիքն՝.

12. Մանկութիւն տեառն՝.

13. Հասաւորչին տեսիլքն¹⁰.

14. ՋԱնթաքչիի մատեանսն.

15. Գրիգորի և Բարսեղի հարցմունքն¹¹.

16. ՋՄանեայ մեկնութիւնն աւետարանի:

13

20

Սև որ հաւատայ նոցա՝ նզովի:

* Այստեղ կրտարակիւմը մասնագիտական բնագրերի իմբրովորումը կատարված է մեր կողմից՝ ըստ նյութերի բովանդակութեան. իսկ բնագրերին արված բնորոշող վերնագրերը կազմված են՝ ելնելով բնագրերի բնութիւնից: Այդ վերնագրերու գործածված տեքստներէ մի մասը («Արգելված» prohibitus, «Արտօրին», «Ետօրը», և այլն) գալիս է միջին դարերից և ընդունված է բանասիրութեան մեջ:

¹ Բ այս են անուանմ աբեղատեան սուս գրոց են. Գ չի ի լէ բաւակածիս եկին ի հայս ասորից արք քաշարանք և կամէին սերմեանել զազանդի ցեստարի և ցզովեալք հալածեցան բայց սմանք բնկալան ցարա բարգմանեցին ցարին զիրս սուսա: ² Գ աղամայ ասպաշխարութիւն: ³ Ա փիփիեանն. Գ չուեի: ⁴ Բ դոսիմովն. Գ չուեի: ⁵ Գ պոզոսի տեսիլն: ⁶ Բ դիաթիկն: ⁷ Գ չուեի: ⁸ Բ փիւրհոնացիքն. Գ չուեի: ⁹ Բ մանկութեան աւետարանն: ¹⁰ Գ չուեի: ¹¹ Գ չուեի:

Բ.

ԱՐԳԵԼՎԱԾ ԵՒ ԸՆԴՈՒՆՆԵԼԻ ԳՐՔԵՐ

Հրատարակվում է ըստ հետևյալ օրինակների.

- Ա.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 1500 (Միխրթր Այրիվանեցու Հառընաբբ), էջ 369ր: Հիմնական օրինակ, որի ուղղագրութունը պահոււմ ենք: Հաղագրութունը ըստ ենք պահոււմ:
- Բ.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 682 (Միխրթր Այրիվանեցու Ժամանակագրութուն), էջ 16ր:
- Գ.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 913, էջ 73ր:
- Դ.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 8743, էջ 43ա—43բ:

(a) Գիրք զոր ունին Հրեայքն ի ծածուկ՝ այսոքիկ են՝.

- | | |
|---------------------|------------------------------|
| 1. Աղամա: | 6. Վերացումն Մուսիսի՝ |
| 2. Էնովքա՝: | 7. Սլաք և Մովղաղն՝: |
| 3. Սիրելիա՝: | 8. Սաղոմոնի՝ սաղմոսքն: |
| 4. ԲԺ. Նահապետացն՝: | 9. Սղիտի ծածուկքն: |
| 5. Աղաւթքն Յովսէփա: | 10. Դանիէլի է. երորդ տեսիլն: |

(b) Իսկ ըստ նորոյս՝.

- | | |
|-------------------------------------|---|
| 1. Գիրք մանկութեան տեառն՝: | 4. Գ. Շրջագոյ՝՝ Պաւղոսի: |
| 2. Թոմասի՝ ¹⁰ աւետարանն: | 5. Կաթողիկէ Թուղթքն Բառնա-
բա և Յովղաի և Թամասի՝ ¹² |
| 3. Յայտնութիւնն Գեարդոսի: | |

(c) Սրբոյն Կղեմա, եթէ ո՞ր գիրք ընդունելի է՝.

- | | |
|---|--|
| 1. Գործքն և | 5. Գիրքն Դիոնէսեա Աթենացո՝ ¹⁴ : |
| 2. Կանոնք առաքելոցն: | 6. Տիմոթեա Թուղթն՝ ¹¹ : |
| 3. Յայտնութիւնն Յոհաննա, որ
կոչի Պիլալիմասի՝ ¹⁴ : | 7. Գրքն Կրիսպոսի. |
| 4. Խրատ Աստուածածնին՝ ¹⁵ առա-
քելոցն: | 8. Բանքն Յուստոսի՝ ¹³ : |
| | 9. Բարոզ ուղղափառացն՝ ¹³ : |
| | 10. Թուղթն Բառնաբա: |

Չայս ես և Անանէ գրեցար ի վիմի քաղաքի, որ³⁰ եկեղեցի աւրհնեցաք՝³¹,

Գ.

ԱՐՏԱՔԻՆ ԳՐՔԵՐ

Հրատարակվում է ըստ հետևյալ օրինակների.

- Ա.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 3608, էջ 164ա—164բ:
- Բ.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 642, էջ 218ա:
- Գ.—Երևանի Գեա. Մաս. Աեռ. № 3380, էջ 280ա—280բ: (Օգտագործված է միայն որոշ համեմատութունների համար):

¹ Բ գիրք երկից ծածուկքն. ² Ժամուկ գիրք երկից: ³ ԲԳԳ ենագրայ: ⁴ Բ բմն ցա-
հապետ. ⁵ Գ նահապետացն բժամ: ⁶ Բ մովսիսի. ⁷ Գ մովսէթի: ⁸ Գ Ելզատ և մովղատ: ⁹ Բ սողմոնի. ¹⁰ Գ
սողմոնի: ¹¹ Գ Իսկ ցորայ: ¹² ԲԳԳ մանկութեան յիսուսի: ¹³ Բ բամա. ¹⁴ Բ բամայի: ¹⁵ ԲԳԳ շրջագոն: ¹⁶ Բ
կարողիկէ բաղարքն բառնաբայ: յաղայի և բամայի. ¹⁷ Գ կարողիկէ բաղարքն բառնաբայ և բամայի: ¹⁸ Գ
սուրբն կղեմա աշտեկերուն առաքելոցն գրեալ է բէ որ գիրքն բնդուսնի է: ¹⁹ ԲԳԳ յոհաննա տեսիլն: ²⁰ Գ
խրատ տեսուածայիցն: ²¹ ԲԳԳ գիրքն զիոնէսիսի: ²² Գ բալտան տիմարէսի: ²³ Գ բոնքն յաստոսի: ²⁴ Գ
քարոզ ուղղափառ: ²⁵ Բ ուր: ²⁶ Գ չունեն գայս... աւրհնեցար:

7.— Բ. Կյուլեհեքյան, Վճուպակ ձեռագրաց Անգլի-բիոյ Կարմիր Վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1867, էջ 698—699: (Օգտագործված է ժխան որչ կամեմատություններէ կամար):

Թիւք արտաքին գրոց թէ ովք են սասցեակ¹.

1. Նախ Գորգիւրն արար զիւր գիրքն և կոչեաց զանուն իւր Գորգիւրն. և յետ ժամանակաց Գրիգոր Տաթևացի աշակերտ Յոհաննու Որոտնեցոյն արար լուծմունս Գորգիւրի գրոցն:

2. Եւ Արիստոտէլ արար զտասն Ստորոգութիւնք, և իւր անունն կոչեաց Արիստոտէլ. և յետոյ Յոհան Որոտնեցին և իւր աշակերտ Գրիգոր Տաթևացին արարին զնորին լուծմունս: Այլև² արար զիրք նուրբ և արտաքին, և իւր անունն կոչեաց Պերիարմենէս, և զնորա լուծմունս ևս արար (sic) Յոհան Որոտնեցին, և Գրիգոր Տաթևացին: Եւ զԱռաքինութեանց գիրքն արար Արիստոտէլ, որ է յոյժ խրթին, նման նմին վարժիցն է պիտելի. և նորա լուծմունքն արար Գրիգոր Տաթևացին:

3. Եւ զԳրչութեան³ քերականն արար Արիստակէս հռետորն. և զնորա լուծմունքն ղժուարիմաց բանիցն արար Գրիգոր Տաթևացին մեկնողարար⁴:

4. Եւ այլ Գրչութեան քերական մի արարեալ է Գրիգոր հռետորն. և զնորա լուծմունքն ղժուարիմաց բանիցն արար Դէորդ վարդապետն, որ էր սա ի ժամանակս⁵ Հալոց թագաւորացն:

5. Եւ Դաւիթ Անյաղթ փիլիսոսփայն արար զիրք Սահմանաց իմաստասիրութեան, որ կոչի Առածք⁶: Եւ արար զիրք մի, որ կոչի Էակաց գիրք, ի վերայ զոյացութիւնն⁷ մարդայ: Եւ արար զիրք մի, որ կոչի Ջոնակ⁸, և են յոյժ խրթին և քննիչ ամենայն լանի: Եւ արար զիրք մի այլ որ կոչի Բարձրացուցէք ի վերայ խաչափայտին Բրիստոսի. և յետոյ մեկնեաց զայն ներսէս⁹:

6. Եւ Բերական մի խրթին և զեզեցիկ արար Մովսէս Փերթոզն:

Դ.

ՆՈՒՐԲ ԳՐՔԵՐ

Հրատարակվում է ըստ հետևյալ օրինակների.

Ա.— Երևանի Գեա. Մաս. ձեռ. № 8508, էջ 768—769:

Բ.— Բ. Կյուլեհեքյան, Վճուպակ ձեռագրաց Անգլի-բիոյ և այլն, Անթիլիաս, 1867, էջ 762—763.

Գ.— Երևանի Գեա. Մաս. ձեռ. № 862 (Միթթար Այրիվանեցու ժամանակագրութիւն), էջ 289—401:

Թիւք նուրբ գրեանց¹⁰.

1. Փիլոնի իմաստնոցն¹¹ Թ գիրք¹².

ա. Նախախնամութեան՝ Խ.¹³

բ. Նահապետացն՝ Ա.

գ. Հեսսեանցն սրբոց՝ Ա.¹⁴

դ. Ալլարանութեանն՝ Ա.

ե. Առաջի Որ ի լինելութեանց՝ ՂԹ.¹⁵

զ. Երկրորդ Որ ի լինելութեանց՝ ՁԲ.¹⁶

է. Երրորդ Որ ի լինելութեանց՝ ԿԲ.¹⁷

ը. Չորրորդ՝ Երեկեցանն¹⁸ ՄԽԳ.¹⁹

թ. ՅՍլիցն բազմազան՝ ՃԳԸ.²⁰

1 Գ թիւն Եւրբ գրեանցս (թէ) ովք են սասցեակ: 2 Ա Չուճի տրարին զՅարին լուծմունս այլ և: 3 ԱԲԳ գրչութեան: 4 Բ Չուճի մեկնողարար: 5 Գ գէորգ վարդապետն սրտայ ի ժամանակս: 6 ԱԲ առածք: 7 ԱԲԳ գոյութեանց: 8 Ա ռեակ. Բ հազարեակ: 9 Գ Երևան կայնեցին: 10 Գ Եւրբոց: 11 Ա փիլոնի իմաստասիրն. Գ փիլոն: 12 Ա չուճի: 13 Ա Նախախնամութեանցն յս. Բ Նախախնամութեանցն ա: 14 Գ Եսսեանցն ա. Բ Եսսեանցն սրբոցն ա: 15 Բ որ ի լինելութեան գր. Ա որ ի լինելութեան խեղ գր: 16 ԱԲ Երրորդ և լուծմունքն Եր: 17 Ա որ ի լինելութեան խեղոց և լու կր. Բ որ ի լինելոյ խեղոց լուծմունքն կր: 18 ԱԲ Երեկեցանն. 19 Գ Եր: 20 Ա յելիցն բազմաբան Եր. Գ չուճի:

- 2. Սրբոյն Դիոննսիոսի՝ Ծ գիրք.¹
 - ա. Յաղագս երկնային քահանայապետութեան՝ ԺԾ².
 - բ. Հասն եկեղեցւոյ քահանայապետութեան՝ ԴԺ³.
 - գ. Յաղագս աստուածային անուանց՝ ԺԲ⁴.
 - դ. Յաղագս խորհրդական աստուածաբանութեան՝ ԴԺ.
 - ե. Թուղթքն զանազանք՝ ԺԲ⁵.
- 3. Նիւսացիքն՝ Է՛.
 - ա. Բնութեանն գիրք՝ 17 ճառ⁶.
 - բ. Կազմութեանն՝ 1Բ.
 - գ. Կուսութեանն՝ Ի.
 - դ. Ժողովողին՝ Բ.
 - ե. Ծրգ երգոցն՝ ԺԴ.
 - զ. Ինն երանութիւնք՝ Ը՞.
 - է. Հալո մեր որ լերկինս՝ Զ¹⁰.
- 4. Սրբոյն Սեբերիանոս[ի]¹¹ Ի մէջ քրիստոսասիրաց¹².
- 5. Աստուածաբանն՝ Դ գիրք¹³.
 - ա. Գրիստոս ծնեալն՝ ԺԲ.
 - բ. Յաղթեցալն՝ Ը.
 - գ. Առ որսն՝ ԺԾ.
 - դ. Որք լծգիպտոսէն՝ ԺԱ¹⁴.
- 6. Սրբոյն Բարսղի՛ Գ գիրք¹⁵.
 - ա. Գահոց՝ 1Ա¹⁶.
 - բ. Հարցողաց՝ ԵԿԱ¹⁷.
 - գ. Զ.աւրէն՝ Թ¹⁸.
- 7. Սրբոյն Ծաղրեայ՝ Բ գիրք¹⁹.
 - ա. Կրօնաւորացն՝ ԺԴ²⁰.
 - բ. Հարիւրաւորքն՝ 13²¹.

- 8. Դաւթի փիլիսոսփայի Սահմանաց իմաստ|ասիր|ութեանն²² ԻԴ²³.
 - 9. Պրակց Դիագոխոսն և Ամելյախոսի լուծմունքն՝ ՄԺԱ²⁴.
 - 10. Բերական՝ ԻԴ ճառ²⁵.
 - 11. Հերմէսն՝ Ա ճառ.
 - 12. Պորփիրն՝ ՄԱ ճառ.
 - 13. Արիստոտէլի՛ Ծ գիրք²⁶.
 - ա. Ստորոգութիւնքն՝ ԺԽ²⁷.
 - բ. Պերիարմենիանն՝ 2Բ.
 - գ. Աւաքիւնութեանցն՝ Ա²⁸.
 - դ. Աշխարհացն՝ Ա²⁹. Իսկ
 - ե. զՎերլուծութեանն ոչ գտի³⁰.
- Շարունակ-թղթն՝ ըստ երեսնի Պեա. Մառ.
Ք 583 ձեռագրի.
- 14. Էակքն Դաւթի.
 - 15. Պէտքն Մովսէսի.
 - 16. Յոհաննոս Մալրավանեցոյ Գ գիրք՝
 - ա. Խրատվարքն.
 - բ. Հաւատոյ արմատն.
 - գ. Նորմակն.
 - 17. Մեկնութիւնք Հին և Նոր Կտակարանաց՝
 - ա. Սուրբ Ծփրեմի.
 - բ. Սուրբ Ծփրիփանոս.
 - գ. Ոսկերերանին.
 - դ. Կիւրեղ (ՏԸ) Աղեքսա[նդրացւոյ].
 - 18. Ծառասաց՝ հայրապետացն Հայոց և մասնաւորաց.
- Ահա կատարեցան նորր գիրքն:

1 Ա սրբոյն դիոնէսիոսի. 2 դիոնէսիոսի և գիրք: 3 Ա յաղագս երկնային քահանայապետութեանց մի ժոյ. Բ յաղագս յերկնային քահանայապետութեանց մի: 4 Գ երկնային քահանայապետութեանց մի: 5 Ա վասն եկեղեցւոյ քահանայապետութեանց մի: 6 Գ խորհրդական աստուածաբանութեանցն: 7 Ա յաղագս աստուածային անուանցն: 8 Գ խորհրդական աստուածաբանութեանցն: 9 Ա յաւրէն: 10 Ա սրբոյն գրիգորի Նիւսացոյն: 11 Բ յաւրէն: 12 Գ քրիստոսասիրաց: 13 Ա յաւրէն: 14 Ա սրբոյն գրիգորի աստուածաբանի: 15 Ա գրիգորի աստուածաբանի գիրք: 16 Ա յաւրէն ժա. Բ որ յեկիպտոսէ ժր: 17 Ա յաւրէն Գ գիրք: 18 Բարսղի Գ գիրք: 19 Ա յաւրէն: 20 Գ յաւրէն (չփոթմամբ): 21 Բ յաւրէն (չփոթմամբ): 22 ԱՍ յաւրէն (առբեր անտէր չփոթմամբ): 23 Իսկ Գ աւելացնում է նաև՝ կուսութեան և նաև: 24 Ա յաւրէն: 25 Ա առաջինն Գ գիրք ժր նաև. Բ առաջինն Գ գիրք է ժր նաև: 26 Ա երկրորդ[ն] Գ գիրք ք նաև. Բ երկրորդ[ն] Գ գիրք է ժր նաև է: 27 Գ սահմանցն դարի: 28 Ա յաւրէն: 29 Ա պրակց եղեղոսիոսն և զամբարտոսն մի և եոյն չափ լուծմունց. Բ պրակցիկոս խոսն և զամբարտոսն մի նաև է. և եոյն չափ լուծմունց. Գ պրակցի եղեղոսիոսն և ամբարտոսի լուծմունցն: 28 Բ քերականն ից նաև է: 29 Ա մեծին արիստոտէլի. Բ մեծին արիստոտէլի Գ գիրք: 30 Գ ժ ստորագրութեան: 31 Ա առաջինութեանցն: 32 Բ աշխարհացն: 33 Բ իսկ զՎերլուծութեանցն յգտայ. Գ Վերլուծութեանցն:

Ե.

ՆՈՒՐԲ ԳՐՔԵՐ

Հրատարակվում է ըստ հետևյալ օրինակի.
Երևանի Գեո. Մատ. Ժեռ. № 3061, էջ 78ա:

Արտաքին գրեանք, որ ի դաս մտանեն.

- | | |
|----------------------|---------------------|
| 1. Սահմանքն. | դ. Յաղթեցալն. |
| 2. Պորփիրն. | դ. Որք լնգիպտոսէ. |
| 3. Արիաստատչի | 7. Բարսեղնին՝ |
| ա. Ստորոգութիւնքն. | ա. Վեցօրեալն. |
| բ. Գերիարմենիասն. | բ. Պահոցն. |
| 4. Գերականն. | գ. Հարցողացն. |
| 5. Նիւսացիքն՝ | 8. Փիւնն՝ |
| ա. Կազմութիւնն. | ա. Նախախնամութեանն. |
| բ. Բնութիւնն. | բ. Ալլաբանութեանն. |
| գ. Ժողովողն. | գ. Նախապետացն. |
| դ. Երգ երգոցն. | դ. Մենչոցն. |
| ե. Հայր մեր որ լերկ. | ե. Ելիցն. |
| զ. Ինն երանութիւնն. | զ. Երեկեցանն. |
| է. Կուսութիւն. | է. Հրասեանցն. |
| 6. Աստուածարաներն՝ | 9. Դիոնէսիոսին. |
| ա. Քրիստոս ծնեալն. | 10. Ծաղրն. |
| բ. Առ որսն. | Նրբերն այս է: |

Զ.

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

Հրատարակվում է ըստ հետևյալ օրինակի.

«Գիրք աստուածաբանական որ կօչի Դրոխ ցանկալի. շարագրելու ի Հագարու աստուածաբան վարդապետէ Ժակեղևոյ», Կ. Պոլիս, 1735, էջ 621—646:

Թարխան հաւատոյն և հիմունք եկեղեցւոյ, ակունք պատուիրանացն աստուծոյ և լուսատուք հոգւոց մերոց վարժապետք և աստուածաբանք՝ են Հայաստաննայցս այսոքիկ:

1. Նախ՝ լցնալն ի շնորհաց հոգւոյն սրբոյ և գերազօնցեալն հանճարով, լուսաւորեալն մտօք և դրուատեալն զիտութեամբ մեծն Մեսրոպ երկրորդ լուսաւորիչն Հայաստաննայց և արժանաւորն զօվութեան որ արար զգիրս Հայոց և նովաւ պայծառացուցմամբ զարդարեաց զեկեղեցիս մեր... Եւ ժողովնն այնուհետև մանկունս բազումս և ուսուցանին զբովանդակ աշխարհս, և բաժանեն զմանկունս մատաղս և քաջութունս փափկածախս և երկարօրէս՝ լերկուս, և կարգեն դպրոցս ասորերէն և լուսարէն: Եւ ուսեալ մանկանցն այնոցիկ զամենայն իմաստութիւնս ներքինս և արտաքինս՝ եղեն թարգմանիչք ճշմարտութեան և թարգմանեցին զամենայն գիրս Հին և Նոր Կտակարանաց, սկսեալ լուսակացն Սողոմոնի բովանդակեցին զամենայն... Եւ ինքն զարգարէ զեկեղեցիս կարգօք և կրօնիւք. և ասէ զկարգն Ապաշխարութեան շարականաց, և հաստատէ ի մեզ զերաժշտականացն եղանակք: Եւ լետ բազմագիմի ար-

գեանց և երակաւարութեանց լիլի առ Գրիստոս, և ամբօրի գղատական չեմար նորա լեկեղեցիէն Ուշականայ ի ներքոյ սրբոյ սեղանոյ, մերձ ի տիեզերական ամբողջ սրբոյն նշմբածնի:

2. Մովսէս սցանչեկէն Քերթրդասլարն կոչեցալ, էր լաշակերտաց սրբոյն Մեսրոպալ: Արար սա գնամտօտ Քերտականութիւնս, և զձալոց պատմութիւնն գեղեցկաշար ոճով՝ ի խնդրոյ Սահակալ Բայբատունաւոյ Նւ զՊատմութիւն Արքունոյ Աստուածածնէ և պատկերն նորին՝ ի խնդրոյ իշխանաց Արժարոնեաց: Նւ զգիրքն Պետրկոյ՝ ի խնդրոյ Քերտոսի օմմեմ: Նւ զնիւրդոնանս Վարդապետն, և զգրոց նովիսիմեանց, եւ այլ ճարս և խօսս խմատաբարականս: Այլ և զՄեդեան շարականն, և զմեծացուսցե՛քն, և զՏեանընդարացին, և զՓոխման Աստուածածնի արաչին պատկերն:

3. Դաւիթն ամենխմատ անլաթի վիկիսովայն, էր և սա լաշակերտաց սրբոյն Մեսրոպալ: Արար զգիրս Սահմանաց, և զԷսպաց, և զՄեկնութիւնն Արիստոտէլի, և Ներածութեանցն Պորփիրի, և այլ հարցմունք և զպատասխանիս: Նւ զնիւրդոնան սրբոյ խաչին զԲարձրացուցե՛քն, և զՄեդեան տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի: Նաև զլաթրդական պատասխանիս ընդդէմ հարցմանց վիկիսովայկցն Յունաց արաչի Մարկիանոսի ամբարշտին լաղարս անիրաւ ժողովոյն Քաղկեդոնի:

4. Գորիւնն արի և զարմանալի, էր և սա լաշակերտաց սրբոյն Մեսրոպալ: Արար զպատմութիւնս ժամանակաց, և զլիախտոտը պատմութիւն սրբոյն Մեսրոպալ:

5. Եղիշէն զարմանալով և բազմախորհուրդ, էր և սա լաշակերտաց սրբոյն Մեսրոպալ: Արար զպատմութիւն սրբոց Վարդանանց, և զգիրս կառնեակնաց, և այլ մեկնութիւնս սրբոց սրբոց, և զշարլաբանաց փրկիչն: Այլ և արար զարօթն մարդարտաշար ոճով և խորին խորհրդով ի դէմս Ալլակերպութեանն Քրիստոսի, որ լալնմ ատար ընթեռնանի լեկեղեցիս Հաւատաննաց:

6. Դագար զիտնական ճոխիմտօտ և սրակզոն, էր և սա լաշակերտաց սրբոյն Մեսրոպալ ի գեղիշէն Փարդու: Արար զգիրս ճարտասանութեան, և զպատմութիւնս ժամանակաց հիւրանց:

7. Մամբրէ վերծանողն, էր և սա լաշակերտաց սրբոյն Մեսրոպալ: Ասաց ներդրեանս ի յորն Արմաւենեաց ի դայստեանն Քրիստոսի լՅրուսպէճ, և այլ բանս խրատականս: 8. Ստեփաննոս պեմոն Միւնեաց, լաթթող սպասազէնն հաստոյ և իմտօտադատող: 9. պատկազար, էր սա լաշակերտաց սրբոյն Մովսէսի Քերթրդասլարն: Արար զմեկնութիւնս աստուածաշունչ սրբոց, և զՄեկնութիւն սրբոց արեւարանացն համտօտապէս: Նաև զՍողոմոն, և զԴանիէլին, և զԵղեկիէլին, և զխօսս մեկնօրէն ի վերայ ժամկերպիւնաց արթից: Նւ զպատասխանիս Քրիթոն Քերմանուր պատրիարքին Կոստանդնուպոլսոյ քաղցր և անուշ ոճով: Այլ և թարգմանեաց զՄեկնութիւն մեծին Դիոնիսիոսի ի յունականէն ի հայ բարբառ: Արար և զհամտօտ Քերտականութիւնս: Նւ կրգեաց զնրցս շարականաց քաղցր և զնրցիկ՝ եղանակաւ և մեծ խորհրդով՝ զՄեդեանն Քրիստոսի և զՄկրտութեանն, և Սկուտրութեանն ի Բիթանիս և յՅրուսպէճ, և զՄեծի շարաթիւ շարլաբանացն, և զՅարութեանն, և զճամբարձմանն, և զՆոգաւոյն սրբոյ Պալասեանն, և զՆիկիդացոյ, և զաւար օրհնութեանն կարգց, բաց ի վանէն, և զՄրտաթիւն սրբոցն, և այլ օմնից տէրուհականաց և սրբոց բազմաց, զոր մինչև ցարսօր պաշտի լեկեղեցիս Հաւատաննաց:

9. Յունն Մալապանեցի, արբ իմատուն և բազմաշնորհ, տիրեակ աստուածաբանին արդր գրոց: Սա գրեաց զսասարձածս բազումս ի տէտօս եկեղեցւոյս Հաւատաննաց և ի կրթութիւն քրիստոնէականի կենցաղականութեանց յորդրական և քաղցր ոճով...:

10. Մաթուսարալ պեմոն Միւնեաց, արբ ընթեղցրոյ և ուստաճալարով: Սա գրեաց թուրք վսան հաստոյ առ Հերոսկ արքայն Յունաց, հրամանաւ: Եզրէ կաթրդիկոսին Հալոց...:

11. Ստեփաննոս երկրորդ պեմոն Միւնեաց՝ որդի Տարսուրէն Հալոց իշխանին, արբ ուրդրաբար և ողորտազէնն հատատոյ, որ պրեաց թուրք վսան հաստոյ և կարգաց եկեղեցւոյ լա-

րեւելեան աշխարհէս ի տունն Գիլիկնայ առ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր վասն կասկածա-
նաց ինչ յաղագս միաբանութեան ընդ Յունաց...

12. Անանիա ի Շիրակ գաւառէն, այլ բանհրուն և հանճարեզ, գիտող լոյժ ամենայն
տոմարական արհեստից և աստեղագիտութեանց: Սա գրեաց վասն երկնի և երկրի, վասն ըն-
թացից երկոտասան կենդանակերպից և մոլորականաց և անմոլորից: Սա արար զգիրս Վեց-
հազարեայ ծածուկ խորհրդով: Ջսա կոչեաց առ ինքն տէր Անաստաս կաթողիկոսն զի արասցէ
անշարժ տոմարս Հայոց որպէս այլոց ազգաց, զոր արար մեծաւ շանիւ:

13. Խոսրով մեծն՝ հայր սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, սա արար զմեկնութիւն ժա-
մերգութեանց աղօթից, և զխորհրդոյ սրբոյ պատարագին շնորհապետ վարդապետութեամբ:

14. Գրիգոր Նարեկացին, այլ գիտնական և իմաստասպասում, ճգնակիր և խարազ-
նազգեաց: Մաքրափայլ կրօնիւք ստացեալ ունէր զվարս անճարմնականս, որ ամենայն կեանք
և շարժումս սորին՝ անգիր օրէնք էին տեսողաց: Սա արար մեղրածորան շրթամբք զԳիրս
աղօթից մարգարտաշար ոճով: Եւ արար զՄեկնութիւն Երզոց երգոյն Սողոմոնի: Եւ զեբրեո-
ղեանս ի վերայ սրբալոյս մեղսնի զարմանալի տեսողաց: Եւ զճառս սրբոյ խաչին Ապարանից:
Այլ և քարոզս Եկեղեցւոյ և Խաչի և հոգւոյն սրբոյ Գալստեան: Նաև ի դէմս սուրբ Աստուա-
ծածնին, և սրբոց Առաքելոց, և առ Յակոբ հայրապետն Մծբնայ, և ի փայտն ժամահար:
Նաև երգեաց ի դէմս Աստուածածնի զԱյլքն ծով ի ծովս՝ յորժամ ետես զնա ի վերայ Վանայ
ծովուն: Եւ զՀաւուն արթնացեալն: Եւ զՅարեաւ հաւն: Եւ զՍս ձայն զառիւծուն: Եւ զՀաւիկ
մի պայծառն: Եւ զԳոհար վարդն: Եւ զայլ բազում բանս և զմեղեդիս քաղցր և անոյշ երգօք
հօգեորօք: Այլ և բանս խրատականս առ կրօնաւորս յաղագս աղօթից և ժամերգութեանց:

15. Պօղոս Տարնացի, այլ սուրբ և շնորհապետ, վանիչ հերձուածողաց և կարկիչ
երկարեակաց: Սա արար զգիրս վիճաբանութեան ընդդէմ քաղկեդոնականաց առ Փետոս
իմաստասէրն Յունաց յաղթողական խօսիւք և լախածոց վկայութեամբ, և էր շատագով ի վե-
րայ ուղղափառ հաւատոյս քրիստոնէականի:

16. Յոհաննէս Երզնկացին, ամենայն գովեստից արժանին, որ Պաւլոս կոչեցաւ: Սա
ասաց՝ զոտանաւորս ի վերայ եթերականաց և աստեղացն ընթացից զարմանաշնորհ գիտու-
թեամբ: Այլ և շարալարեաց զբանս հեշտագոյն վասն երկնի և երկրի, և վասն երկնային կամա-
րածգութեանց, ամպոց և որոտմանց, կայծից և շանդից, ծովուց և ցամաքաց: Ասաց և ներբո-
ղեանս ի դէմս սրբոյ Լուսաւորչին և ի լեառն Սեբուհայ իբրև զմեղու խորիստ քաղցրորակ շա-
րադրութեամբ: Այլ և ասաց՝ Այսօր զուարճացեալն և զԼերինքն սրբոյ Լուսաւորչին, և Որ
զլոյս անճառն սրբոյն Ներսէսի, և զ[Յ]աւորս վերջին եօթն Յոտանարակացն, և զՅիշեա տէրն:
Այլ և արար զՄեկնութիւն Քերականին, և զքարոզս խորհրդաւոր ի վերայ տէրունականաց սօ-
նից՝ ասացուածաց կերպիւս...

17. Գիրակոս, այլ գերապանծ և կենդանախարովեալ կայծակամբք: Սա թարգմանեաց
զՄեկնութիւն Յոհաննու աւետարանին, որ արարեցեալ է ի Յոհաննու Ոսկեբերանէն: Այլ և
ասաց զԱրեւելքն ի դէմս Փոխման Աստուածածնին: Նաև արար զլուծմունս Եւագրեայ:

18. Ներսէս Համբրոնացին, Ոսկեբերանն Հայոց, հրածորան լեզուն: Սա արար զՄեկնու-
թիւն սաղմոսացն Դաւթի, որ զընթերցողս ի լերինս և յանապատս վարեալ խոտանարակս
տոնէ: Նաև արար զՄեկնութիւն Ասակացն Սողոմոնի և իմաստութեանն: Արար և զՄեկնութիւն
խորհրդոյ սրբոյ պատարագին, և զՄեկնութիւն աղօթիցն Յոհաննու աւետարանչին, որ է՝ էր
ընդ եղբարս: Մեկնեաց և զբան երկոտասանից մարգարէից: Արար և զՄեկնութիւնս կիկե-
ցական խորհրդոյ: Ասաց և զճառս յաւուր Պենտէկոստէի զարմանասքանչ վարդապետութեամբ:
Արար և զլուծմունս խրթնածածուկաղօթից սրբոյ Նարեկացւոյն: Թարգմանեաց զՄեկնութիւն
Տեսլեանն Յոհաննու աւետարանչին, նաև զԿանոնս սրբոյն Բենեդիկտոսի: Ասաց և զերգս շա-
րականաց, այսինքն՝ զԱյսօր յարեաւն, և զՆորոգեալ կղզիքն, և զԹոռանց սրբոյ Լուսաւորչին:
էր սա ազգակից սրբոյն Ներսէսի Կլայեցւոյն:

19. Սարգիս Շնորհալին, աստուածազատում վարդապետն եկեղեցւոյ և տնչիշանելի

ճառագայթարձակ շահն հաւատոյ և քանոնն ճշմարտութեան: Սա արար զՄեկնութիւն կաթողիկեայցն, և լիտոյ կրկին համառօտեաց աստուածատուր շնորհին իւրով:

20. Իգնատիոս այր հոգետես, որում հրամայեաց կաթողիկոսն Գրիգորիս եղբայր սրբորն Ներսէսի Կլայեցւոյն՝ մեկնութիւն առնել Դուկասու աւետարանի, և նա ոչ էառ լանձն, մինչև տեսանէր ի տեսլեան տուն մի լուսաւոր և զարդարեալ ամենայն վայելչութեամբ, և զամենայն վարդապետս եկեղեցւոյ տնդ խրախացեալս, կամեցաւ և ինքն մտանել ի ներքս և արգելութիւն զնա և սաէին, ևթէ վասն զի ոչ աշխատեցար ի մեկնել զաւետարանն Դուկասու խորհրդական և մտաւոր բանիւ, եւ զարթուցեալ ի տեսլենէ՝ մեկնեաց զաւետարանն Դուկասու և Մարկոսի լուսաւոր վարդապետութեամբ:

21. Անանիա ի Սանահին, այր մտաւոր և հանճարեղ, գիտող տոմարական արուեստի, և աստուածայնոց գրոց մեկնող: Սա հաւաքեալ ի Մեկնութենէ առաքելոյն Պօղոսի զբանն Եփրեմի և Յոհաննու Ոսկերերանի և Կիւրղի և այլ սրբոց, արար համառօտ մեկնութիւնս վասրն դիւրահասութեան ընթերցողաց: Նաև արար խորհրդական և մտաւոր տեսութիւն և համեմատութիւն չորից աւետարանացն: Ասաց զներբողեանս ի դէմս սրբոյն Էջմիածնի բառակապ և ականապատ մարգարտաշարիւք լիտայրեալ, որ զարմացուցանէ զընթերցողսն:

22. Յովհաննէս՝ Մարկաւազն կոչեցեալ՝ ի Հաղրատ, մեծիմաստն գիտութեամբ և հանճարեղն, և ամենայնի մտահարուստն: Սա զբազմաց փափագելին զնաստատ և զանշարժ տոմարն կարգեաց Հայոց փոխանակ շարժականի: Արար և միաբանութիւն ամենայն աղգաց տոմարի ընդ Հայոց, վասն զի լոյժ իմաստուն էր այլն և աստուածային շնորհօք զարդարեալ: Սա գրեաց ճառս ներբողականս ի մեծագօր արքայն Հայոց Տրդատ, և ի սուրբ հայրապետն Ներսէս, և ի սքանչելին Սահակ և ի Մեսրոպ: Արար և զշարական Դեոնդեանցն քաղցր եղանակով և լարմար բանիւ, որ սկիզբն է այս՝ Պայծառացան այսօր: Գրեաց նոցունց և զճառս ներբողականս. և արար Գիրս աղօթականս...: Եւ եղև վախճան սրբոյն ի ՇՀԲ (sic) թուականի:

23. Մխիթար որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետկայ, այր սուրբ և իմաստուն և հեզ, և վարդապետական ուսմամբ հռչակեալ: Սա արար զՄեկնութիւն Երեմիայի մարգարէին, և զԴատաստանագիրս մեր:

24. Վանական, այր պարկեշտ, վարդապետական բանիւ ճոխացեալ, որ ի ժամանակն գերագանցեալ ծննդական մտօք և լարմար բանիւք. վասն որոյ բազումք զնգերէին առ նա ուսման աղագաւ: Արար սա զՄեկնութիւնն Յորայ:

25. Վարդան մեծն և տաշին, այր գիտնական և աստուածաբան: Սա արար զՄեկնութիւն Արարածոց, և զՄեկնութիւն Սաղմոսացն Դաւթի, և զՄեկնութիւն Երզնց երգոյն Սողոմոնի, և զՎանիւիլին: Եւ թարգմանեաց զՊատմութիւն Միխայելի կաթողիկոսին Ասորոց: Եւ երգեաց զերգս շարականաց՝ զՈր նախիմացն, և զ՛ի լանսահման ծովէն, և զԹարգմանչացն, և զԱնթառամ ծաղիկն:

26. Կիրակոս, այր ցանկալի և հանճարագգօն, աշակերտ Յովհաննու վարդապետին որ Վանականն կոչիւր: Սա արար զԺամանակագրութիւնս, սկսեալ ի Լուսաւորչէն առ ինքն աւարտեալ:

27. Յոհաննէս Մործորեցին, այր քաջուսումն և մտապերճ: Սա մեկնեաց զաւետարանն Մատթէոսի պարզ և դիւրահաս ոճով, և մեկնեաց զՔերականութիւնն:

28. Վարդան երկրորդ, այր ճոխիմաստ և շնորհագարդ: Սա արար համառօտ Մեկնութիւն չորից աւետարանաց զմուարիմաց բունիցն, եւ ժողովեաց զգիրս Առակաց ի պէտս հոգոյ և մարմնոյ: Արար և զհամառօտ Աշխարհացոյցս: Ասաց և զարմանալի ներբողեանս ի դէմս սրբոյ Լուսաւորչին պատմագրաբար, եւ մեկնորէն արար զՔերականութիւնս:

29. Յոհաննէս Դաոննցին, այր առաքինի, զարմանալի վարուք, գործօք պատուիրանացն աստուծոյ: Սա արար զԳիրս աղօթից ի պէտս կրօնաւորաց և առաքինեաց արանց բազմազան խորհրդով: Առ սա եկն մուղրին Ջանկիացի երկու որդիովք և մկրտեցան ի սմանէ և եղեն քրիստոնեալ: Արար և սա բանս խրատականս կարգաց և կրօնից: Որ և աղօթք սարին սատարութիւն և ի թողութիւն մեղաց, և լիշատակ նորա ընդ սուրբս ամենայն:

30. Տիրատուր, այլն ցանկալի, ամենիմաստ, աղբիւրն գիտութեան, զպիրն հմտավարժ արտաքնոց և աստուածախոց բանից: Արար սա զգիրս քարոզից ի պէտս վարդապետաց եկեղեցւոյ խրթնածածուկ իմաստասիրական ոճով...:

31. Մովսէս Եզնկացիին, այլն համեղարան և կորովամիտ, լի աստուածային շնորհիւն: Սա զթերութիւն Մեկնութեան ժամերգութեանց մերոց զոր ի մեծէն Թոսրովու արարեցեալ էր, էլից, լաստութուտ պարզեօք հանգունատիւ առաջնոյն: Նաև արար զզանազան վիճմունս ընդդէմ երկարնակաց բազմառոյ վկայութեամբ, քաղցր ոճով, հաստատագոյն բանիւք:

32. Յոհաննէս վարդապետն Դանձակեցիին, այլ սրբամիտ և տօնասէր: Արար զՄեկնութիւն ընթերցուածոցն որ ասի Տօնապատճառ:

33. Գրիգոր Լամբրոնացի, այլ խորին խորհուրդ և զիրիմաստ: Արար բազում քարոզս ասացուածոց կերպիւ: Այլև ի դէմս խաչի և յարութեան Քրիստոսի աստուծոյ մերոյ համեղաշար բանիւ:

34. Ծաւլի, այլ հողեկիր և աստուածապատում, վարժ և հմուտ գրոց աստուածաբանականաց: Սա արար զհամառօտ Մեկնութիւնս ժամերգութեանց, և ասացուածս բազումս: Կարգեաց զպարոցս և ուսոյց զաշակերտս. և արար զՄեկնութիւն Քերականին:

35. Յովհաննէս Արճիշեցիին, այլ կորովամիտ և շնորհացն աստուծոյ ընդունակ: Սա արար զհամառօտ Մեկնութիւն սրբոյ պատարագին խորհրդոյ զօրաւոր բանիւք:

36. Յովհաննէս Որոտնեցի, ուղղափառութեան հաստատիչն, Քրիստոսի հօտին վերակացուն, իմաստութեան տաճարն, երկնային կառավարն: Սա արար զԳիրս քարոզից իմաստասիրական և վարդապետական ոճով: Ասաց և վասն երկնային շարժմանց և եթերականաց և վասն մոլորականաց և անմուրից: Արար և զՔաղուածուս աւետարանին Յոհաննու...:

37. Գրիգոր Տաթևացի, չորրորդ Լուսաւորիչն Հայոց, տիեզերաց անշիջանելի ճրագըն...: Արար զգիրս բազումս երկնաշնորհ վարդապետութեամբ ի պէտս Հայաստանեայց եկեղեցւոյ, ի գարդ և ի պայծառութիւն աշակերտաց ճշմարտութեան, և են այսոքիկ. զՄեծ Հարցմունքն, զԱրիստոտելի գրոց լուծմունքն՝ զՍտորոգութեանցն, զՊերիարմենիասին, և զԱռաքինութեանցն. նաև զՊորփիրին, զՊարապմանց լուծմունքն, զՍաղմոսի քաղուածուն, զԱռակաց քաղուածուն, զԵրգ երգոցին, զԻմաստութեանն, և զԺողովողին. զԱմուսն հատորն և զՋրմուսն հատորն, զՅոբայ լուծմունքն, զՅոհաննու աւետարանի քաղուածուն. զԼուծմունքն Արիստակիսի և Գէորգեայ գրչութեան, զՓոքր Հարցմունքն Գէորգեայ, զՔաղուածուն Մատթէոսի աւետարանին, զԾաւլայ քաղուածուն, զՈսկեփորիկ գիրքն, և զԳիրքն ժալրագոյն վարդապետական իշխանութիւն տալոյ:

38. Յոհաննէս աստուածարան վարդապետն Դուռտեց, աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն: Արար զԾաւլեայ քաղուածուն, և զԴիոնեսիոսի լուծմունքն:

39. Գէորգ Երզնկացի, այլ կրթավարժ և հրահանգախղճ, աշակերտ սրբոյն Յոհաննու Որոտնեցոյն: Սա արար զԼուծմունս Առ որսի, և զՄեկնութիւն Ծաւլեայ մարգարէին: Նաև արար քարոզս իմաստասիրական ոճով ի պէտս վարդապետաց եկեղեցւոյ:

40. Յակոբ հանճարաշատն Ղրիմեցի, աշակերտն Գէորգեայ: Արար զՄեկնութիւն տոմարի և զԿազմութեան լուծմունքն:

41. Առաքեալ պետն Սիւնեաց, ջնորդի սրբոյն Գրիգորի Տաթևացոյն, այլ սուրբ և մաքուր, գերիմաստ և չքնաղաքարոզ: Սա ասաց զԳիրս քարոզից հրեղինաւ լեզուաւ: Արար և զԱշամ-գիրքն ռոմնաչափութեամբ հոմերական ոճով: Արար և զԼուծմունս Քերականութեան, այլև զԼուծմունս Սահմանացն՝ Դաւթի: Ասաց և զտանաւորս ի դէմս սրբոյն Էջմիածնի, և զպատմութիւնս սրբոյ Լուսաւորիչին, և մեծին Ներսէսի, և ի դէմս վարժապետին իւրոյ Մերենց Գրիգորին, և ի դէմս սրբոյն Գրիգորի Նարեկացւոյն, և ի դէմս նորավարժից մանկանց ի հրաւիրումն կրթութեանց, և ի դէմս հողմոց և եղանակաց:

42. Մատթէոս, աշակերտ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն, այլ ազնուամիտ և բանաստեղծ, ջոկափառեալ գիտութեամբ և աստուածաբան: Սա արար քարոզս Մ. աստուածատուր

շնորհիւն իւրով, և զԲաղուածուս շորից աւետարանացն և զԳործոց առաքելոցն, և զԾաղը-
րեայ Ը. խորհրդոց քաղուածուն: Արար և զգիրս Վեցօրէիցն Հայոց:

43. Առաքեալ Բաղիշեցի, այլ զուարթամիա և կորովաբան, հանճարապերն և աստ-
ւածաբան: Ասաց բազում գանձս և տալս քաղցր և անուշ եղանակաւ, զոր երգի մինչև ցալ-
սօր ինկեղեցիս Հայաստանեայց: Արար և ուրանաւօր զՊատմութիւն Յովասափայ թագաւորին
Հնգկաց:

44. Սիմեոն Ջուղայեցի, այլ բարեբարոյ և հեզահոգի, սուրբ և առաքինի, հմուտ
աստուածաշունչ գրոց և իմաստասիրական արտաքնոց պրակաց, որ զեղեցկիւ և պատշաճա-
ւորիւ շարագրութեամբ յօրինեալ յարդարէր դրանս քարոզից և խրատուց և զմեկնութիւնս ար-
տաքին գրոց: Արար և զԲերականութիւն պարզ և յստակ ռեով: Արար զՏրամաբանութիւնս
որ է ներածութիւն արտաքնոց գրոց, այսինքն է՝ հինգ Ընդհանրականացն Պորփիւրի, և տասն
Ստորոգութեանց, և այլ Տրամաբանութեանն Արիստոտելի: Նաև զգիրքն Պրոկղի իմաստասի-
րի զոր ի վրաց լեզուէն թարգմանեալ էր ի միւր լեզուս այլ ոմն նախագոյն եղեալ Սիմէոն
անուամբ քահանայ: Եւ այլ Սիմէոն վարդապետս զայն գիրքն ևս ուղղեաց, վասն զի առա-
ջին թարգմանութիւնն զաշխատութիւնս բազումս տայր կարգացողին, զի հոլովք անուանցն և
խոնարհմունք բայիցն և շարագրութիւնք բառիցն ոչ էր ըստ պատշաճին և ըստ քերականի ար-
□ Տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2216՝ Բանանիայի Սանահ[ն]եցւոյ ասացեալ ներքողեան ի վերայ սրբոյ էմիածնայ» (էջ 141ա—151ա, սկ. Երեւրկեացանծն գամի և կանարտարն խորանի»), և Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. № 117 (fol. 89').

3 Անանիայի վարդապետի Հաղրատացւոյ ասացեալ յաղագս Յովնաննու Մկրտչի: Տես՝ ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ, § 2:

Գ.—ԱՆ. ՍԱՆԱՀՆԵՑՈՒ ՄԱՍԻՆ (Մատենագրեպան Բյուրքեր)

1. ԵՊիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ համառոտ պատմութիւն», Վենետիկ, 1866, էջ 64:

2. ԵՄատթէոս Ուռհայեցի. Ժամանակագրութիւն», Վաղարշապատ, 1898, էջ 179:

3. ԵՀաւաքումն պատմութեան վարդանայ վարդապետի լուսարանեալ», Վենետիկ, 1862, էջ 121:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Յալիան Ղև.— ԵՇնորհալի և պարագայ իւր», Վենետիկ, 1873, էջ 192—193:

Յալիան Ղև.— ԵՀայապատում», մասն Բ, Վենետիկ, 1901, էջ 383:

Յակիմյան Ն.— ԵՔուղթ Մակարայ Բ. Նրուսաղէմի հայրապետի առ Վրթանէս եպիսկոպոսապետ Սիւնեաց յաղագս կարգաց եկեղեցւոյ», Վիեննա, 1930, § 3 և 10:

Նույն համաձայնքը տես նաև Հանդէս Ամսօրեայում, 1930, էջ 813 և 851—861:

Յառայան Էր.— ԵՀայոց անձնանունների բառարան», հտ. Ա, Երևան, 1948, էջ 148 § 4, էջ 152 § 17, էջ 153 § 18:

Սյվազյան Յվ.— [Նամակ Ճաքաղի հրատարակիչ Մսեր Մսերյանցին, ընկերդեան»-ի ձեռագրի մասին], Ճաքաղ, հտ. Ա, 1859, էջ 262—266:

Դուրյան Սղ.— ԵՊատմութիւն հայ մտտեանագրութեան», Կ. Պոլիս, 1886, էջ 47:

Սրվանգ Սարկավագ կամ Սրվանգ վարդապետ: Տես՝ Յեր-Փիճայան Սրվ.:

Ջաճիճյան Ս.Բր.— ԵՀայ գրականութեան պատմութիւն», մասն Ա, Նոր-Նախիչևան, 1914, էջ 162—163:

Ջարբիանայան Գար.— ԵՄատենագրան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1880, էջ 447—448:

Ջարբիանայան Գար.— ԵՀայկական հին դպրութեան պատմութիւն (Գ—ԺԳ դար)», Գ տպ., Վենետիկ, 1897, էջ 588—590:

Կարապետ եպիսկոպոս կամ Կարապետ վարդապետ: Տես՝ Յեր Մկրտչյան Կար.:

Կոնիքեր Գ. Կ. (Conybeare F. C.) — «A Catalogue of the armenian manuscripts in the British Museum», London, 1913, p. 339.

Կոստանայանց Կար. (հրատ.) — ԵՍտեփաննոս Օրդելեանի Ողբ ի Ս. Կաթողիկէն», Թիֆլիս, 1886, էջ 13—15:

Կոստանայանց Կար.— ԵԳրիգոր Մաղիսարոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 305—306:

Հացունի Վ.— ԵԿարեոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութեան», Վենետիկ, 1937, էջ 491—492:

Հովսեփյան Գար.— ԵՌոսրովիկ թարգ-

բերվում են այս կամ այն ճառը համանուն Անանիաներից մեկին կամ մյուսին վերագրելու հարցում:

• • •

1. Երանելոյն Անանիայի Հայոց վարդապետի ի խորհուրդ Յովնանու մարգարէի. «Յ:սղագս Յովնանու՝ հակիրճ և համառօտ բանի անցցուք, բացայայտելով զժածկնայ խորհուրդն ի նմա...», սես՝ Բ. Սարգիսյան, «Անանիա Քարղմանիչն և իւր գրական գործոց նմոշններ», Վենետիկ, 1899, էջ 1—15:

Տես նաև Երևանի Գետ. Մատ. ձեռ. № 998 (էջ 184ր—190ա). № 176 (էջ 190ա—209ա), № 3281 (էջ 12բ—16ա, սկ. «Յողագս «Յոնանու մարգարէի հակիրճ»), № 3320 (էջ 2ա—6ա, վերջից թերի), № 6345 (էջ 3բ—16ա), № 3956 (էջ 1ա—8ա), № 1452 (էջ 14բ—22ա), № 788 (էջ 254ա—257բ), № 83 (էջ 200ա—306բ), № 7462 (էջ 1ա—6բ). Լենինգրադի ИКСТ. ВОСТ. арх. рук. В—121. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1 (էջ 222ա):

Ձեռագրերում այս ճառը պատահում է մի քանի տարբեր խորագրերով. այսպես՝ «Երանելոյն Անանիայի Հայոց վարդապետի ի խորհուրդ Յովնանու (կամ Յունանու) մարգարէի», «Երանելոյն Անանիայի վարդապետի ի խորհ. Յովն. մարգ.», «Անանիայի վարդապետի ասացեալ ի խորհ. Յովն. մարգ.», «Քարոզ երանելոյն Անանիայի վարդապետի ի խորհուրդ (կամ ի վերայ խորհրդոյ) Յովն. մարգ.»:

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութիւնը վերագրում է Ան. Քարղմանչին, իսկ Գ. Զարբհանալյանը՝ Ան. Սանահնեցուն:

Մեր կարծիքով Անանիայի սույն ճառից պետք է կազմված լինի Հովհան Ոսկերբերանի և Եփրեմ Ասորու համանման աշխատութիւնների հետ միաձուլված հետեւյալ խմբագիր ճառը.

— «Երիցս երանելի սուրբ վարդապետացն Յոնանու Ոսկերբերանին, և Եփրեմի, և Անանիայի Շիրակացոյն ասացեալ ի խորհուրդ Յունանու մարգարէի. «Մարգարէիցն նախատինս ղնէին Իսրայէլացիքն՝ զի յորժամ հաճոյմանէին զնօսաւ մարգարէքն վասն ճնազանգելոյ օրինացն տեա-

ղքն...», Երևանի Գետ. Մատ. ձեռ. № 2111. էջ 202ա—205բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3795՝ «Երիցս երանելու վարդապետացն Յոնանու Ոսկերբերանի և Եփրեմի և Անանիայի ասացեալ ի Յունան մարգարէ» (էջ 71բ—76 ա), № 1007՝ նույն խոր. (էջ 93բ—101բ):

2. Յողագս Յովնանու Մկրտչի, Անանիայի վարդապետի ասացեալ. «Է՛ ձեռն առեալ զիմաստս հոգւոյն ձեռնառութեամբ շնորհողին իմաստութեան հոգւոյն՝ ըստ չափոյ տհարութեանս մերոյ...», սես՝ Բ. Սարգիսյան, «Անանիա Քարղմանիչն և իւր գրական գործոց նմոշններ», էջ 16—20:

Տես նաև Երևանի Գետ. Մատ. ձեռ. № 993՝ «Սրբոյն Անանիայի Հայոց վարդապետի դրուտս ի սուրբ Մկրտչին Յովնանու» (էջ 597բ—601ա), № 2043՝ «Յողագս Յովնանու Մկրտչի, Անանիա վարդապետի ասացեալ» (էջ 245ա—250ա). իսկ № 2044-ը տալիս է Ան. Սանահնեցուն՝ «Յօսուսս Յովնանու Մկրտչի, Անանիայ վարդապետի ասացեալ Հողբատացոյ» (էջ 234բ—244բ):

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութիւնը վերագրում է Ան. Քարղմանչին, իսկ Գ. Զարբհանալյանը՝ Ան. Սանահնեցուն:

3. ՅԱնանէ վարդապետէ ասացեալ ի խաչելութիւնն Պետրոսի. «Իսկ Պետրոս երկրորդ անգամ եղեալ յսղին դրախտին և կեղեցոյ, ճիմն հասատութեան, կրկին անման, առեալ զոսս ըստանձնեալ, ի տան լուացման սուրբ, ուղղեք առ վերին աշխարհն ընրանայ...», Երևանի Գետ. Մատ. ձեռ. № 2039, էջ 24բ:

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութիւնը միտում է վերագրելու Ան. Շիրակացուն:

4. Անանիայի վարդապետի ի խորհուրդ կատարման առաքելոյն Պետրոսի. «Իսկ երանելին Պետրոս հասեալ ի տեղի կատարման պատարագեալ ի վերայ խաչին...», անգ. էջ 24բ—27բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 3796 (էջ 36բ—40բ) և № 1007 (էջ 39ա—46բ): Հմմտ. Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 97՝ «Անանիայ Հայոց վարդապետի ասացեալ ի խորհուրդ կատարման սուրբ առաքելոյն Պետրոսի» (էջ 278ա, սկ. «Մարգարէն Դաւիթ

առյցեալ հոգւով սրբով, բացաքարոզէ զերաշս տնաւ»):

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութունը միտում է վերագրելու Ան. Շիրակացուն:

Ճ. Անանիայի խօսք և խրատ անտարանական, առաքելական և մարգարեսկան որ տանին զմեզ ի կեանսն յաւիտեանական և ոչ տան խոտորել յաջ կամ յահեկ. «Քանզի գրեալ է և պատուիրեալ է, թէ մի՛ յաջ խոտորեալ և մի՛ յահեկ...», *Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 732, էջ 212ա—260բ:*

Ուրիշ ձեռագրերում այս բնագիրը կրում է «խօսք և խրատը յաւիտեանականը, որ տանի ի կեանս յաւիտեանականս» խորագիրը:

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութունը միտում է վերագրելու Ան. Շիրակացուն:

Ճ. Խրատը ոգեշահք վասն զղջման արտասուաց ասացեալ Անանիայի սուրբ և ընտրեալ վարդապետին. «Ո՛վ աստուածասեր սիրելի եղբայր [խնդրոյ] սիրոյն աստուծոյ, զբանն զոր աղաչեցեր զիս, ցուցանել քեզ յաղագս զղջման և արտասուաց...: Արդ շնորհք արտասուաց...» (*հրատ. Գ. Աշղբյան*), Պատկեր, 1808/1800, էջ 197—201, 217—221, 241—246 և 428—428:

Հրատարակիչը վերագրում է Ան. Նարեկացուն:

Ձեռագրերում այս բնագիրը պատահում է մի քանի տարբեր խորագրերով: Վերահիշյալ խորագրով են Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 1098 (էջ 381բ—387բ) և Թավրիզի Առաջնորդարանի ձեռ. № 8 (էջ 55ա): Մի քանի ձեռագրերում կրում է «Անանիայի ոգեշահութեան իմաստասիրի խրատը ոգեշահք՝ զղջման և արտասուաց», ինչպես Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 1137 (էջ 109ա—114բ). Լենինգրադի Վուստ. Բոստ. արմ. քյկ. А-28. Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 258 (էջ 38ա) և № 284 (էջ 105ա). Նիկոսիայի—Անթիլիասի ձեռ. № 0-ը ունի՝ «Անանիայի ոգեշահութեան վարդապետի խրատ, զոր արարեալ է յաղագս արտասուաց» (էջ 425բ)¹, Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 767-ը ունի՝ «Խրատը ոգեշահք վասն զղջման և արտասուաց,

ասացեալ Անանիայի վարդապետի ի խնդրոյ միայնաւորի ումեմն» (էջ 98ա—110ա): Պատահում է նաև «Սրբոյն Անանիայի ասացեալ խրատը ոգեշահք» խորագրով, ինչպես՝ Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 2335 (էջ 296բ—302ա, սկ. «Ձրանն վասն որոյ աղաչեցեր զիս և ասացեր, երէ ինձ զղջման և արտասուաց խրատ գրեալ: Արդ շնորհք արտասուաց») և № 788 (էջ 276բ—281ա, սկ. «Ձրանն... երէ զղջման և արտասուաց խրատ գրեալ, և ես սակաւուց պատճառս ետու: Արդ շնորհք»): Տես նաև Երուսաղեմի Հայկ. Մատ. ձեռ. № 1՝ «Խրատը արտասուաց տո միանձուցն, երանելոյն և հոգեշահ վարդապետին Անանիայի յաղօրից նարեկացոյ» (*մասն Գ, էջ 295բ, սկ. «Ձրանն զոր պատուիրեցեր, թէ ինձ զղջման և արտասուաց խրատ գրեալ»*): Մի շարք ձեռագրերում այս բնագիրն սկսվում է ուղղակի «Արդ շնորհք արտասուացն նշանակ է» բանորով, ինչպես՝ Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 8533՝ «Վասն աղօրիւն (sic) և արտասուաց խոստովանութեան» (էջ 117ա—129բ), № 1836՝ «Վասն աղօրիցն և արտասուաց և խոստովանութեան» (էջ 58բ—65ա), № 1473՝ «Վասն արտասուաց և խոստովանութեան» (էջ 348բ, վերջից Թերի), № 3139՝ «Վասն աղօրից և խոստովանութեան» (էջ 16ա—27բ), № 6907՝ «Սուրբ և երջանիկ հօրն Գրիգորի (sic) նարեկացոյ խրատը վտան աղօրից և արտասուաց» (էջ 108ա—126բ), Տես նաև Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 172 (էջ 34ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 247 (էջ 90ա), Համառոտված խմբագրութիւն է Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 1475՝ «Վասն արտասուաց որ հոգւոյ շահ է և լոյս» (էջ 149բ—152ա, սկ. «Արտասուսն սիրոյ ծնունդ է և արքայութեանն ցանկալոյ»):

Թվով ավելի շատ են այն օրինակները, որոնք կրում են Ան. Շիրակացու անունը, հետեյալ խորագրով. «Անանիայի Շիրակացոյ ասացեալ յաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի», ինչպես՝ Երեանի Պետ. Մատ. ձեռ. № 4213 (էջ 376բ—383ա), սկ. «Ո՛վ աստուածասեր եղբ.»), № 785 (էջ 422բ—429բ, սկ. նույն),

¹ Հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1934, էջ 831:

№ 702 (էջ 467ա—470ա, սկ. նույն), № 1157 (էջ 75ա—82բ, սկ. նույն). Ծրուսաղծմի Հայկ. Մատ. ձեռ. № 461 (էջ 982, սկ. «Ասեր՝ ո՛վ աստուածասեր եղր»): Տես նաև Վիեննայի Մխթթ. Մատ. ձեռ. № 371 (էջ 17ա). Թափրիգի մասնավոր անձանց ձեռ. № 35 (էջ 376բ). Անկուրիայի Կարմիր-վանքի ձեռ. № 225 (էջ 73):

Կան նաև օրինակներ, որոնք կրում են
 14 Ան. Նարեկացու անունը, ինչպես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 6707՝ «Արդ, ո՛վ տեր ճոզևոր, գու խոնարհնցար յիմ նուսառու- քիւնս և աղաչեցեր քե ինձ խրատ գրեա քանհանայեղան կարգի, և խաղաղութեան և խոնարհութեան և վասն այս կենացս ու- հայնութեան...: Խրատը ոգեշահը զոր արա- րեալ է Անանիայի Նարեկայ վարդապետի յաղագս արատասուաց» (էջ 331ա—336բ, սկ. «Արգ շնորհք արատսուաց»): Նաև նույն
 23 մատ. ձեռ. № 1521, որտեղ բնագիրը երկու մասի է բաժանված՝ ուրույն խորագրերով. «Շնորհալից վարդապետին Անանիայի Նա- րեկացույ ասացեալ վասն աղօթից, պահոց և արատսուաց» (էջ 282ա—284բ, սկ. «Արգ շնորհն արատսուաց նշան ես») և «Նորին Անանիայի հոգեյի վարդապետի և Նարեկայ վանաց առաջնորդի ասացեալ վասն զղջման և արատսուաց և աղօթից» (էջ 284բ—286ա, սկ. «Մի՛ որ ի մարգկանե փոքր համարեսցի
 20 զշնորհս զղջման»):

Հավանաբար այս ճառն է և կամ սրանից խմբագրված մի ճառ է «Վասն խոստովա- նութեան» խորագիրը կրող այն բնագիրը, որ Մեղր և Անանիա վարդապետների ա- նունն է կրում, փարիզյան ձեռագրերից մե- կում՝ Bibl. Nat. Ms. Arm. № 128: «Dis- cours des vsrdapets Melr et Anania sur la confession» (fol. 118^r)¹.

7. Յաղագս խորհրդոց զգուշութեան.
 63 «Արգ նախ յառաջ քան զամենայն խորհրդ- րոց մաքրութեան շան տար...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 286ա—287ա:
 Տես նաև նույն մատ. ձեռ. № 788՝ նույն խոր. (էջ 281ա—282ա), № 229՝ նույն խոր. 65 (էջ 274ա—275բ, վերջից թերի), № 641՝

«Նորին [Անանիայի] բանք յաղագս խոր- հրդոց զգուշութեան» (էջ 33ա—36ա, սկ. «Արդ նախ առաջ քան զամենայն ինչ խոր- հրդոց»), № 5707՝ «Այլ և զայդ աղաչեցեր երե յաղագս խորհրդոց խրատ գրեա որ ըզ- գուշմալ գիտեմ և պատրաստել. Անանիա» (էջ 330ա—331ա, սկ. «Արդ նախ յառաջ քան զամենայն ինչ»): Նիկոսիայի—Անթիլիասի ձեռ. № 8=հին № 40՝ «Նորին յաղագս խոր- հրդոց զգուշութեան» (էջ 31ա, սկ. նույն). Մյունխենի K. Hof- und Staatsbibl. Cod. Arm. III: «Նորին [Անանիայի] վասն խոր- հրդոց ոգեշահն» (fol. 124^r, սկ. «Նախ և առաջին քան զամենայն»):

Սույն ճառը գտնվում է նաև Եփրեմ Խո- րին Ասորու անունով, «Վասն խորհրդոց մաքրութեան խորագրով, տես՝ Մարտին Եփ- րեմի մատենագրութիւնք», հտ. 7, Վենետիկ, 1836, էջ 220—223:

8. Նրանելի սուրբ վարդապետին Անա- նիայի ասացեալ խրատ վասն խոնարհու- քեան. «Արգ որպես ասե առաքեալ[ն]՝ ա- մենայն խոնարհութեամբ զմիմեանս լա- համարել քան զանձիւս...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 80, էջ 67ա—73բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 6031՝ «Քա- րոզ Անանիայի ասացեալ յաղագս խոնար- հութեան» (էջ 97ա—100բ), № 641՝ «Վասն խոնարհութեան» (էջ 23բ—26բ), № 601՝ «Անանիայի վասն խոնարհութեան» (էջ 20 112բ—117բ), № 5707՝ «Այլ և զայդ ճարքեր երե որչափ մասունք են որ մարդն կատա- րեալ խոնարհութիւն ստանայ և աղաչեցեր երե զայդ գրեա ի գիրս Անան(սի)» (էջ 328ա—329ա), № 788՝ «Եւ քե որչափ մա- սունք են մարդ որ կատարեալ առաքինու- քիւն ստանայ» (էջ 282ա—283բ, վերջից թերի). Վիեննայի Մխթթ. Մատ. ձեռ. № 364 (էջ 138բ). Մյունխենի K. Hof- und Staats- bibl. Cod. Arm. III (fol. 115^r). Նիկոսիայի - Անթիլիասի ձեռ. № 8=հին № 40 (էջ 42ա):

Սույն ճառը մի քանի հետնադարյան ձե- ուագրերում Անանիա Շիրակացու անունով է, ինչպես՝ Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2524՝ 65 «Երատ վասն խոնարհութեան, ասացեալ սուրբ վարդապետին Անանիայի Շիրակացոյ»

¹ F. Macler. «Catalogue», p. 68.

(էջ 200բ—204ա) և № 1553՝ նույն խոր. (էջ 235ա—242ա). նաև Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 240՝ «Անանիայի Երթակացոյն ասացեալ վասն խոնարհութեան» (էջ 90բ):

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութիւնը միտում է վերագրելու Տիրուի վանահայր Անանիային և կամ Անանիա Սեաստացուն:

Ձեռագրերում պատահում է նաև Գրիգոր Լուսաւորչի անունով, Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 8029՝ «Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ վասն խոնարհութեան» (էջ 190ա—193ա), № 581՝ «Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին ասացեալ վասն խոնարհութեան» (էջ 176ա—178ա) և № 2939՝ «Գրիգոր Լուսաւորչէ ասացեալ վասն խոնարհութեան» (էջ 49ա—50բ): Ծանոթ է նաև Ծփրեմ Ասորու անունով, տես՝ «ՍՐՐՐՐՐՐՐ Ծփրեմի մասնագրութիւնը», հտ. Գ, Վենետիկ, 1836, էջ 215—219:

Զ. Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ իրատ վասն համբերութեան և խաղաղութեան. «Արդ յորժամ մարդն շնորհս առնու յաստուծոյ իմաստութեան և երկիւղի, եւ ոչ տայ պատճառս արամութեան ընկերին...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 283ա—284ա:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 8029 (էջ 186բ—189բ), № 788 (էջ 275բ—276բ), № 7993 (էջ 144բ—146ա), № 641 (էջ 19բ—23բ), № 601 (էջ 117բ—122ա) և № 5707 (էջ 326բ—327բ). Նիկոսիայի-Անթիլիասի ձեռ. № 8 (էջ 443ա) և № 8—հին № 40 (էջ 37ա)՝ Վիեննայի Մխիթ. Մատ. ձեռ. № 364 (էջ 144բ). Լոնդոնի Brit. Mus. Ms. Or. № 6986 (fol. 214՝). Մյունխենի K. Hof- und Staatsbibl. Cod. Arm. III (fol. 105՝).

Ձեռագրերում բնագրի խորագիրը, վերոնշըլյալից բացի, պատահում է նաև՝ «Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ վասն համբերութեան», «Նորին (կամ Անանիայի վարդապետի) իրատ վասն համբերութեան (կամ վասն համբերութեան և խաղաղութեան)» ևն:

10. Նորին բանք աղօթից. «Ջկարգեալ աղօթսն հասարակաց գառուընչեան և զգիշերոյ բնաւ մի՛ անտես առնել...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 284ա—284բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 641՝ նույն խոր. (էջ 26բ—29բ). Իսկ № 8029 ձեռագրում գրիչը նույնպես խորագրելով «Նորին բանք վասն աղօթից» (էջ 193ա, թերի)՝ նկատի ունի Գրիգոր Լուսաւորչին, որովհետև նրանից անմիջապէս առաջ գտնվող ճառը, որի սկզբնավորութիւնն է «Արդ որպէս ասէ առաքեալն և որը նույնպէս ծանոթ է Ան. վարդապետի անունով, նա խորագրել է՝ «Գրիգորի Հայոց Լուսաւորչի ասացեալ վասն խոնարհութեան»: Տես դարձալ Նիկոսիայի-Անթիլիասի ձեռ. № 8—հին № 40 (էջ 46ա):

11. Այլև զայդ ճարքեր թէ զիա՞րդ կարևարգ զերկրաւորս արհամարհել ուր անցանք. «Արդ երբ կամիս որ յաղթես աշխարհի և ոչ ըմբռնիս ի կենցաղոյս պատրանս, դու խորհրդամբ մի՛ա դիր, և իմաստութեամբ փորձեա՛...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 2335, էջ 284բ—286ա:

Երևանի Պետ. Մատ. ձեռագիր օրինակ-ների մեջ հնագույնը, որ գրված է 1341 թվականին, է № 8030-ը՝ «Անանիայի վարդապետի ասացեալ հոգեշամ վասն այն կենացն» (էջ 76բ—81բ): Տես նաև նույն մատ. ձեռ. № 2081՝ «Անանիայի վարդապետի ասացեալ իրատ հոգեշամ վասն այն կենաց» (էջ 130բ—133ա), № 7248՝ նույն խոր. (էջ 314բ—318բ), № 2223՝ նույն խոր. (էջ 113բ—116բ), № 2939՝ «Անանիա վարդապետի իրատ ոգեշամ թէ ո՛րպէս կարասցէ մարգըս զմիտս իւր յորոշել յերկրաւորացս և զայս կեանքս արձամարհել և աստուծոյ միայն ցանկալ և արքայութեանն» (էջ 44բ—46բ), № 3281՝ «Անանիայի հոգեւորոգ վարդապետի իրատ հոգևոր ասացեալ թէ ո՛րպէս կարասցէ մարգ» ևն (էջ 24բ—25ա, վերջից թերի), № 993՝ «Անանիայի հոգևորոգ վարդապետի իրատ հեզևոր» ևն նույն (էջ 395ա—396ա), № 1873՝ «Երանելոյն Անանիայի վարդապետի իրատ հոգևոր ասացեալ» (էջ 152ա—154ա), № 9066՝ «Անանիա վարդապետի ասացեալ» (էջ 34բ—

՝ Հմմտ. Լանդա Ամսթրեյ, 1904, էջ 531 և 536:

43բ, վերջից թերի), № 1356՝ նույն խոր. (էջ 78բ—80ա), № 6029՝ «Անանիայի վարդապետի ասացեալ հոգեշահ բան» (էջ 154բ—159ա), № 4740՝ «Անանիայ վարդապետի ասացեալ վասն անցաւոր աշխարհիս» (էջ 333ա—336ա), № 4828՝ «Երանելոյն Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ վասն անցաւորիս» (էջ 467ա—468բ), № 5137՝ նույն խոր. (էջ 127—129), № 2236՝ «Սրբոյն Անանիայի վարդապետի ասացեալ վասն անցաւոր աշխարհիս, որ սուտ է և խարէ գմարդ, և որպէս զբարզ ի նանիր անցանէ» (էջ 216բ—217բ), № 641՝ «Այլ և զայդ... արհամարհել զերկրաւորս որ անցանէ և աստուծոյ միայն ցանկալ» (էջ 29բ—33ա), № 5707՝ «Այլ և զայդ... արհամարհել զերկրաւորս որ անցաւոր է և աստուծոյ միայն ցանկալ և արքայութեան նորա. Անանի (sic)» (էջ 329ա—330ա):

20 Տես դարձյալ Նիկոսիայի-Անթիլիասի ձեռ. № 8=հին № 40՝ «Այլ և զայս» ևն (էջ 48բ). Երուսաղեմի Հալկ. Մատ. ձեռ. № 11 (էջ 630ա). Թրիքիսի Պետ. Թանգ. հալ. ձեռ. № 11 (էջ 383ա). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 240 (էջ 87բ) և № 278 (էջ 86ա):

22 Զեռագրերում երբեմն պատահում է նաև Ան. Շիրակացու անունով, տես Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 4951՝ «Սրբոյ Անանիայի Շիրակուանցոյ Հայոց վարդապետի ասացեալ վասն անցաւոր աշխարհի» (էջ 135բ—139ա) և Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 99՝ «Անանիայի Շիրակացւոյ սուրբ վարդապետի ասացեալ հոգեշահ բանք վասն ամենայն մարդոց» (էջ 74ա):

21 Բ. Սարգիսյանը սույն ճառը Ան. Նարեկացուն է վերագրում. այդ կարծիքին է նաև Գ. Զարբանալյանը:

12. Անանիայի Հայոց վարդապետի խորատք քահանայից. «Արդ՝ քահանայտէան աստիճանն ինքն յայտնի է արժանաւորութեամբ՝ թէ որպէս պարտ է ինել սուրբ և ամարատ...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1098, էջ 398ա—399բ:

Երևանի Պետ. Մատ. ձեռագրերի մեջ սույն օրինակը հնագույնն է, որոված՝ 1320 թվականին Տես նաև նույն մատ. ձեռ. № 7131՝ «Անանիայի Հայոց վարդապետի ասացեալ խորատք»

(էջ 104բ—116ա), № 80՝ «Անանի (sic) Հայոց վարդապետի ասացեալ խորատ քհ.ից» (էջ 108ա—111բ), № 838՝ «Անանիայ Հայոց վարդապետի ասացեալ խորատ քհ.ից» (էջ 97բ—107բ), № 3178՝ նույն խոր. (էջ 103բ—113բ), № 6031՝ «Անանիայ վարդապետի ասացեալ խորատ քհ.ից» (էջ 176բ—182բ), № 1475՝ «Աստիճան և խորատ քհ.իցն» (էջ 157բ—163ա), № 709՝ «Սրբոյն Անանիայի վարդապետի բացատրեամբ խորատք ոգեշահք ի զգուշութիւն սպասաւորաց մեղսաքաւիչ սուրբ պատարագին և ամենայն հաւատացելոց Քրիստոսի» (էջ 158ա—158բ, վերջից թերի): Տես նաև Փարիզի Bibl. Nat. Ms. Arm. № 171 (fol. 98^r). Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 266 (էջ 254ա):

Վերահիշյալներից № 3178 ձեռագրի գրիչը թեև խորագրել է «Անանիա Հայոց վարդապետի ասացեալ», բայց այդ համարել է Ան. Շիրակացուն, որովհետև հաշորդ ճառը նա խորագրել է «Նորին Անանիայի Շիրակացւոյն» (տես § 13): Նույնպես է նաև № 838 ձեռագրում:

Բ. Սարգիսյանը ճառի հեղինակութունը վերագրում է Ան. Նարեկացուն:

13. Նորին Անանիայի Շիրակացւոյն է, խորատ քահանայից և ժողովրդոց. «Եւ արդ աղաչեմ զձեզ զամենեսեան, մի՛ դիրաշարժս լինել ի վիճարանութիւնս և ի կախս և դիրաշարժ ի հաշտութիւն և ի խաղաղութիւն...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 3178, 114ա—124բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 7131՝ «Նորին Անանիայի Շիրակացւոյն (sic) խորատ քհ.ից և ժող.ոց» (էջ 116ա—127բ), № 838՝ «Նորին Անանիայի Շիրակացւոյն (sic) խորատ քհ.ից և ժող.ոց» (էջ 107բ—118ա), № 80՝ «Նորին Անանիայի է ասացեալ խորատ և կանոն քհ.ից և ժող.ոց» (էջ 112ա—113բ, սկ. «Եւ արդ աղաչեմ զամենեսեան զձեզ զժուարաշարժ լինել»), ևն:

Այս բնագիրը Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրական»-ի «Ան զասս քահանայից» գլխից հանված մի համաված է. հմմտ. «Ներսեսի Շնորհալու կաթողիկոսի Հայոց թուղթ ընդհանրական առ համօրէն հայասեռ ազինս», Վենետիկ, 1830, էջ 58—63:

14. Անանիայի Հայոց վարդապետի սակաբացայայտութեան բուռն. «Կամ եղև ինձ սակաւ ինչ աշխատասիրել սակա բուռն բացայայտութեան ի բազմաց անտես եղեալ...», տես՝ Ա. Գ. Աբրահամյան, «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», Երևան, 1944, էջ 237—250:

Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. № 3710 ձեռագրից, № 497 ձեռագրի համեմատութեամբ Այս ճառը, որ թվերի խորհրդավոր նշանակութեան մասին է խոսում, Գ. Տեր-Մկրտչյանի և Ա. Աբրահամյանի կարծիքով Ան. Նարեկացուն է պատկանում, իսկ Գ. Չարբանաւլյանի և Ս. Հայրապետյանի կարծիքով՝ Ան. Շիրակացուն:

15. Բանք աստուածայինք պիտանի ամենայն կրօնաւորաց, Անանիայ վարդապետի ասացեալ. «Երևեցո՛ տեր զընորհս քո ի ծառայս քո և զգութ քո ի ստեղծուածս քո, զողորմութիւն քո ի պաշտօնեայս քո...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 9100, էջ 219ա—226բ:

Տես նաև Թավրիզի մասնավոր անձանց ձեռագիր № 12 (էջ 199—206)¹, Նշվում է, որ Արղնիի Բարձրահայաց Ս. Աստվածածնի վանքի № 139 ձեռագիր աղոթագրքի մեջ ես կա մի աղօթք «Անանիայ» անունով, բայց մեզ հայտնի չէ՝ այդ բնագիրը վերահիշյալի հետ նույնն է, թե ոչ²:

16. Անանիայ. «Դարձեալ սոյն այր այսպիսի տայ օրինակ կալոյ և մնալոյ երկրի և ծովու ի վերայ ոչբնչի...», Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1267, էջ 15բ:

Գտնվում է Վարդանի կաղձած Հին Կտակարանի մեկնութիւններում, Մենդոց գրքի մեկնութեան մեջ: Կարող է Ան. Շիրակացու գործը լինել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մեր նշած բնագրերի մասին որոշ տեղեկութիւններ և քննական կարծիքներ տեսնել ԱՆԱՆԻԱ ԹԱՐԳՄԱՆԻՉ, ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ, ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ և ԱՆԱՆԻԱ ՍԱՆԱՀՆԵՑԻ անունների տակ ցույց տրված գրականութեան մեջ:

¹ Հմմտ. չ. Անույան, «Ծուրհակ», էջ 86:

² Հմմտ. Գ. Սրվանձառյանց, «Քորոսս սգար», մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 390:

ՕՆՆՆԻՆ ԳՆՀՆԵՑ [I]*

(՝Ανανάς ιεροός)

Փյունիկեցի վկա՝ Դիոկլետիանոս կայսրի (284—305 թթ.) օրով Նրա համառոտ վկարանութիւնը, Տեր Իսրայելի խմբագրութեամբ, տես՝ *Patrologia Orientalis*, Paris, t. XIX, 1926, p. 128. և նույնի ֆրանսերեն թարգմանութիւնը՝ նույն էջերում: Գրիգոր Սերենցի Հայսմավուրջում կա այս համառոտ վկարանութեան մի ուրիշ խմբագրութիւնը, տես՝ «Ժառ սրբոց վկայիցն ճշմարտին աստուծոյ», այն է՝ «Յայսմաւուրջ», Կ. Պոլիս, 1706, էջ 455. այլ տպ. տես՝ «Յայսմաւուրջ», Կ. Պոլիս, 1708, էջ 487. այլ տպ. տես՝ «Գիրք որ կոչի Այսմաւուրջ», Կ. Պոլիս, 1730, էջ 345—346: Մեկ կամ մյուս խմբագրութեան պատկանող օրինակներ տես նաև Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 7433 (էջ 218բ), № 7463 (էջ 190ա), № 4873 (էջ 41բ), № 7362 (էջ 308բ), № 1511 (էջ 311ա), № 1510 (էջ 315ա), ևն: Հմմտ. վկայաբանութեան հունարեն բնագիրը՝ «Synaxarium Ecclesiae Constantinopolitanæ», Bruxellis, 1902, p. 426—427. Հմմտ. նաև լատիներեն վկայաբանութիւնը՝ *Acta Sanctorum*, Februaril t. III, p. 497—500.

ՕՆՆՆԻՆ ԳՆՀՆԵՑ [II]

(՝Ανανάς ιεροός)

Վկայակից Շմավոնյանների, 339 թ.: Վկայութիւնը տես ՇՄԱՒՈՆ ԲԱՐ-ՍԱՐԷ անվան տակ, վերջինիս վկայաբանութեան ընդարձակ բնագրում (Սոփերք Հայկեղանք, հա. Ի):

ՕՆՆՆԻՆԵ ԿԱՄ ԵՐԵՔ ՄՆԵՆՈՒՆԵ

Ըստ ավանդութեան՝ Հուդայի ցեղից երեք եղբայրներ՝ Անանիա, Միսայել և Ազարիա, այլ անուններով՝ Սեդրաք, Միսաք և Աբեդ-

* ՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ. Մատենագրական տեղեկութիւններ տես՝ J. Bollandus, «De sanctis martyribus Anania presbytero, Petro Clavigero et VII millitibus», *Acta Sanctorum*, Februaril t. III, Parisla, 1865, p. 495—497.— Մ. Ավգերյան, «Հիպոտար վարք և վկայաբանութիւն սրբոց», հա. ԺԲ, Վենետիկ, 1816, էջ 33—34:

նագով, Նրանք, ըստ Աստվածաշնչի, մերժե-
լով երկրպագել Բարեյոնի Նարուզողոնուոր
արքայի ոսկի արձանին, նետվեցին հնոցի
մեջ, բայց Յնացին անհնաս: Նրանց մասին
հայ մատենագրության մեջ կան այլ նյութեր
ևս, որոնց բովանդակությունը շեղվում է
Աստվածաշնչի գրույցից, պատմելով մինչև
իսկ Անանիանների նշխարների գլուտի մա-
սին՝ պարսից Ղաամ Թագավորի որով Բարե-
յոնում:

1. Յաղագս երից մանկանցն Անանիանց
որ ի Բաբելոն. «Յայնժամ արք հինգ զօրա-
ւորք կապեցին զնոսա, և կապեցին] ճորա
վարափօք և արախոսրափօք, պատմունճ-
նօք և զանկապանօք, որ և խոնավն...»,
Երևանի Պատ. մատ. ձեռ. № 101, էջ 398ա:

2. Վկայութիւն սրբոց երից մանկանցն.
«Յաղագս փոխանորդութեան քաղաւորացն
Քաղղեացւոց պատմե Յովսեպոս այսպէս...»,
Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ. № 225, էջ
29բ—30ա:

3. Վկայութիւն սուրբ մանկանցն Անա-
նիայի, Ազարիայի և Միսայելի. «Յայնժամ
երկուցեալ Նարուզողոնուոր՝ զմտաւ ածեալ
և ճաւատացեալ, առաքեաց ի մօտաւորս և
հեռաւորս...», Վենետիկի Մխիթ. Մատ. ձեռ.
№ 307, էջ 87ա—87բ:

Վերջ՝ «Այսպէս ճգնեցան երեք մանկուն-
քըն, և եղեն ի պահեստի ամս հինգ հարիւր
և քառասուն, և յարուցեալք, և դարձեալ հ-
ղան նշխարք նոցա յերկրի՝ ի բժշկութիւն
հաւատացելոց» ևն:

4. Գիւտ ճշտարաց Անանիանց երից
մանկանցն. «Յամս Վլամ Պարսից արքայի
յայտնեցան ճշտարք ոսկերաց երանելեացն
Անանիանց՝ կամօքն աստուծոյ բարերարի,
և յայտնեցան այսպէս...», Վենետիկի Մխիթ.
Մատ. ձեռ. № 303, էջ 203բ—210բ:

Տես նաև նույն մատ. ձեռ. № 225 (էջ
30բ—31բ):

Տես նաև ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷ անվան
տակ՝ «Պատմութիւն Դանիելի մարգարէին

1 Տես Աստվածաշնչի մեջ՝ «Մարգարէութիւն
Դանիելի», զԵ. Ա, Բ և Գ.—Մ. Ազգերյան, «Հեռ-
կատար վարք և վկայարանութիւն սրբոց», հտ. Գ,
Վենետիկ, 1818, էջ 412—430:

և երից մանկանցն՝ Անանիայի, Ազարիայի
և Միսայելի», և մի քանի նման ընագրեր:

ԱՆՈՒՆՈՒՆԵՐ

Այսպէս են կոչվում հայկական մատենա-
գրության պատմության մեջ այն մի շարք եր-
կերի հեղինակները, որոնց ինքնությունն ան-
հայտ է (օրինակ՝ Անանուն քերական) և կամ՝
նույնինքն այլ երկերը (օրինակ՝ Անանուն
ժամանակագրություն): Անանուն հեղինակ-
ների և անանուն հեղինակությունների թիվը
շատ ստույար է և բոլորը լրիվ նշել հնարա-
վոր կլինի միայն այն ժամանակ, երբ մենք
կունենանք մատենագրական բնագրերի հաշ-
վառման լիակատար պատկերը: Ստորև այ-
բութեանական կարգով նշում ենք գրականու-
թյան մեջ արդեն հայտնե «Անանուն»-ները:

Պայմանական նշումներ

Մտեր ժամանակագրություններ, հտ. Ա և Բ—
Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.
Հատար 1—III: Կարճեց՝ Վ. Ա. Հեղորյան: Երեւան,
1951—1958:

1. ԱՆԱՆՈՒՆ կամ ԿԵՂԾ-ՍԵՔԷՆՍ կամ
ԿԵՂԾ-ԱԳԱՔԱՆԳԵՂՈՍ: Տես՝ ՍԵՔԷՆՍ:

2. ԱՆԱՆՈՒՆ ԱՆՈՒՇՊԱԿՑԻ: Տես՝ ՋԱՔԻ
ԱՆՈՒՇՔԱՆՔՑԻ:

3. ԱՆԱՆՈՒՆ ԱՐԾՐՈՒՆԻ ՊԱՏՄԱԳԻՐ:
Այսպէս է անվանվում անհայտ հեղինակն
այն Արծրունց Պատմության, որը գտնվում
է Քոյմա Արծրունու Պատմության վերջում,
որպէս նրա շարունակությունը, սկզբից թերի:
Տես՝ ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ:

4. ԱՆԱՆՈՒՆ ԴԻՑԱՐԱՆ*: Հունական
մատենագրության հայտնի «Անանուն»-ներից
մեկը, որ մի շարք դիցարանական առաս-
պելների մեկնության հեղինակ է: Նրա աշ-
խատությունը, որ «Յաղագս անհաւատա-
լեաց» («Περὶ ἀπίστων») անունն է կրում,
Գեորգ Պալատեցու կողմից 1787 թվին հու-
նարենից թարգմանվել է հայերեն՝ Հերակլի-

* ՕՃԱՆՉԱԿ ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ. Willi. Christ,
«Geschichte der griechischen Litteratur bis auf die
Zeit Justinians», 3. Aufl., München, 1898, S. 778.
—Rud. Nicolai, «Geschichte der griechischen Li-
teratur», I Hälfte, Magdeburg, 1865, S. 422—423.

տասի և Պալեփատոսի նմանօրինակ երկերի հետ միասին: Սույն թարգմանությունը մնում է անտիպ: Զննագրում բնագիրը հատուկ խորագիր չունի, այլ կրում է պարզապես «Աճաճուց ճեղհեցեալից» խորագիրը:

Աճաճուց ճեղհեցեալից, Երևանի Պետ. Մատ. ձեռ. № 1676, էջ 53ա—57բ:

Սույն վերնագրից հետո բնագիրը բաժանվում է հետևյալ զլուխների.

1. Յազգո առջնագույնից մարդկան: 2. Եօթն զարմանալիքն: 3. Յազգո սպեղին մարթայն: 4. Յազգո Իլիանի: 5. Յազգո Աբելոօսի: 6. Յազգո Գերգե՛րօսի: 7. Յազգո Բաթթո՛յի: 8. Ռազգո Նարգիսօսի: 9. Յազգո Ալեքսանարօսի:
10. Յազգո Բանայ: 11. Յազգո Էնթիմի՛ոնի: 12. Յազգո Ժաթթի: 13. Յազգո Իզարօսի: 14. Յազգո Իսի և Ա՛րզօսի: 15. Յազգո Տիօնի՛օսի: 16. Յազգո Գու՛նօսի: 17. Յազգո Սալիզիզօսի:

Վերջում նշվում է՝ «Վախճան քանիցն Անանուն հեղինակին»:

Հունարեն բնագիրը հրատարակվել է մի քանի անգամներ՝ Հերակլիտոսի աշխատության հետ միասին (տես ՀՅՐԱԿՎԻՏՈՍ):

5. ԱՆԱՆՈՒՆ ԶՐՈՒՑԱԳԻՐ: Մանուկ Աբեղյանը պայմանականորեն այսպես է անվանել Շապուհ Բագրատունուն վերագրված պատմության («Պատմութիւն Շապուհ Բագրատունուոյ», էջմիածին, 1921) անծանոթ հեղինակին: Տես՝ ՇԱՊՈՒՀ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ:
6. ԱՆԱՆՈՒՆ ԹԻՃԼԻՍՅՑԻ, ՊԱՏՄԻՉ: Գրել է՝ «Համառօտ պատմութիւն անճնարիճ Կոտորածովք աւերման Տիխիս քաղաքի, զոր արար յելուզակօրեճ պատերազմաւ Աղա Մեհեմետ խան, փախուցեալ զձերուճի արքայն Վրաց զՀերակլ երկրորդ, յամի տեսաճ 1795»: Բնագրի վերջում հիշատակադրված է՝ «Գրեցաւ ի Տիխիս Փալտպկտրանի ի մագապուր զԵրծնլոյ՛ յամի տեսան 1796 յունուարի, ընդարձակութեամբ բառից յաճախութեան: Երբմէ յապաւելոյ իմն խիստ առ խիստ տերևոց բազմակոյտ բառից՛ զպատու պատմութեան ի լոյս արևու հոլանեալ՛ վերծանողացն մտաց հասու զործել կամեցեալ՛ համառօտեցաւ ի Արեմուտս ի Կոստանդնուպոլիս 1796 յունիսիս: Ըստ այս հիշատակա-

գրութեան՝ մեզ հասել է միայն թիֆլիսեցի Անանուն պատմչի երկի միայն համառոտված կամ վերախմբագրված օրինակը, որի ձևագիրն այժմ գտնվում է Թբիլիսիում, Պետ. Թանգարանի հայ. ձեռ. № 20, Տես Լ. Մե- լիքսեթ-Բեկի հոդվածը՝ «Անանուն հայ պատմչի նորագույն երկը Թբիլիսիի 1795 թ. ավերման մասին», Տեղեկագիր ՍՍՈՄ Գիտությունների Ազգայնախորհրդի Հայկական Ֆիլիալի, 1941, № 3—4 (8—9), էջ 48—53. 10 որտեղ հրատարակված է նաև հիշյալ բնագիրն ամբողջությամբ, էջ 49—52:

7. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ: Տես՝ ԱՆԱՆՈՒՆ ԾԻՐԱԿԱՑԻ, «Ժամանակական կանոն»:

8. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԳ գ.): Սկսվում է հայոց թվականության հաստատումից՝ 2 դարի կեսին և հասնում է մինչև 1236 թվականը՝ Անիի գրավումը մոնղոլների կողմից: Վերջին մասերում պատմական ուշագրավ տեղեկություններ է պարունակում: Պահվել է Երևանի Պետ. Մատ. № 1973 ձեռագրում՝ Հովհաննես Սարկավազի տոմարագիտական աշխատության մի հատվածին առընթեր, «Յոճաճուց քահա- նայի» ընդհանուր խորագրի տակ (էջ 195բ—199բ), և այդպես էլ տպագրվել է ամբողջությամբ, հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրություններ», հատ. Ա, էջ 17—31, հրատարակչի առաջարկով ու ծանոթագրու- թյուններով:

9. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ կամ ԱՆԱՆՈՒՆ ՍԵՐԱՍԱՅՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԳ—ԺԴ գ.): Ժամանակագրական անանուն աշխատություն, որը երկու թերթ օրինակներով պահվել է Երևանի Պետ. Մատ. № 2174 և № 3423 ձեռագրերում: Ժամանակագրությունն սկսվում է Ադամից և մինչև ԺԳ դարի 60-ական թվականները ուրիշ բան չի ներկայացնում, եթե ոչ, ինչպես Վ. Ա. Հակոբյանն է ասում, Վարդան Արևելցու «Պատմութիւն արեղերական»-ի համառոտությունը, լրացված՝ Մատթեոս Ուռնայեցու, Կիրակոս Գանձակեցու և ուրիշ հեղինակների առանձին վկայություններով, իսկ «ԺԳ դարի 60-ական թվերի վերջից սկսած դառնում է բավական հետաքրքիր և գիտական

մեծ արժեք է ստանում... հենց այդ մասն էլ հեղինակի ժամանակին է վերաբերում: Այժմյան դիճակում բնագիրն ընդհատվում է 1300 թվականի դեպքերով: Բնագրի խորագիրն է՝ «Ժամանակագիր եւ» (սկ. «Յորժամ յանցաւոր եղև Ադամ պատուիրանացն աստուծոյ, Քան զնա աստուած ի գրախտն փափկութեան»): Մենք ընդունելի ենք համարում Վ. Ա. Հակոբյանի այն կարծիքը, թե ժամանակագրության հեղինակը պետք է եղած լինի Սեբաստիայից կամ նրա շրջակայքից:

Ա սպ. — Անանուն ժամանակագրություն: Առաջարեցով և ժանոթագրություններով կազմեցին՝ Հովհ. Մանվելյան և Հար. Արարհամյան: Երևան, 1940: (= Հայկ. ՍՍԻ Ժողկոմսովետին կից Զեռագրերի Ուսումնասիրության Ինստիտուտ: Մատենագրերի սերիա, № 1):

36 էջ (19.5x14 սմ.):

Բ սպ. — Անանուն Սեբասացու տարեգրություն (ԺԳ դար), տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրություններ», հտ. Բ, էջ 118—172:

Հրատարակչի առաջաբանով և ծանոթագրություններով: Սույն հրատարակության մեջ, համեմատության համար, բնագրին զուգահեռ տպագրված են ժամանակագրական ուրիշ երկու բնագրեր ևս Երևանի Պետ. Մատ. № 6617 և № 2151 ձեռագրերից, որից հետո, որպես շարունակություն, կցված է № 2151 ձեռագրում գտնվող՝ մի ուրիշ անծանոթ հեղինակի ժամանակագրությունը, որ բովանդակում է 1437—1477 թթ. դեպքերը, այսպիսի խորագրով՝ «№ 2151 տարբերակի շարունակությունը», էջ 152—153:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հակոբյան Վ. Ա. — «Անանուն ժամանակագրության աղբյուրների մասին կամ Վարդան Արևելցու Պատմութիւն տիեզերականի համառոտ խմբագրությունը», Տեղեկագիր ՀՍՍԻ Գիտությունների Ակադեմիայի, հաս. գիտ., 1949, № 7, էջ 61—62:

10. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԴ դ.). Գտնվում է Երևանի Պետ. Մատ. № 3984 ձեռագրում (էջ 78ա—78բ) և ընդգրկում է

կում է 885—1309 թթ. դեպքերը (սկ. «Ի քվին ՅԼԴ զԱշոտ Բագրատունի քսպաւոր օծին»): Տպագրվել է հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 383—386, հրատարակչի առաջաբանով ու ծանոթագրություններով:

11. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԴ դ.). Կրում է «Երանայայլ պատմութիւն խաչերոյ Տանկաց խորագիրը և ընդգրկում է հիշատակություններ 1315—1345 թթ. դեպքերի մասին (սկ. «Ի քվին ԶԿԴ ի մայիսին կին Շամին Ռեծեյն և էաա զՄէլիդին»): Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. № 2037 (էջ 146բ) և № 7841 (էջ 308բ) ձեռագրերից, տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 109—112, հրատարակչի առաջաբանով ու ծանոթագրություններով:

12. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԵ դ.). Կրում է «Քուսեանք առ Ռաստրակ մինչև առ մեզ» խորագիրը (սկ. «Աղամայ մինչև ի շրիեղեյն՝ ամբ ՍՄԻԲ [2242]»): Գտնվում է Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերում՝ № 7040 (էջ 287ա—290ա), № 8509 (էջ 121ա—123ա) և № 1127 (էջ 40ա—44բ): Ժամանակագրությունն սկսվում է Ադամից և ամենալրիվ օրինակում հասնում է մինչև 1418 թվականը: Տպագրվել է հիշյալ օրինակների համեմատությամբ, հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրություններ», հտ. Ա, էջ 147—149. և հրատարակչի առաջաբանն ու ծանոթագրությունները՝ էջ 141 և 152—153:

13. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԶ դ.). Կրում է «Երուրս գայն Քաթարաց» խորագիրը (սկ. «Ի ՈՂ [=1231] քուսեանցին Հայոց առաջին Քաթարն երեկ այլ խարնէն Բուղարայ, էաա զայլտարնս Հայոց» կամ «Ի ՈՂ քուսին Առոն Քաթարն երեկ այլտարնս Հայոց»): Գտնվում է Երևանի Պետ. Մատ. հետևյալ ձեռագրերում՝ № 1737 (էջ 185ա—186բ) և № 3695 (էջ 6բ—9բ): Ողբնայան ժամանակագրությունը բովանդակելիս է եղել միայն 1221—1549 թթ. դեպքերը, բայց հետագայում երկու ձեռագրերում տարբեր հավելումներ է կրել տարբեր գրիչների կողմից, ընդգրկելով նաև

ժէ դարի ղեպքերը: Տպագրվել է հիշյալ օրինակների համեմատութեամբ, հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 142—147. և հրատարակչի առաջարանն ու ժանոթագրութիւնները՝ էջ 140 և 150—152:

14. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժՁ դ.): Կրում է Նեախ վասն Խօնքարի և շահին, և գեհի՝ պղծին Ստեֆանի Օլախաց թագաւորի և շարեաց նորին որ առ ազգս Հայոց» խորագիրը (սկ. ժի Բվիս Հայոց ԶՂԵ [= 1646] փախուցեալ շահի որդին երրօրէն իւրմէ և գեաց ի Ստամպոլ») և ընդգրկում է 1646—1656 թթ. ղեպքերը, ընդ որում, սկսելով թուրք-պարսկական կռիւների հիշատակութեամբ, մանրամասնորեն կանգ է առնում 1651 թ. Մուլլա-վիայում Ստեփան Ռաշեսի կողմից հայերի դեմ հարուցված հալածանքների նկարագրութեան վրա: Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. երկու ձեռագիր օրինակների համեմատութեամբ՝ № 7584-ի (էջ 684—686) և № 3079-ի (էջ 254ա), տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 131—139, հրատարակչի առաջարանով ու ժանոթագրութիւններով:

15. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԷ դ.): Պատմական ընդարձակ հիշատակարան, որը գտնվում է Երևանի Պետ. Մատ. № 519 ձեռագրում (էջ 74ա—79ա): Վերաբերում է 1604—1608 թթ. ղեպքերին՝ թուրք-պարսկական կռիւներին, հայկական զավառների բնակչութեան տեղահանմանը Շահ-Աբաս Ա-ի կողմից ղեպի Սպահան, երկրում պարսիկների և թուրք ջալալիների գործած վայրագութիւններին, սովին, ևն: Հիշատակարանը ականատեսի ձեռքով գրված արժեքավոր աղբյուր է սովյալ ժամանակաշրջանի պատմութեան համար: Տպագրվել է հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 178—188, հրատարակչի առաջարանով ու ժանոթագրութիւններով:

16. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԸ դ.): Բովանդակում է 1658—1648 թթ. ղեպքերը, որոնք, սակայն, ժամանակագրական կարգով չեն դասավորված, այնպես որ

աշխատութեան առաջին տեղեկութիւնները վերաբերում են 1608 թվականին, իսկ վերջինները՝ 1601 թվականին: Սկ. ժի Բուին Հայոց ՌՄԵ (= 1606) ամիս խիստ սով եղև ի քաղաքն Վան և յԱրզրում, այնչափ միմչ զի կապիմ կորեկ գանեկան մի եղև: Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. № 4723 ձեռագրից, տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Բ, էջ 281—286, հրատարակչի առաջարանով ու ժանոթագրութիւններով:

17. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԹ դ.): Համառոտ ընադիր, որտեղ, առանց ժամանակագրական կարգի, ընդգրկված են 611—1656 թթ. պատմական ղեպքեր: Գրտնրվում է Երևանի Պետ. Մատ. № 3327 ձեռագրում (էջ 1ա): Տպագրվել է հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 201—204, հրատարակչի առաջարանով ու ժանոթագրութիւններով:

18. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԿ դ.): Կրում է «Կարգ թագաւորաց ազգիս Հայոց և Պարսից թէ ուստի՝ սերեալ թագաւորեցին» խորագիրը (սկ. «Աղեքսանգր թագաւոր Մաղեգոնացի, յաղթեալ գ՛Թարեմ արքայն Պարսից, և փոխեաց առ իճքն զթագաւորութիւնն Պարսից»): Գտնվում է Երևանի Պետ. Մատ. № 1495 և № 6354 գրչագրերում: Ժամանակագրութիւնն սկսվելով Պարսկաստանի նվաճումով Ալեքսանդր Մակեդոնացու կողմից, հասնում է մինչև Ռուբինյանների իշխանութեան վերջը Կիլիկիայում (1337 թ.): Սակայն անունուն հեղինակն այս ժամանակագրութիւնը կազմել է 1679 թ.: Ինչպես Վ. Ա. Հակոբյանն է ասում՝ «ըստ երևույթին ժամանակագրութեան հեղինակն իր ձեռքի տակ ունեցել է այնպիսի աղբյուրներ, որոնց հիման վրա կատարված հաշվառումները (եթե ոչ ընդօրինակութեանը) տարբերվում են մեզ հայտնի հեղինակների վկայութիւններից»: Տպագրվել է հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 252—261, հրատարակչի առաջարանով ու ժանոթագրութիւններով:

19. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԼ—ժԼ՞ դդ.): Բաղկացած է երկու մաս-

սերից՝ ուրույն վերնագրերով. ա) «Յաղագս քաղաքացն Հայոց՝ սկսեալ ի սրբոյն Տրդատայ մինչև ի քառեալ քաղաքորութեանցն Արշակունեաց», բ) «Յաղագս քաղաքացն Հռոմայ և Յունաց՝ ի Մծէն Կոստանգիաճոսէ մինչև ի Փոքր Քեղոս»։ Հրատարակվել է Երևանի Պետ. Մատ. № 3070 ձեռագրից (էջ 251բ—257բ), տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Բ, էջ 468—478, հրատարակչի առաջաբանով ու ծանոթագրութիւններով։

20. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԸ դ.)։ Կրում է «Մասնաւոր ժամանակագրութիւն և զաւագանագիրք» են խորագիրը։ Աղյուսակաձև ժամանակագրութիւն է, որն, սկսվելով 1453 թ. 4. Պոլսի անկման հիշատակութամբ (սկ. «ԶԿոստանգիեուպոլիս եառ սուլքան Մահմադ և անգ հաստաեաց զարուսն քաղաքորութեանց»), ընդգրկում է մինչև 1734 թվականը տեղի ունեցած կարևոր դեպքերը։ Տպագրվել է Երևանի Պետ. Մատենադարանի ձեռագրերից, հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 317—332։

21. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (դարը)։ Այս անունն է տվել Վ. Ա. Հակոբյանը ժամանակագրական այն մի շարք մանր բնագրերի, որոնք գտնվում են Երևանի Պետ. Մատ. № 1737 ձեռագրում (էջ 65բ—69բ)։ Այս շարքի առանձին բնագրերի վերնագրերն են՝ ա) «Յաղագս քաղաքացն Պարսից», բ) «Նախնիք Հյւսից», գ) «Քաղաքք Յուդայ», զ) «Քաղաքք Իսրայէլի», հ) «Այլ ազգի քաղաքք», զ) «Կայսերք Հռոմոնց» և ամենից հետո՝ է) Հայաստանի պատմութեան ժամանակագրութիւն, որն առանց հատուկ վերնագրի սկ. հետևյալ բաներով. «Իսկ Հայկազունք սկիզբն առեալ Յաբեթէ տիրեցին աշխարհիս կարգ ըստ կարգի քաղաքեալ մինչև Արշակունիքն ամս երեք հազար վարսուն և մէկ» (էջ 67բ—69բ)։ Հայաստանի ժամանակագրութեան այս բնագիրն ունի երեք զուգահեռ՝ ա) «Քաղաքք Արշակունեաց», «Քաղաքք վերջինք Բագրատունիք» և «Արդ և զպատահմունս ժամանակացն ասացից և զար-

քանութիւն քաղաքին»։ Վ. Ա. Հակոբյանը «Անանուն ժամանակագրութիւն» անվան տակ, առաջաբանով ու ծանոթագրութիւններով, հրատարակել է այս վերջին կրկու զուգահեռ միայն, դրանք համարելով առավել հետաքրքրական՝ որպէս պատմական սկզբնագրութիւն, տես՝ «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Բ, էջ 499—504։

22. ԱՆԱՆՈՒՆ ԼԻՎՈՒՆԱՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԷ դ.)։ Տես՝ ԶԱՔԱՐԻԱ ՍԻՍԻԱՆՑԻ, «Համառոտ վիպասանութիւն յազգս ժամանակաց կենցաղոյս»։

23. ԱՆԱՆՈՒՆ ԿԱՍԱՒՈՐ ԱՂՔԱՏ։ Տես՝ ԱԼԵՔՍԻԱՆՈՍ (Վարդի § 1 խմբագրութիւնը)։

24. ԱՆԱՆՈՒՆ ՀԱՅ ՔԱՂԱԿԵՂՈՆԱԿԱՆ։ Հեղինակն է ըլուդանդական գրականութեան մեջ «Narratio de rebus Armeniae» (կամ «Tractatus de rebus Armeniae», «Liber de rebus Armeniae») անունով հայտնի հիշատակարանի, որը տալիս է Հայ Օկեղեցու հարաբերութիւնների պատմութիւնը Բյուզանդական Օկեղեցու հետ և ձգտում է ներկայացրել նրա դավանական վիճակը Գրիգոր Լուսավորչից մինչև է դարի վերջերը՝ այդ դիտելով քաղկեդոնականութեան դիրքերից։ Բնագրի հունարեն վերնագիրն է՝ «Διήγησις ἀπὸ τῶν ἡμερῶν τοῦ ἀγίου Γρηγορίου μέχρι τοῦ νῦν, περὶ τῶν ἐν αὐτῇ γειτομένων διαδόχων αὐτοῦ ἤτοι τοῦ θρόνου αὐτοῦ καὶ περὶ τῶν βασιλευσάντων ἐν ταῖς ἡμέραις αὐτῶν ἐν τῇ Ῥωμανίᾳ καὶ Πέρσιαι, καὶ περὶ τοῦ γινώσκαι τὸ ἔθνος τίνος ἐχράτησαν τὴν ὀρθὴν πίστιν ἢ παράλαβον ἀπὸ τοῦ ἀγίου Γρηγορίου καὶ ἀπὸ τῆς συνόδου τῆς ἐν Νικαίᾳ, καὶ ἐν ποταῖς ἡμέραις ἐπλανήθησαν καὶ ὑπὸ τίνος, καὶ πῶς ἐπολιτεύοντο, καὶ τίνες ἰσχυμάτα ἐγένοντο περὶ τῆς πίστεως, καὶ πῶς διέμειναν ἐν τῇ πλανῇ ἕως τῆς ἡμέρας ταύτης» («Պատմութիւն սուրբ Գրիգորի օրերից մինչև այժմ՝ նրա յաջորդների ու վերջիններիս ժամանակակից հոռմեական և պարսկական թագավորների մասին. գլխունալու համար այն, թե մինչև ե՞րբ նրանք (հաջորդները) պահպանեցին սուրբ Գրիգորից և Նիկիայի ժողովից ստացած ուղիղ հավատը, թե ե՞րբ և ո՞ւմ կողմից մոլորվեցին նրանք և թե ի՞նչ ընթացք ունեցան, և այն մասին

թե ինչպիսի՝ հարցեր ծագեցին հալատի շուրջ և թե ինչպես նրանց մնացին մուրուսթյան մեջ մինչև այսօր)։ Բանասիրության մեջ այս բնագիրը կոչվում է նաև „Diegesis“, բոտ նրա հունարեն վերնագրի առաջին բառիս Բնագիրը նախ հրատարակել է F. Combells-ը, լատիներեն թարգմանության հետ միասին, իր „Historia haeresis monothellitarum“ հատորում, Parisiis, 1648, p. 271—288, որը և հանդիսանում է նրա „Graecolat. patrum bibliothecae novum Auctarium“-ի Բ հատորը։ Բնագրի երկրորդ տպագրությունը կատարել է A. Gallandius-ը, „Bibliotheca veterum patrum“, t. XIV, Venetiis, 1781, p. 269—274. Այնուհետև հաջորդաբար նույնի երկու հրատարակություններ է տվել նաև J.-P. Migne-ն, իր „Patrologiae cursus completus“ ժողովածուի հունական շարքում, t. CXXVII, Parisiis, 1864, p. 885—900; t. CXXXII, Parisiis, 1864, p. 1237—1253. Սույն չորս հրատարակություններն արտատպություն էին մեկը մյուսից՝ հիմք ունենալով միայն մի ձեռագիր օրինակ (Cod. Paris. Gr. 900)։ Վերջին անգամ բելգիացի հայագետ Փ. Գարիտը և բնագրի օրինակների հիման վրա (Paris. Gr. 900; Vat. Gr. 1455; Vat. Gr. 1101) մեզ տվեց բնագրի քննական հրատարակությունը՝ G. Garrile, „La Narratio de rebus Armeniae. Edition critique et commentaire“ (=Corpus scriptorum christianorum orientallium. Vol. 132. Subsidia t. 4), Louvain, Imprimerie orientalliste L. Durbecq, 1952¹. Փ. Գարիտն իր այս հրատարակությամբ պարզել է նաև բնագրի հետ կապված մի շարք հարցեր, ընդ որում նախ հունարեն այս բնագրում գտնվող բացահայտ հայերենարանությունները և հայերենի հետքեր մատնող լեզվական երևույթները, որոնք մեծ մասամբ սույն վերջին հրատարակությամբ նոր են երևան գալիս, կասկած չեն թողնում, որ դա հայերենից է թարգմանվել, ուրեմն և նրա անանուն հեղինակը հայ էր,

քաղկեդոնական հայ, մինչ նախկինում այդ մասին բանասիրության մեջ տարածված էին սխալ կարծիքներ. ոմանք նրա հեղինակությունը վերագրում էին բյուզանդական հեղինակներ Փիլիպպոս Մենակյացին կամ Դեմետրիոս Կյուզիկեցուն և կամ ոմն ահալոց կաթողիկոս կոչված Իսահակի, որը բյուզանդական գրականության մեջ հայտնի է որպես հեղինակ հակահայ գրվածքների։ Ըստ Փ. Գարիտի՝ „Narratio“-ի հորինման ժամանակը դարի սկիզբն է և բնագրական տեսակետից նա գալիս է հայերեն մի ընդհանուր աղբյուրից, որից օգտվել են նաև Փոստիոսն իր առ Ջաջարիա կաթողիկոս թղթում² և վրաց կաթողիկոս Արսեն Սափարացին իր «Վրաց և հայոց բաժանման մասին» ճառում³։ Գարիտի ուսումնասիրության մեջ տրված է նաև տեսությունը այն բոլոր կարծիքների, որոնք հայտնվել են նախկինում „Narratio“-ի մասին գիտնականների կողմից (հայերից՝ Ն. Աղոնց, Ն. Ակինյան, Դ. Ալիշան, Կ. Տեր-Մկրտչյան, Կ. Տեր-Սահակյան, Բ. Սարգիսյան, Լ. Մելիքսեթ-Քեկ. օտարներից՝ J. Hergenrother, M. Veysstere de la Croze, M. le Quien, J. Saint-Martin, A. von Gutschmid, H. Gelzer, K. Krumbacher, H. Hübschmann, P. Peeters, S. Weber, H. Jordan, J. Laurent, L. Petit, J. Markwart, M. Grondijs, F. Tournebize, E. Honigsmann, և ուրիշներ)։ Ի դեպ՝ նշելի է և հետևյալ տեղեկությունը. G. B. Teubner-ը 1895 թ. վերջերում հաղորդում էր, որ շուտով սկսելու է Հայացիքում հրատարակել „Scriptores sacri et profani“ անունով մատենաշարը, որի VI պրակը պիտի լիներ՝ „Anonymi Narratio de rebus Armentorum a S. Gregorii Illuminatoris temporibus ad nostram usque aetatem gestis recensuit Oscarus Streicher

¹ Վերջին Փալատյ գաղտնագրի առ Ջաջարիայ կաթողիկոս Հայոց Մեծաց, Կեսեյալ ժողովածուի մեջ. *Πραγματογνωμὴ Παλαιστινικῆς Σδορικῆς*. C.-Петербург, вып. XXXI, 1892, стр. 179—186.

² Այս ճառի հայերեն աղբյուրաբար թարգմանությունը տվել է Լ. Մելիքսեթ-Քեկը՝ ըստ վրացերեն երեք ձեռագիր օրինակների, տես նրա «Վրաց աղբյուրները Հայաստանի և Հայերի մասին», Կ. Ա. Երևան, 1896, էջ 36—67:

¹ Այս հրատարակության մասին գրաբնագրական լուր Գ. Համելանը, *Բազմավեպ*, 1952, էջ 180—189.

Altenburgensis¹, սակայն այդ հաստորը լույս չի տեսել: Մարկվարտը ևս պատրաստել էր „Narratio“-ի մի քննական հրատարակութիւն, որը նույնպէս մնացել է անտիպ²:

25. ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿԼԻՉ ՔԵՐԱԿԱՆԻ: Տես՝ ԱՆԱՆՈՒՆ ՔԵՐԱԿԱՆ:

26. ԱՆԱՆՈՒՆ ՉԱՓԱԴԷՏ: Հեղինակ ժամանակի և երկարութիւն չափերին վերաբերող մի անխորագիր փոքրիկ բնագրի, որի տառջին բառերն են՝ «Տարին երկուսուսան ամիս և և հինգ օր, յիսուն և երկու շաբաթ և մի օր»: Այս բնագիրը Փարիզի Bibl. Nat. Anc. Fonds Arm. № 114 ձեռագրից (էջ 101ա—101բ) հանելով հրատարակել է J. Saint-Martin-ը, „Mémoires historiques et géographiques sur l'Arménie“, t. II, Paris, 1819, p. 379. Հետագայում բնագիրն այստեղից արտատպել է Բ. Պատկանյանը՝ իր «Անանիայի Շիրակունւոյ Տեսարանք բանից» հրատարակութիւն մեջ, Պետերբուրգ, 1877, էջ 32. և մի ցանի սրբագրութիւններով նաև Հ. Մանանդյանը, իր «Գշտները և շափերը հնագույն հայ աղբյուրներում» աշխատութիւն մեջ, Երևան, 1930, որտեղ և ուսումնասիրութիւն է տուել բնագրի չափական տվյալները, էջ 111—120: Ա. Գ. Արրահամյանը հաստատում է, որ այս բնագիրը ոչ այլ ինչ է, բայց եթի որոշ փոփոխութիւնների ենթարկված մի հատված՝ «Պատճէն տումարի ըստ հարբէն թուականի» անունը կրող տումարական բնագրից, որի հեղինակութիւնն ինքը անսեղիորհն Անանիա Շիրակացուն է վերագրում. տես՝ Ա. Գ. Արրահամյան, «Անանիա Շիրակացու մատենագրութիւնը», Երևան, 1944, էջ 93—94 և 115:

27. ԱՆԱՆՈՒՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ:

Այժմ կորած երկ, Հիշատակվում է Ստեփանոս Թոռջյանի բառարանում: Ղ. Ալիշանը Ստեփանոս Թոռջյանին նվիրված մի հոդվածում ասում է, որ նա բառերի մոտ. 400 վկայութիւններ է բերել իր Բառարանում հիշյալ Անանուն պատմութիւնից, և այդ վկայութիւնների հիման վրա հետևյալ կարծիքն

¹ Հմմտ. Byzantinishe Zeitschrift, Bd. IV, 1895, S. 645.

² Հմմտ. R. Helm (հրատ.), Hippolytus Werke. Bd. IV, Leipzig, 1929, S. 436.

է հայտնում երկի մասին. «Պատմութիւնն ճառէ զՀաբակոսեաց և զԱրշակունեաց, այլ և զկրսեբագոյն հարստութեանց ազգիս մերոյ. և թուի ինձ այս այն Պատմութիւն Հայոց, զորմէ գտի նշանակեալ ուրեմն, թէ ԿՔ կամ 'ի՛լ պատմիչը են լեալ Հայոց, յորոց հաւաքեալ ուրումն գրեալ է ութ դիրս Պատմութեան Հայոց, որ դուռնին ասէ՝ ի Սիս և ի Սաղմոսապոնս. ընթեռնումք և ի դիւանս էջմիածնի պնուն Պատմութիւն Հայոց, դուցէ թէ և ի Հնս անկեալ էր օրինակ մի մեծի և յոգնափափաքելի պատմութեանս, և անտի եղիտ Ստեփանոս առատ նիւթ Բառարանին»:

28. ԱՆԱՆՈՒՆ ՍԵՐԱՍՏԱՑՈՒ ԺԱՄԱՆԱ-

ԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺՁ գ.): Կրում է այսպիսի խորագիր. «Եւ Հոռմաց քաղաքաց կարգն այս է. զոր Ոսմանցիք վերակոչեն ճոցա անուն: Այս և պորտե պոյստ ազգ ճոցա մինչև ի մեզ, ի մերում ժամանակիս» (սկ. 10 «Առաջինն Ոսման անուն մեկ շիճակն ճողագործ Յամիկմ, քոլեալ զճողագործութիւնն, ժամանակ մի ճարամի եղև»): Գտնվում է Երևանի Պետ. Մատ. № 3425 ձեռագրում (էջ 101ա—111ա) և ընդգրկում է 1884—1896 թթ. ժամանակաշրջանը, այսինքն՝ սուլթան Օսման Ա-ից մինչև սուլթան Մահմեդ Գ, Նրա անձանթի հեղինակը հավանաբար Սեբաստիայի բնակիչ է: Ինչպես նկատում է Վ. Ա. Հակոբյանը, այս ժամանակագրութիւնն ինքնուրույն է ԺՁ դարին վերաբերող մասերում, ըստ որում նրա հեղինակն ափսոսի 1811 թվականից սկսած իր տեղեկութիւնները պետք է գրի առած լինի՝ ուրիշներից լսածի համաձայն, իսկ վերջին շրջանի դեպքերը գրի է տուել արդեն որպես ականատեսու ժամանակագրութիւնը տպագրվել է հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 165—177, հրատարակչի առաջաբանով և ծանոթագրութեաններով:

29. ԱՆԱՆՈՒՆ ՍԵՐԱՍՏԱՑՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ: Տես՝ ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (§ 9):

¹ Բազմավեկ, 1852, էջ 92:

30. ԱՆԱՆՈՒՆ ՎԱՆՆՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԷ—ԺԸ դդ.): Գտնվում է Երևանի Պետ. Մատ. № 4818 ձեռագրում (էջ 99ա): Բովանդակում է 10 տարվա անցքեր՝ 1692—1701 թթ., ժամանակագրական խառն կարգով (ս.՝. «Ի բուսականիս Ռժե՛ր հոկտեմբեր ամսոյ Ին օրէն մինչ ի նոյեմբերի կեսն ազևոր աստղ մի երևեցաւ»): Անանուն հեղինակը, որին Վ. Ա. Հակոբյանը վանեցի է համարում, ժամանակակից է իր գրանցած դեպքերին: Ժամանակագրութիւնը սպաղըրվել է հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 281—287, հրատարակչի առաջարկով ու ծանոթագրութիւններով:

31. ԱՆԱՆՈՒՆ ՎԱՆՆՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԸ դ.) կամ ԱՆՅՔ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ: Ընդգրկում է 1386—1726 թվականներին Վան-Ղասաղուրականում տեղի ունեցած դեպքերը: Սկ. շՊԼԵ (= 1386) Լանկ Քամուրն Էլ ի վերայ վաճոյ: Հրատարակվել է երկու անգամ:

Ա սպ.— Անցք Վասպուրական աշխարհի: Հաւաքումն պատմութեանց, յաղագս պատշաճաւոր գիպուածոցն տանն Վասպուրանկանի, և իւրոյ շքեղայ հղեալ գիւղօրէիցն, որոց պարտ վարկայ կարճարան շարագրութեամբ ծրագրող և ի քարտիզի ղեկուցանել ձեզ յապա եկելոց՝ զեղեալ պատահմունքն որք հաճեցանցան ի մերումս ժամանակի (հրատ. Գ. Աղանյանց), Դիւան Հայոց Պատմութեան, գիրք Ժ, Քիֆլիս, 1912, էջ 103—122:

Բ սպ.— Անանուն Վանեցու ժամանակագրութիւնը (ժԷ—ժԸ դդ.), տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Բ, էջ 410—424:

Հրատարակչի առաջարկով և ծանոթագրութիւններով: Արտատպվել է Նախորդից:

32. ԱՆԱՆՈՒՆ ՎԱՆՆՅՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ժԸ դ.): Բաղկացած է երեք հատվածներից: Նրանցից առաջինը, որ խորագիրը չունի և հայոց պատմութիւնն է վերաբերում (սկ. «Սեներարիմ արքայն Վասպուրանկանի ետ զՎան ի Վասիլ քաղաւորն, և էա զՍուվազ»), շատ համառոտ տվյալներ

ում պարունակում է 1010—1631 թթ. դեպքերը. երկրորդը, որ «Այս ևն փաշայք, որ ի Վան եկին» խորագիրն է կրում (սկ. «Իսքանդար փաշէն: Խոսրով փաշէն: Մահմադ փաշէն: Ջղալ օղլի Սինան փաշէն»), Վանի օսմանյան կուսակալների ցուցակն ու ժամանակագրութիւնն է ժՁ դարի կեսերից մինչև ժԷ դարի 80—ական թվականները. իսկ երրորդ բնագիրը, որ նույնպես անխորագիր է և առավելապես Վան-Ղասաղուրականի դեպքերին է վերաբերում (սկ. «ՌժԳ քիւն՝ այս Օմար փաշայս զՆալբանդ օղլի Նագիր աղայն և զՂաւաքը օղլի Իրաւիմ աղէն ետրի ի բերդ զճղան»), ընդգրկում է 1684—1781 թթ. անցքերը: Այս հատվածները թեև տարբեր հեղինակների գործեր են, բայց երեքն էլ կազմվել են Վանում:

Ա սպ.— Ժամանակագրականք, տես հետևյալ հրատ. մեջ. Գ. Սրվանձախանց, «Մանանայ», Գ. Պոլիս, 1876, էջ 390—398:

Բ սպ.— Անանուն Վանեցու ժամանակագրութիւնը (ժԸ դ.), տես հետևյալ հրատ. մեջ. «Մանր ժամանակագրութիւններ», հտ. Ա, էջ 350—382:

Հրատարակչի առաջարկով ու ծանոթագրութիւններով: Արտատպվել է Նախորդից:

33. ԱՆԱՆՈՒՆ ՔԵՐԱԿԱՆ ԿԱՄ ԱՆԱՆՈՒՆ ՄԵԿՆԻՉ ՔԵՐԱԿԱՆԻ: Դիտեսիսիոս Քրակացու քրականութիւն հալ հնագույն մեկնիչներից մեկը, որին Ն. Աղանյանը միտում է նույնացը նելու Մամբրե Վերժանողի հետ, իսկ Ն. Մանանդյանը՝ Դավթի ու Մովսեսի ընկերակից Պողոսի հետ. սակայն այս կարծիքները ո՛չ մի հիմնավոր կովան չունեն:

Անանուն մեկնիչ քերականին. «Յաղագս քերականութեան: Քերականութիւն է հըմաութիւն...: Ստուգարանութեան գիւտ, որ է լուծումն փաղառութեանց ի կատարեալս...», տես՝ Н. Адоиц, «Дионисий Фракийский и армянские толкователи», Петроград, 1915, стр. 127—156.

Հրատարակվել է Վեներիկի Մխիթ. Մատ. Ա. Գ. 876 և Է. Գ. 306 ձեռագրերի բաղադրութեամբ:

274. Նակ՝ «Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի» (համառոտ խմբագրութիւն), Երուսաղեմ, 1871, էջ 213—218:

5 Ծ. «Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի», Երուսաղեմ, 1867, էջ 80—83:

Ծ. «Մամուլէի քահանայի Անեցւոյ հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 72:

10 7. «Ստեփաննոսի Տարօնեցւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 140:

ԳՐԵԿԵՆՈՒԹՅՈՒՆ

15 ԱլլիՅում Կ.— «Գիւրիոն կաթողիկոս Վրաց», Վիեննա, 1910, էջ 20, 43—44 և 93—94:

Բրիէի Լ. (Bréhier L.)— «Anastase». Կեանքի հրատ. մեջ. «Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastique», t. II, 20 Paris, 1914, p. 1447—1457.

Գարիտ Ժ. (Garitte G.) — «La Narratio de rebus Armeniae», Louvain, 1952, p. 108—115: «Politique antichalcédonienne d'Anastase».

25 Զարբեմալյան Գար.— «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց», Վենետիկ, 1889, էջ 295:

30 Զարանիս Գ. (Charanis P.) — «Church and state in the Later Roman Empire. The religious policy of Anastasius I», Madison, 1939. (=Univ. of Wisconsin Stud. in the Soc. Sciences and Hist., 26).

35 Յեր-Միքայայանց Մով.— «Շնորհանուր եկեղեցական պատմութիւն», հտ. Ա, էջմիածին, 1908, էջ 334—335:

Յեր-Մկրտչյան Կար. (հրատ.) — «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ» ևն, էջմիածին, 1914, էջ LVI և LXVII—XLVIII.

40 Փափազյան Իգն.— «Պատմութիւն եկեղեցական, հաւաքեալ յալմանահաւատ մատենագրաց», Վենետիկ, 1848, էջ 280—281:

Օրմանյան Մաղ.— «Աղգապատում», մասն Ա, Կ. Պոլիս, 1912, § 336:

ԱՆԱՍՏԱՍ (ԱՆԱՍՏՈՍՐԸ) ԿՐԻՍՏՈՍ
(Ἀναστάσιος Ἐβδόμος)

Վիա, ժամանակը մեզ անհայտ: Զեռագրերում պատահում է նրա վարքը, որ հանված է Հարանց վարջերից:

